

Համայնքային

Կիպրոսի Նարեկ Վարժարաններու Ամավերջի Հանդէս

Ուրախութեան եւ թախիծի յուզախառն ապրումներով լեցուն մթնոլորտի մը մէջ կայացաւ Նարեկ վարժարաններու ամավերջի հանդէսը՝ Չորեքշաբթի 20 Յունիս 2012, կ. ե. ժամը 6:30-



ին, Վարժարանի ամփիթատորնին մէջ, հովանաւորութեամբ՝ Կաթ. Փոխ. Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեանի եւ նախագահութեամբ՝ Հայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի: Ներկայ էին Սթրովոլոսի քաղաքապետարանի, Կրթութեան եւ Մշակոյթի նախարարութեան Ներկայացուցիչներ,

Նախակրթարաններու եւ Միջնակարգ վարժարաններու

Պատասխանատուներ, Հոգաբարձութեան, Թեմական եւ Վարչական ժողովներու անդամներ, բարձրաստիճան հիւրեր, ծնողներ եւ գաղութի անդամներ:

Արա Գեորգեանի «Երեւան» երգի հնչիւններուն ներքոյ, Նարեկի շրջանաւարտները՝ ընդամենը 9 հոգի Նախակրթարաններու բաժինէն եւ 2 հոգի Միջնակարգ վարժարանէն, առաջնորդութեամբ Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի, հանդիսաւորութեամբ մուտք գործեցին ամփիթատորն եւ գրաւեցին իրենց տեղերը:



Կիպրոսի, Հայաստանի եւ Նարեկ վարժարանի քայլերգներու երգեցողութեամբ սկիզբ առաւ հանդիսութիւնը:

2011-2012 ուսումնական տարուան տեղեկագիրը ներկայացուց Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեան, ամփոփ անդրադառնալով աշակերտութեան թիւին երեք դպրոցներու մէջ ալ, ուսուցչակազմին, տարեկան հանդիսութիւններուն եւ կրթա-դաստիարակչական ձեռնարկներուն, կարելոր անձնաւորութիւններու

այցելութեանց դպրոց, միջ-դպրոցական գործունէութեանց եւ կարելոր այլ մանկավարժական եւ ուսումնա-կրթական աշխատանքներուն, որոնց բոլորին նպատակն է՝ պատրաստել գիտակից քաղաքացին, որ զինուած ըլլայ համաւերոպական մարդկային բարձր արժէքներով եւ լաւ հայր, որ զիտակից ըլլայ իր ազգային մշակոյթին, պատմութեան եւ կրօնքին:

Հանդիսութեան գեղարուեստական ճոխ յայտագիրը ընդգրկեց՝ խմբային արտասանութիւններ, Նուազ եւ հայկական պար, որոնց բարձրաճաշակ կատարումը



մեծապէս տպաւորեց ներկաները, ստեղծելով հայաբոյր ջերմ մթնոլորտ, տրտմանոյ զգացումներով թաթաւուն...:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումը կատարուեցաւ ձեռամբ Գերշ. Տ. Վարուժան



Հերկելեանի, Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի: Հրաժեշտի սրտագրաւ ուղերձներ կարդացին շրջանաւարտներ Մարի Տերտերեան(հայերէն), Ալէն Կոստանեա(յունարէն)՝ Միջնակարգի բաժինէն եւ Մարիամ Մումճեան (հայերէն)՝ Նախակրթարանի բաժինէն:

Իր Հուսկ Բանքին մէջ, Տնօրէնուհին յատկապէս շեշտեց յաջողութեան հասնելու չորս բանալիները, ըսելով ի մասնաւորի. «Առաջին բանալին, սիրելի

աշակերտներ, գիտակցութիւնն է: Գիտելիքներու կողքին, հարկ է որ լաւ ճանչնաք ձեր անձը:....Ինքնաճանաչումը առաջին քայլն է ինքնաբարելաւման:...Մտածեցէք ձեր ապագայի ձգտումներուն, փափաքներուն մասին եւ գիտակից կերպով ծրագրեցէք ձեր կեանքի ուղղութիւնը: Յաջողութեան երկրորդ բանալին բացառիկ ըլլալն է: Գտէք ձեր զօրաւոր կէտերը եւ ձեր լաւագոյն ջանքը ի գործ դրէք, քանի որ միջակ ըլլալը ոչինչ կը նշանակէ այսօրուան աշխարհին մէջ: Երրորդ բանալին՝ փափաքներ եւ երազներ ունենալն է:



Երազները առիթը կու տան բարձր ձգտումներ փայփայելու, որոնք յաջողութեան կարելոր նախապայմաններէն են: Եւ վերջին, չորրորդ բանալին, վստահելի եւ վճռական ըլլալն է: Վստահ քայլերով յառաջացէք եւ մի՛ յուսահատիք դժուարութեանց առջեւ: Մարդիկ յաճախ երբ դժուարութեան կը հանդիպին, անմիջապէս կը հրաժարին իրենց նպատակներէն, փնտռելով դիւրին ելքը: Քիչերն են որ ամէն գնով կը պայքարին հասնելու համար իրենց

նպատակներուն: Դուք եղէք այդ քիչերէն եւ երբե՛ք ու երբե՛ք մի՛ յուսահատիք, քանի որ յաջողութեան ճանապարհը քարքարոտ ու փշոտ է, բայց հոն հասնողը խորին գոհունակութեան անփոխարինելի վայելքը կ'ունենայ»: Ան իր վերջին խօսքերը եզրափակեց, խրատելով շրջանաւարտներուն, որ դառնան գիտակից քաղաքացիները Կիպրոսի եւ միաժամանակ լաւ հայեր, որոնք իրենց վարք ու բարքով եւ արի գործքով ըլլան արժանի յետնորդները մեր Մեծերուն եւ հարազատօրէն ցոլացնեն մեր պատուական ժողովուրդը եւ մեր փառաւոր մշակոյթը:

Այս հանգրուանին, սրտի ինքնաբուխ եւ հոգեյոյզ խօսքով հանդէս եկաւ նախ՝ Նախակրթարաններու բաժնի քննիչ Տիկ. Էլենի Հաճիմիխայիլ եւ ապա՝ Նարեկի Միջնակարգի ընդհանուր քննիչ Պրն. Միսո Եոսիֆիտիս, երկուքն ալ արտայայտելով իրենց խորին գոհունակութիւնը Նարեկ վարժարաններուն տարած կրթական բարձրորակ գործին եւ հրամցուած ամավերջի տպաւորիչ հանդէսին նկատմամբ: Նմանապէս, կարգ մը օգտակար խրատներ փոխանցեցին մեր շրջանաւարտներուն:



Այնուհետեւ, վարժարանին երգչախումբը, ղեկավարութեամբ Պրն. Ս. Տէմիրճեանի, ապրումով եւ ներդաշնակութեամբ կատարեց «Կռունկ, բարով դառնաս» եւ «Հայաստան» խմբերգները, դաշնակի ընկերակցութեամբ՝ Երեցկին Թ. Հապէշեանի: Ապա Նարեկի աշակերտութիւնը կատարեց ասանդական դարձած Հրաժեշտի երգը, որ այնքան հարազատօրէն կ'արտայայտէ բաժանումի պահուն առթած քաղցրանոյշ յուզումը...:

Տ. Վարուժան Արք. Հերկելեանի Պահպանիչով վերջ գտաւ ամավերջի այս հիասքանչ հանդիսութիւնը:

Ստորեւ կը ներկայացնենք 2011-2012 կրթաշրջանի Շրջանաւարտներու ցանկը.-

Նախակրթարան-Նիկոսիա

Աշճեան Ալիք, Մումճեան Մարիամ, Յակոբեան Մարալ, Յովհաննէսեան Լիւսի, Զարդարեան Կարէն, Մալխասեան ճորճ, Տէմիրճեան Կարօտ:

Նախակրթարան-Լիմասոլ

Եօրդիատու Մայա եւ Գոգինեան Ռուբէն:

Միջնակարգ Վարժարան

Տէրտէրեան Մարի եւ Կոստանեան Ալէն:

Այս ուրախ առիթով, սրտանց կը շնորհաւորենք Նարեկ վարժարաններու բոլոր շրջանաւարտները, կը խնդակցինք իրենց ծնողաց եւ պարագաներուն հետ եւ կը մաղթենք իրենց նորանոր յաջողութիւններ եւ մշտական վերելք իրենց կեանքի յետագայ ճանապարհին:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ



Հետեւեալ բանաստեղծութիւնը գրուած է Կիպրահայ Նարեկ վարժարանէն (նախակրթարանի բաժին) նոր շրջանաւարտ Մարիամ Մումճեանի կողմէ, որ նաեւ իր դասարանին լաւագոյնն էր ուսումնապէս: Զայն կը հրատարակենք իր անմիջական անկեղծութեան եւ զգացումներու հարազատութեան համար, սպասելով որ Մարիամ Մումճեանը կը շարունակէ գրել եւ մեզի հրամցնել նորանոր ստեղծագործութիւններ:



ՀԱՅԱՍՏԱՆ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան իմ Հայաստան
Դուն մեր պապերու երկիր,
Հայաստան իմ Հայաստան,
Դուն մեր ապագայ երկիր:

Քեզ ինչո՞ւ մենք կը սիրենք,
Մեր հողն ես որովհետեւ: Քեզ
ինչո՞ւ մենք կը պաշտենք,
Մեզ հայ կը պահես որովհետեւ:

Դուն իմ հողն ես,
Դուն իմ օղն ես,
Մեր շատ սիրուն
Մեր Հայաստանն ես:

Դուն ամէն առտու, իմ աղօթքն ես,
Դուն ամէն կէսօր, իմ դասն ես,
Դուն ամէն գիշեր, իմ երազն ես,
Դուն ամէն օր, իմ Հայաստանն ես:

ՄԱՐԻԱՄ ՄՈՄՃԵԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Կիպրահայ Գեղանկարիչներու եւ Լուսանկարիչներու

Եւրոմիութեան Կիպրական Նախագահութեան ստանձնումին առիթով, կայացաւ



կիպրահայ գեղանկարիչներու եւ լուսանկարիչներու ցուցահանդէս մը՝ Երկուշաբթի 16 Յուլիս 2012-ին, ժամը 19:30-ին, Քասթէլիոտիսսա միջնադարեան պատմաշունչ կառոյցէն ներս, նախաձեռնութեամբը Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի եւ պաշտօնական բացումովը Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Ն. Վ. Տիար Տիմիթրիս Խրիստոֆիասի:

Արդարեւ, Կիպրոսի բազմամշակոյթ քաղաքակրթութեան մէջ, ուշագրաւ ներդրում ունեցած է կիպրահայ գաղութը՝ 578 թուականէն մինչեւ այսօր...: Ներդրում մը՝ Կիպրոսի պատմական ժառանգութեան, արհեստներու եւ արուեստներու բնագաւառին մէջ, ինչպէս նաեւ անոր տնտեսական կեանքէն ներս, յատկապէս՝ վաճառականութեան: Միւս կողմէ ալ, Կիպրոսը դարձած է որդեգիր հայրենիքը ի մասնաւորի հայութեան այն հատուածին, որ տարագրուելով իր հայրենի բնօրրանէն, ջերմ ասպնջականութիւնը վայելած է Կիպրոսի ժողովուրդին ընդհանրապէս եւ անոր կառավարութեան՝ հանդուրժողական եւ հասկացողական միջավայրի մը մէջ, ուր կրցած է ան պահել-պահպանել իր մայրենի լեզուն, մշակոյթն ու կրօնը, իր ազգային դիմագիծը՝ սերունդէ-սերունդ:



Ցուցահանդէսը գեղեցիկ առիթ մըն էր՝ անգամ մը եւս հաղորդուելու հայ փառահեղ մշակոյթի կիպրահայ արտայայտութիւններուն, պանծացնելու զանոնք յաչս հայ գաղութի անդամներուն, նոր սերունդին եւ օտար հանրութեան:



Լուսանկարները մեզ իրաւամբ փոխադրեցին կարծէք Կիպրոսի անցելայուշ օրերը, ուր կեանքը այնքան հանդարտ ու բնական էր՝ ժամանակակից գիտահնարքներու ստեղծած սրընթաց վազքէն ու հեւքէն հեռու...: Այդ լուսանկարիչներէն ոմանք մեզի հետ չեն այլեւս, ինչպէս՝ Ճորճ Տէր-Բարթող, Հայկազ Մանկոյեան, Էտուարտ Ոսկերիչեան, Կիրակոս Զարդարեան..., բայց անոնց լուսանկարները կը վկայեն անոնց բացառիկ հմտութեան մասին...: Կան եւ նորերը, որոնք կը շարունակեն իրենց նախնեաց գործը՝ Վերոնիքա Մահտեսեան, Սեպուհ Ոսկերիչեան..., ժամանակակից նոր շունչով ու թեքնիքով...:

Գեղանկարները նոյնպէս առինքնող են ու հոգեպարար...: Գեղանկարիչներէն միայն



Կարայիս Պզտիկեանն է որ անդարձ մեկնած է...., սակայն կ'ապրի ան իր գործերուն մէջ: Միւսները՝ Թաթիանա Ֆերահեան, Ճոն Կէվիէրեան, Սեւան Մալիքեան, Ազնիւ Փափազեան, Վարդան եւ Նանոր Թաշճեաններ, Հուրիկ Թորոսեան եւ Սօսէ Էսկիճեան կը ներկայանան գեղանկարչական տարբեր ու այլազան արտայայտութիւններով...: Օրինակ, Թաթիանայի մօտ, սեփական ինքնութեան փնտռտուքը միջոց մըն է յաղթահարելու Կիպրոսի քաղաքական տրամային առթած տագնապները...: Կէվիէրեանի հայրենական կարօտը արտայայտութիւն կը գտնէ իր նկարած հայկական հին եկեղեցիներուն մէջ, որոնց կը միացնէ տարբեր կիպրական բնանկարէն եւ յունական դիցաբանութենէն, աւարտուն ընծայելու համար իր ներշնչումը...: Ազնիւ Փափազեանի կտանները կը յատկանշուին առաւելաբար վերացապաշտ արտայայտչականութեամբ, որոնց գլխաւոր առանցքն ու ներշնչման աղբիւրը կը կազմեն մարդ էակին եւ զայն շրջապատող աշխարհին փոխադարձ կամ երկկողմանի կապը: Նանոր Թաշճեանի մօտ կը գերակշռէ ովկիանոսի թեման: Վարդան Թաշճեանի կտանները կը բնորոշուին գոյներու եւ գիծերու բարդ, այլեւ ներդաշնակ համադրութեամբ: Մինչ Հուրիկ Թորոսեանի գեղանկարները աչքի կը զարնեն իրենց գոյներու, գիծերու եւ մոթիֆներու համաչափ ներդաշնակութեամբ...:



Կիպրոսի Հանրապետութիւնը իսկապէս այլ ունի այն առանձնայատուկ միջավայրը, որ հնարաւորութիւն կ'ընձեռէ հինէն ի վեր իւրաքանչիւր փոքրամասնութեան ինքզինք լիարժէք դրսեւորելու արուեստի եւ այլ բնագաւառներէն ներս... , ինչպէս ընդգծեց Նախագահ Խրիստոֆիաս իր բացման խօսքին մէջ: Հայերս եւ ի մասնաւորի կիպրահայ արուեստագէտները, ի պատիւ իրենց, կրցեր են լաւագոյնս արժեւորել այս բացառիկ հնարաւորութիւնը եւ մեզի պարզեւէլ արուեստի հիասքանչ գործեր...:

Խորենացին դարերու խորքէն պիտի ըսեր՝ «Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար...., սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոց յիշատակի»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Միջազգային Գիտաժողով՝ Արեւելեան Միջերկրականի Վտանգուած Լեզուներու Ներկայ Մարտահրաւերներու Մասին

Մայիս 21-24, 2012, Կիպրոսի Պետական Համալսարանի Բիւզանդական եւ Արդի



Յունարէն Ուսուցմունքի Բաժանմունքի եւ Ֆրանսայի Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Պետական Հաստատութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ միջազգային գիտաժողով մը նուիրուած Արեւելեան Միջերկրականի վտանգուած լեզուներու դիմագրուած լեզուական, մշակութային, եւ ընկերակազմաբանական մարտահրաւերներուն:

Աւելի քան 18 մասնագէտներ՝ Սպանիայէն, Ֆրանսայէն, Կիպրոսէն, Լիբանանէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Պելճիքայէն, եւ Անգլիայէն ներկայացուցին տարբեր փոքրամասնութիւններու լեզուներու իրավիճակը ու անոնց դիմագրուած

մարտահրաւերները: Հայերէն, Արաբերէն, Տումարի, Զախօ, Արամերէն եւ այլ լեզուներու քերականական, ուսուցմունքի, գրականութեան եւ ընկերամշակութային գործոնները կազմեցին գլխաւոր առանցքը գիտաժողովի տարբեր ելոյթներուն: Գիտաժողովին յաջորդեցին գործի երկու յատուկ հանդիպումներ՝ «Արեւմտահայերէն քերականութեան ուսուցմունքի-փոխանցումի ներկայ մարտահրաւերները եւ լուծումներ» եւ «Ինչպէս սորվեցնել Կիպրական Մարոնիթ Արաբերէնը՝ վտանգուած բանաւոր լեզու մը»:

Դոկտ. Արտա Ճեպէճեան՝ Կիպրոսի Նիկոսիոյ Համալսարանի դասախօս, ներկայացուց «Արեւմտահայերէնի փոխանցումի միտումները՝ ծանրաբեռնուած փոփոխական արտալեզուական տուեալներով» մասնագիտական հետազօտութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք անոր խօսքին հակիրճ ամփոփումը:

Մայրենի լեզուն պատկանելիութիւն, իւրայատուկ ինքնութիւն եւ մշակութային համերաշխութիւն կը խորհրդանշէ: Արժէքներ՝ որ ըստ հայ ժողովուրդին, կենսական դեր ունեցան իրենց պատմական ճակատագիրը ձեւաւորելու մէջ: Ահա թէ ինչու հայը կը հաւատայ, թէ այն վարդապետը որ այբուբենը հնարեց, յատուկ գոյութիւն մը տուաւ հայ ժողովուրդին: Անոր Աստուածաշունչի թարգմանութիւնը ճամբայ բացաւ բազմաթիւ ուրիշ թարգմանութիւններու եւ գրական հատորներու, որոնք Տրդ դարուն ծնունդ տուին գիտութեան ոսկեայ ժամանակաշրջանի մը:

Այսօր՝ հայկական գաղութներու սփիւռքեան իրականութիւնը եւ անոնց դիմագրուած լեզուական մարտահրաւերները դարձած են լուրջ եւ էական՝ աշխարհայնացումի այս դարուն: Միեւնոյն ատեն, փոքրամասնութիւններու լեզուական իրաւունքները եւ կրթութիւնը կը ներկայացնեն անյետաձգելի ընկերային հարցեր, որոնք լուծումի կը կարօտին՝ բազմակեզու ընկերութիւններու մշակութային եւ լեզուական համերաշխութեան համար:

Նման մթնոլորտի մը մէջ՝ յարգել տեղական, մեծամասնութեան մշակութային եւ լեզուական գերակշիռ ներկայութիւնը եւ փոքրամասնութեան մը լեզուի պահպանումի եւ փոխանցումի



հանդէպ դրական կեցուածք մշակելու ճիգերը, բաւական զգայուն, բարդ եւ առաջնահերթութիւններու հարցեր կը յարուցանեն: Այս իսկ պատճառներով, յաճախ վտանգուած լեզուներու պահպանումը կը դառնայ մեծապէս դժուար եւ խորթին խնդիր մը:

Արեւմտահայերէնի զետեղումը UNESCO-ի վտանգուած լեզուներու ցանկին վրայ կը նշանակէ, թէ աննախընթաց երեւոյթ մը կայ՝ հայ մանուկներ հայերէն չեն սորվիր, եւ հետեւաբար ինչպէս ուրիշ 2500 լեզուներ, արեւմտահայերէնն ալ մինչեւ 100 տարի կրնայ դադրիլ բանաւոր լեզու ըլլալէ/անհետանալ/մեռնիլ: Այսինքն, ըստ UNESCO-ի չափանիշներուն, լեզուին սերունդէ սերունդ փոխանցումը խաթարուած է: Կատարուածը UNESCO-ի կողմէ արթնութեան կոչ մըն է՝ վերարժեւորելու հայերէնի ընթացքը եւ գործնական քայլեր առնելու՝ պահպանելու եւ փոխանցելու լեզուն ներկայ եւ յաջորդ սերունդներուն՝ խուսափելու համար Աւստրիոյ, Պրագիլի, Արժանթինի, Թուրքիոյ, Հնդկաստանի, Լեհաստանի եւ այլ տեղերու հայկական գաղութներու լեզուական ճակատագիրէն:

Ըստ ընկերալեզուաբանական հետազօտութիւններու, յաճախ արտալեզուական ըմբռնումներու փոփոխութիւնը պատճառ կը դառնայ մայրենի լեզուի մը տկարացման, փոփոխութեան եւ կորուստին: Այս իմաստով, անհրաժեշտ էր սերտել Պէրյուֆաբնակ հայութիւնը՝ ճանչցուած որպէս հայկականութեան ամրոց, հայերու հայերէն լեզուի գործածութիւնը, անոնց կեցուածքները հայերէն լեզուի հանդէպ, եւ ըստայնմ լեզուապահպանման գիտական, արհեստավարժ յանձնարարութիւններ ընել:

Սերտողութիւնը ընդգրկեց 18-80 տարեկան հայեր՝ կեանքի բոլոր մարզերէն, բաղդատական մը կատարելու համար եւ վերլուծելու անցեալի եւ ներկայի հայերէն լեզուի գործածութիւնը եւ կեցուածքները հայ լեզուի, պատմութեան, մշակոյթի, հայրենիքի, Ցեղասպանութեան, ինքնութեան, եկեղեցիի, դպրոցի, ամուսնութեան, եւ այլ նիւթերու հանդէպ: Լեզուական փոփոխութիւնները մեծ են եւ 18-35 տարեկան խումբին կեցուածքները որոշ հարցերու նկատմամբ՝ հարցեր որոնք երեց խումբին մօտ, մասնաւորաբար 55-80 տարեկան խումբին մօտ, «սրբութիւններ» են, 18-35 խումբին մօտ դարձած են «եկրորդական» կամ նոյնիսկ «անկարելորդ»:

Ընկերալեզուաբանականօրէն, նման զարգացումներու առաջքը պէտք է առնուի՝ կասեցնելու անոնց բազմապատկումը եւ «բնական» երեւոյթ դառնալը: Սերտողութիւններու տուեալներու հիման վրայ, ընկերալեզուաբանութիւնը կը հաւատայ, թէ պէտք է պայքարիլ: Այն հայը՝ հազիւ ճողոպրած մարդկութեան ամենէն քստմնելի ոճիբէն՝ ցեմասպանութենէն, վերակազմաւորեց ինքզինք, հաստատեց դպրոցներ, կուսակցութիւններ, եկեղեցիներ եւ մշակութային, բարեսիրական եւ ընկերային կազմակերպութիւններ եւ բժախնդրօրէն պահեց եւ փոխանցեց զանոնք՝ բազմաթիւ գոհողութիւններով, 21րդ դարու ներկայ սերունդին:

Այսօր, իւրաքանչիւր հայ անհատէ, հայ ընտանիքէ եւ հայ կազմակերպութենէ կը պահանջուի նոյնը եւ աւելին՝ ճարտարարուեստի եւ հաղորդակցութեան հրամցուցած անսահման կարելիութիւններու օժանդակութեամբ, ամուր բռնել իր մայրենի լեզուն, մշակոյթը, եկեղեցին, ընտանիքը, դպրոցը, թերթերը, կուսակցութիւնները եւ հայրենիքը: Դոկտ. Ճեյէճեան իր խօսքը աւարտեց մատնանշելով շարք մը գործնական յանձնարարութիւններ որոնց գործադրութիւնը կրնայ երաշխաւորել Հայերէնի պահպանումը ներկայ սերունդին կողմէ եւ փոխանցումը յաջորդ սերունդին:



Խմբագրական

ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Է



Հայաստանէն արտագաղթը այսօր դարձած է համազգային օրակարգի գերխնդիր, անոր ամենէն հրատապ հարցերէն մէկը, գուցէ եւ ամենէն հրատապը, քանզի՝ ի՞նչ կ'արժեն վերջապէս Արցախեան հարցի հայանպաստ լուծումը, ՀՀ պետութեան հզօրացումը..., եթէ Հայաստանը պարպուի հայութենէն, հայաթափուի...եւ ունենանք թշնամիին երագածը՝ Հայաստանը առանց հայութեան....:

Դեռ 2003 թուականին, մեծ բանաստեղծուհի Միլվա Կապուտիկեան ցուատանջ ապրումներով պիտի գրէր.« Ոչ մէկ բան այնքան ցաւալի է, ազգային աղէտի համազօր ներկայ Հայաստանի մէջ, որքան արտագաղթը որ, շատ ափսոս կը շարունակուի, ի հեճուկս հայրենի սնապարծ պետական այրերուն ինքնագովութեան եւ իրենց հեռատեսիլի (Հ-1) եռանդուն քարոզչութեան, թէ, օրէ-օր, Հանրապետութեան տնտեսական աճը մրցանիշ արագութեամբ կը բարձրանայ»:

Ու՞ր փնտռել այս հայակործան, ներքին ցեղասպանութեան համազօր երեւոյթին բացատրութիւնը. ՀՀ ընկերային-տնտեսական վատթար իրավիճակի՞ն մէջ, հոգեբարոյական ճգնաժամի՞ն, երկրին մէջ տեղ գտած փտախտի՞ն կամ կոռուպցիայի՞ն, քրեաօլիկարխիկ համակարգի անօրինականութեան՞ց, կամայականութեան՞ց եւ անարդարութեան՞ց մէջ...: Աշխատատեղերու սակաւութեան, անգործութեան, չնչին աշխատավարձի՞ն ու աղքատութեան,.....թէ՞՞ ասոնց քովն ի վեր, դեռեւս կան աւելի խոր պատճառներ ալ, որոնք կրնան բացատրել, թէ ինչո՞ւ հայր՝ այս բոլորէն որոշապէս եւ հասկնալիօրէն յուսալքուած, ձեռք կ'առնէ պանդխտութեան ցուպը եւ կը դիմէ օտար ափեր, իր յուսալքումին դարմանը փնտռելով հայրենալքումին մէջ:

Մեր մատը դնելով խորունկ եւ արիւնող այս վերքին վրայ, նախ կարելորութեամբ ընդգծելու ենք, թէ՛ մեր հանրապետութենէն ներս, այսօր անընդունելի չափերու հասած է անօրինականութեանց, անարդարութեանց եւ կամայականութեանց ծաւալը, օլիկարխիկ գերհարուստներու յղիացումն ու յոխորտանքը, անոնց պոռոտ արհամարհանքը՝ օրէնքին եւ շարքային քաղաքացիին նկատմամբ, ինչ որ անյետաձգելի եւ ճակատագրական անհրաժեշտութիւն կը դարձնէ քաղաքական-տնտեսական համակարգի բարեփոխման գերխնդիրը: Գերխնդիր մը, սակայն, որ չի լուծուիր երկրէն փախուստ տալով ու արտագաղթելով, այլ՝ յամառ ու հետեւողական պայքարով, քաղաքացիական իրաւունքներու աննկուն

իրաւատիրութեամբ եւ պահանջատիրութեամբ: Ազգային արժանապատուութեամբ:

Ուշագրաւ երեւոյթ է, որ արտագաղթելու հակումը հայուն արդիւնքը եղած է նաեւ, շատ հաւանաբար, մեր դարաւոր պետականագուրկ կեանքին, դարե-դար՝ սելճուք, մոնղոլ, թաթար եւ այլ արշաւանքներ տեսած, անոնց աւերիչ հետեւանքները կրած, կամովին կամ բռնի տեղահանութեանց ենթարկուած ժողովուրդի մը հոգեբանական վիճակին, որ սերունդէ-սերունդ փոխանցուած ու արմատացած է կարծէք նոյնինքն մեր էութեան մէջ...: Անապահով կեանքէ մը հալածական, հայր միշտ ալ այլ տեղերու մէջ որոնած է իր ապահովութիւնը: Արտագաղթն ու տեղաշարժը անբաժան եղած են իր կեանքէն եւ անջնջելի, վիրաւոր հետք մը թողած են իր հաւաքական խորունկ հոգեբանութեան մէջ...:



Չուզահեռաբար, արտագաղթելու եւ տեղաշարժելու հոգեբանական այս հակումին սատարած են վատահաբար մեր ներքին անկազմակերպուածութիւնը,

անտիրականութիւնը, անիշխանութիւնը..., հողին կարչած մնալու գիտակից հայրենասիրութեան պակասը: Օտարամտութիւնը:

Պատմութեան ընթացքին, եղած են պարագաներ, երբ հայը նախընտրած է օտարին լուծը՝ հայ իշխանաւորին լուծէն, օտարին բռնապետութիւնը՝ հայուն բռնապետութենէն,...օտարին ծառայելը՝ հայուն ծառայելէն: Պիտի ընդունի՞նք որ մեր մէջ օտարամտութիւնը աւերներ գործած է դարերու ընթացքին եւ կը գործէ ալ շարունակաբար՝ Հայաստանի Հանրապետութենէն ներս եւ Մփիւռքի տարածքին: Օտարին մշակոյթը, կարգն ու սարքը գերադասելու եւ մերինը ստորադասելու այս տխուր հակումին ի՞նչ անուն տալ արդեօք...: Այսօր քանիններ՝ հայրենիքին մէջ մնալով հանդերձ, նիհիլիստօրէն կը վերաբերին հայ ազգային արժէքներուն ու մշակոյթին, մեր լեզուին ու պատմութեան, տակաւին՝ հայրենի բնութեան՝ անտառ ու պուրակին, հող ու ջուրին հետ...պատմական, մշակութային յուշարձաններուն հետ..., ոգեպէս պարպուած ըլլալով հայութենէ ու հայկականութենէ: Նմանները կարելի չէ՞ համարել հոգեպէս արդէն իսկ արտագաղթած հայեր...:

Իմ խորին համոզումով, այստեղ վճռորոշ դերակատութիւն է վերապահուած ազգային լիարժէք դաստիարակութեան: Այն դաստիարակութեան՝ որ նախանձախնդիր ըլլայ իրա՛ւ հայրենասիրութեան որակի, հայոց հողի անփոխարինելիութեան գաղափարի, պետական մտածողութեան, քաղաքացիական բարձր գիտակցութեան, բարոյական- հոգեւոր արժէքային համակարգի կերտումին, հայոց լեզուի անաղարտ ու անխաթար պահպանման ու տարածման՝ հեռուստացոյցէն ու մամուլէն մինչեւ ցուցանակներն ու գովազդները..., հայ մշակոյթի, բարոյական անտառական արժէքներու կենսունակ փոխանցման սերունդէ- սերունդ, որոնք կը սահմանեն հայու մեր տեսակը եւ ազգային մեր բուն էութիւնն են՝ յատկապէս մեր ժամանակներու համաշխարհայնացման համահարթեցումին եւ ամբողջատիրութեան դէմ: Նմանապէս, ազգային այն դաստիարակութեան՝ որ նախանձախնդիր ըլլայ մեր սերունդները դաստիարակելու որպէս իր պատմական իրաւունքներուն համար մարտնչող ՊԱՀԱՆՁԱՏԷՐ՝ ազգ, որ սրբազան ԴԱՏ մը ունի հետապնդելու...:

Որոշապէս, ազգային դաստիարակութեամբ եւ ոգիով թրծուած սերունդն էր որ կրցաւ իր արեան գնով ազատագրել հայրենի Արցախը, դարակազմիկ յաղթանակի մը հպարտութիւնը պարզելով համայն հայութեան, զայն ձերբազատելով ի մասնաւորի զոհի նուաստացուցիչ հոգեբանութենէն...: Այսօր նորովի եւ ազգային-պետական-հասարակական բոլոր հնարաւոր միջոցներով ամրապնդուելու է ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ընդդէմ օտարոտի կեղծ ու խորթ բարքերուն, ոսկէ հորթի ստապատիր արժէքներուն...:

Այլապէս, ինչպէ՞ս բացատրել թէ՛

-Ինչու՞ պարկեշտ հայուհիներ, որոնք ժամանակին «թուրքի ձեռքով չբռնաբարուելու համար Եփրատն են նետուեր», այսօր իրենց մարմինը կը վաճառեն թուրքին...

-Ինչու՞ հայ երիտասարդը, լքելով իր պապենական հողն ու օճախը, փախուստ կու տայ բանակէն, օտար հորիզոններուն անձնատուր...:

-Ինչու՞ երիտասարդ զոյգեր, հեռանալէ ետք հայրենի բնօրրանէն, այնքան շուտ կը ձգտին ընտելանալու օտարին բարքերուն, սովորութիւններուն ու լեզուին..., կը նախընտրեն շատ շուտով ձուլուիլ օտարներուն մէջ, քան պայքարիլ եւ հայ մնալ թէկուզ օտարութեան մէջ...:



-Ինչու՞ արտագաղթողներուն մէջ զգալի թիւ մը կը կազմեն անոնք, որ նիւթապէս քիչ թէ շատ ապահովուած են եւ չունին հացի ու ապրուստի խնդիր...:

Դեռեւս կարելի է երկարել այս հարցադրումներուն շարքը...: ԱԶԳՈՎԻՆ ԶԳԱՍՏԱՆԱԼ Է ՊԷՏՔ վերջապէս: Պիտի մտնա՞նք այն անհերքելի ճշմարտութիւնը, զոր մեր մեծ բանաստեղծ-մտածող Պարոյր Սեւակը բանաձեւեց այնքան իմաստալից կերպով, որպէս Պատգամ ուղղուած ներկայ եւ գալիք սերունդներուն՝ «Օտարութեան մէջ ազատ ապրելն էլ, ա՛յլ գերութիւն է»: Կամ յիշենք Վազգէն Շուշանեանի հետեւեալ խորհմաստ խորհրդածութիւնը, կամ աւելի ճիշդ ցաւատանջ յորդորը ուղղուած բոլոր սերունդներուն.-

«Հայոց Ազգ, քայլերդ դուրս մի՛ նետեր այս աւանդակներէն, այս ծործորներէն ու այս խոպան հողերէն: Եթէ նոյնիսկ բազուկներդ չկրցան հրացան բռնել, մագիլներովդ ճանկէ արդարութիւնդ, եթէ նոյնիսկ ստիպուած ըլլաս, անգամ մը եւս ողնայարդ ծռել, ողջ հասակովդ ինկիր մեր կարմիր հողերուն վրայ: Աւելի լաւ է սողալ այստեղ քան թէ գլուխ ցցել ուրիշին սահմաններուն վրայ: Ո՛չ մէկ նոր էլք այլեւս այս հողերէն: Ճակատագիրդ հոս է եւ սրբութիւնդ հոս, վասնզի հոսկէ է միայն, որ վաղը բոլոր փառքերը կրնան արթննալ եւ բոլոր ցորենները բարձրանալ, գեղուղէշ, բոլոր ակօսներէն...»:

Արտագաղթող բազմութիւնները պիտի լսե՞ն երբեւէ այս խորհմաստ ՍԹԱՓՈՒՄԻ ԽՕՍՔԵՐԸ, թէ՛ պիտի ի կատար ածեն թուրքին երազը...քանզի

«ԱՐՏԱԳԱՂԹԸ ՄԵՐ ՀՈՂԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԻՋՈՒՄՆ Է ԹՈՒՐՔԻԱՅԻՆ»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

Ցասումի եւ ընթացողութեան օր

Iragir.am-ի զրուցակիցն է «Ազատ Խօսք» համացանցային թերթի խմբագիր Երան Գույումճեանը (Նիկոսիա, Կիպրոս)

Տիկին Գույումճեան, տեղեակ էք «Հարսնաքար» ռեստորանում կատարուածին, թէ ինչպէս ծեծելով սպանեցին բժշկին, իսկ բժիշկներն էլ այդ ընթացքում նոյն ռեստորանում քէֆ էին անում, ինչն՞ էք պայմանաւորում այս ամէնը: Ինչի՞ հետեւանք է անպատժելիութիւնը:



Այն, ինչ տեղեկացայ հայրենական մամուլի արձագանգներից «Հարսնաքարի» միջադէպին մասին, ուղղակի սահմոկեցուցիչ է. բռնութիւն և վայրենութիւն, որոնք պէտք է խստագոյնս պատժուեն, այլապէս անպատժելիութիւնը ծնունդ կը տայ նորանոր յանցագործութիւնների: Մարդկային արժէքների ահաւոր անկում... անզգամութիւն... դժուար է բառեր գտնել

որակելու համար նրանց տմարդի արարքը... Հայաստանի Հանրապետութեան ներսում տարիներով կրկնուող անպատժելիութիւնը բթացրել է մարդկանց զգայնութիւնը և բրտացրել է հոգին... սա շատ վտանգաւոր երեւոյթ է որոշապէս: Այստեղ



հովանաւորչութիւնն էլ իր դերը խաղացել է: Հայրենի մամուլի արձագանգները յուշում են, որ հայ մարդու ձեռքով դաժանօրէն խոշտանգուած ու այժմ մահացած Վահէ Աւետեանի յուղարկաւորութեան օրը պէտք է վերածել համաժողովրդական ցասումի և ըմբոստութեան օրուայ... այլեւս չի կարելի համակերպուել, յարմարուել և հանդուրժել, որ որեւէ ՀԱՅ ՄԱՐԴ բռնութիւն բանեցնի իր եղբօր, իր հայրենակցի, հայ մարդու վրայ... նման ՈՃՐԱԳՈՐԾՆ ու ՅԱՆՑԱԳՈՐԾԸ պէտք է պատժուի խստագոյն պատիժով... ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԷՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՅ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ ԻՐ ԿՈՒԿՈՏՈՒԱԾ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՈՒԹԻՒՆԸ...

Ըստ Ձեզ, օլիկարխիային դժուար է պատժել, դրա համար այդ քայլին չեն դիմում:

Վստահաբար կարող եմ ասել, որ Հայաստանի Հանրապետութեան ներսում օլիկարխիան օրէնքից վեր է կանգնած, մենաշնորհեալի կարգավիճակով, ինչն անթոյլատրելի է բոլոր առումներով: Մա մեծապէս վարկաբեկում է Հայաստանի հասարակութեանը, վիրաւորում է նրա արժանապատւութիւնը: Միւս կողմից, պարզ քաղաքացին օրէնքով պաշտպանուած չէ Հայաստանի մէջ:

Ըստ Ձեզ, եթէ միւս նախագահական ընտրութիւններին ուրիշ թեկնածու յաղթանակ տանի, արդեօք կը լինի աւելի լաւ կամ աւելի վատ, օլիկարխիան որքանով իր տեղը կը զիջի:

Եթէ քաղաքական ամբողջ համակարգը չփոխուի, նախագահի անձը միայն փոխուի, շատ բան չի կարելի ակնկալել: Համակարգ պէտք է ձեւաւորուի, ուր տիրեն օրինականութիւնը, ընկերային արդարութիւնը և ազգային բարոյական արժէքների համակարգը: Ամբողջ մտայնութիւնը պէտք է որ փոխուի... այն ժամանակ միայն օլիկարխիան իր տեղը հարկադրուած կը զիջի:

Համակարգային փոփոխութիւն ի՞նչ ճանապարհով կարելի է իրականացնել:

Հասարակական գիտակցութիւնը հետեւողականօրէն արթնացնելով, որպէսզի հասարակութիւնը

ինքնակազմակերպուի, տէրը զգայ և պահանջատէրն իր իրաւունքներին, և պայքարի նրանց համար, այլապէս որքան տեսնում եմ, մենք կանգնած ենք քաղաքական-տնտեսական փակուղու առջեւ, և օր օրի ահագնանում է արտագաղթը:

Հասարակութիւնը, որը դեռ ընտրակաշառք է վերցնում, ընտրութիւնը փող աշխատելու միջոց դիտարկում, ինչպէ՞ս պէտք է գիտակցական վերելք ապրի:

Ճիշդ է, որ շատ տխուր էր, որ հասարակութեան մեծ մասը ընտրութիւնն ընկալեց որպէս գումարով ձայնը վաճառելու միջոց: Կ'ակնկալուէր, որ մեր մտաւորականները գէթ արթնացնէին մեր ժողովրդին: Բարեբախտաբար կան քաղաքացիական շարժումներ ամէն տեղ, որոնց պէտք է ամէն ձեւով ուժեղացնել: Մեր յոյսը, ըստ իս, քաղաքացիական շարժումներն են, անկախ մամուլի դերն էլ մեծ է այս առնչութեամբ: Իմ դիտարկմամբ, մամուլը ներկայում աւելի ազատ է և ունի լայն հնարաւորութիւններ, մանաւանդ համացանցով և սոցիալական, ընկերային ցանցերով կարելի է հանրութիւնը լայնօրէն տեղեկացնել և արթնացնել: Ընկերային ցանցերի մէջ, ազատ քննարկումներ կարելի է իրականացնել յօգուտ հանրութեան սթափումին և զգօնութեանը, ինչը շատ կարեւոր ազդակ

Է պետական-հասարակական գիտակցութեան վերելքի համար: Քաղաքացիական շարժումների մի օրինակն էլ մենք տեսանք վերջերս և վստահ եմ, որ նրանք պիտի շարունակուեն և թափ ստանան, մանաւանդ որ ունենք իրաւատէր և իրաւապահանջ երիտասարդութիւն:

Միրանոյշ Պապյան

Lragir.am

«Կեանքն աւելի լաւն էր, երբ այն պարզ էր»



«ԶԱՐՈՒՀԻ» հանդէս կանանց համար

«Սփիւռքի հայուհիներ» խորագիրը գնալով աւելի ու աւելի է ընդլայնում իր սահմանները՝ փնտռելով ու լուսաբանելով աշխարհի ամենատարբեր ծայրերում գտնուող յայտնի հայուհիներին, ովքեր կամայ թէ ակամայ յայտնուել են օտար ավերում կամ արդէն հարազատ դարձած մի նոր հայրենիքում:

Ֆրանսահայ երգչուհի ՍԵՂԱ ԱԶՆԱԻՈՒՐԸ նոյնպէս ծնուել է հայրենիքից շատ հեռու՝ Ֆրանսիայում՝ մշտապէս մնալով հաւատարիմ Ազնաւորեանների հայկական

արմատներին, արեան կանչին: Այո, Ազնաւոր ազգանունը իւրաքանչիւր հայի ականջին հարազատ ու քաղցր է հնչում, չէ՞ որ աշխարհահռչակ շանսոնիէ Շառլ Ազնաւորի հայրենանուէր գործունէութիւնը անուրանալի է եւ անհամեմատելի: Իհարկէ, տաղանդաւոր հօրից՝ Շառլ Ազնաւորից, բացառիկ ձայն ժառանգելով, մշտապէս ունկնդրելով հօրաքրոջ՝ Այտա Ազնաւոր-Կառվարենցի երգերը, պէտք է ունենայինք եւս մի տաղանդաւոր Ազնաւորեան տոհմի ներկայացուցիչ՝ Սեղա Ազնաւորին, ով բաւական էր միայն երգէր Մայեաթ-Նովայի «Ես քո դիմէթն չիմ գիտի» երգը, եւ անմիջապէս հայրենիքն իր գիրկը կ'ընդունէր նրան եւ մշտապէս սրտատրոփ կը սպասէր եւս մէկ անգամ հայաստանեան բեմում տեսնել Շառլ Ազնաւորին եւ իր դստերը՝ Սեղային:

Մեզ յաջողուեց կապ հաստատել ՍԵՂԱ ԱԶՆԱԻՈՒՐԸ հետ, եւ այս անգամ մեր հարցազրոյցն առանձնացաւ նրանով, որ մեր հերոսուհին նոյնպէս բազում հարցեր ունէր հայ կանանց եւ աղջիկներին.

- Ես չգիտեմ՝ ի՞նչ են զգում հայ աղջիկները եւ կանայք: Ունե՞ն արդեօք խօսքի ազատութեան իրաւունք, սիրոյ կամ երջանկութեան ազատութեան իրաւունք: Ընդհանրապէս ազատութիւն ունե՞ն: Եթէ այո, ապա կեանքը իրաշալի է, եթէ չունեն, բայց դրանց կարիքն էլ չունեն, էլի կեանքը իրաշալի է, որովհետեւ կեանքն այն է, ինչ դու ես ստեղծում: Եւ նոյնիսկ դա շատ դժուար է, քանի որ դու կարող ես դոփել նոյն տեղում ու մնալ քո իսկ ստեղծած կեանքի առեղծուածի մէջ: Միշտ պէտք է յիշել, որ դու ունես հնարաւորութիւն փորձել այն, ինչ ուզում ես եւ ինչը կարելոր է քեզ համար:



Հարցերի պատասխանները թողնելով «Զարուհու» ընթերցողուհիներին՝ հիմա էլ մեր հարցերն ուղղենք ֆրանսահայ երգչուհուն:

- Յարգելի Սեդա, Դուք դերասանուհի էք, երգչուհի, նկարչուհի, իսկ այսօր ո՞ր ասպարէզում էք շարունակում գործունէութիւն ծաւալել:

- Շատ զբաղուած եմ ընտանիքով, նաեւ ընդհանրապէս կեանքով եմ զբաղուած: Իսկ

մնացածի մասին ինչով ես զբաղում եմ, չեմ սիրում բարձրաձայնել:

- Յաջողութեամբ է արդէօք օտարութեան մէջ հաւատարիմ մնալ հայկական արմատներին, թե՞, այնուամենայնիւ, ֆրանսիական ազդեցութիւնը սկսում է գերակշռել ընտանիքում:

- Իմ որդին ամուսնացած է հայուհու հետ, այնպէս որ մենք գնում ենք մեր արմատներով:

- Իսկ Ազնաւորների աւագ սերունդն ի՞նչ ծրագրեր ունի այսօր:

- Շառլ Ազնաւորը միշտ աշխատանքի մէջ է եւ միշտ փորձում է օգնել Հայաստանին: Հօրաքոյրս՝ Այտա Ազնաւորը, արդէն 89 տարեկան է, խաղաղ ապրում է Ֆրանսիայում: Իսկ Ազնաւորների ընտանիքները բաւականին մտերիմ են:

- Եթէ յետադարձ հայեացք նետենք դէպի մանկութիւն եւ պատանեկութիւն, ի՞նչ յատկանիշներ կը նշէք, որը կարեւորել է Ձեր հայրը աղջիկների դաստիարակութեան գործում:

- Հայրս սկզբունքային դերակատարութիւն է ունեցել մեր դաստիարակութեան գործում՝ առաջին հերթին կարեւորելով հպարտութիւնն ու բարձր մարդկային արժէքները:

- Ի՞նչ էք կարծում, Հայաստանը մօտ է մեծն շանսոնիէյի երագած երկիրը դառնալուն:

- Կարծում եմ՝ նա շատ աւելի մեծ յոյսեր ունի իր երկրի համար: Շառլ Ազնաւորը սիրում է Հայաստանը, բայց իր երագների երկիրը ապրելու համար միշտ կը լինի Ֆրանսիան:

- Երեք տարի առաջ երրորդ անգամ Դուք Հայաստանում էիք, ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է լինելու Հայաստանի ապագան:

- Մեծ յոյսեր ունեմ, որ Հայաստանը դեռ բարգաւաճելու է, բայց այն մարդկանց համար, ում կեանքը աւելի լաւ է, Հայաստանը դեռ բոլորովին էլ չի բարգաւաճում:

- Իսկ ե՞րբ կրկին կը տեսնենք Ձեզ հայաստանեան բեմում:

- Դժուար հարց է... Ես Հայաստան եկել եմ երեք տարի առաջ, բայց չեմ կարող կոնկրետ ասել, թէ երբ կրկին կը լինեմ: Յուսով եմ շատ շուտով:

- Ի՞նչն է Ձեզ այսօր ամենից շատ անհանգստացնում:

- Ամէն ինչ: Կեանքն աւելի լաւ էր, երբ այն պարզ էր: Աշխարհն այժմ լի է բազմապիսի անարդարութիւններով:



- Յեղասպանութիւնից անցաւ 97 տարի, ի՞նչ մտորումներ ունէք ցեղասպանութեան ճանաչման հարցի շուրջ:

-Կարծում եմ՝ ամբողջ աշխարհը պէտք է ճանաչի հայոց ցեղասպանութիւնը: Ֆրանսիան բաւականին աշխատեց ճանաչման ուղղութեամբ, բայց կան բազմաթիւ դժուարութիւններ, որովհետեւ Թուրքիան հզօր երկիր է:

- Ձեր կարծիքով մենք երբեւէ կ'ունենա՞նք միացեալ Հայաստան, որտեղ կը վերադառնան ու կ'ապրեն աշխարհասփիւռ հայերը, թէ՛ մենք ճակատագրով դատապարտուած ենք բաժան-բաժան լինելուն:

- Չգիտեմ, արդեօ՞ք մարդիկ կարող են ամբողջութեամբ միասին ապրել: Ես օպեկկտիօրէն չեմ կարող պատասխանել, քանի որ իմ մտածելակերպը շատ արտիստիկ է ու բաւական հեռու քաղաքականութիւնից:



- Աշխարհասփիւռ հայութեանը ի՞նչ կը ցանկանար ասել Սեդա Ազնաւուրը:

- Կ'ուզենայի ասել. «ԵՍ ՁԵՁ ՄԻՐՈՒՄ ԵՄ»:

- Ուղղենք մեր վերջին հարցը՝ ի՞նչ կը մտաբերէք հայ կանանց եւ աղջիկներին:

- Աշխարհը պատկանում է երիտասարդներին, ապագան նրանցն է: Հայ երիտասարդ կանայք եւ աղջիկները պարտաւոր են պայքարել իրենց

համոզմունքների համար: Այսպիսով, ես ցանկանում եմ, որ իրենք հնարաւորութիւն ունենան պայքարել իրենց դուր չեկած երեւոյթների դէմ, եթէ դա այն չէ, ինչ իրենք են ուզում այս դժուար ժամանակներում: Միակ բանը, որ չենք կարող փոխել, դա մեր ինքնութիւնն է՝ ո՞վ ենք մենք, եւ որտեղի՞ց ենք գալիս: Մենք պէտք է համակերպուենք դրա հետ, որովհետեւ դա այն է, ինչ կայ, այդպէս չէ՞ք կարծում:

Իսկ մենք իսկապէս այդպէս ենք կարծում, եթէ մենք ամուր կառչած չլինենք մեր արմատներից, եթէ հաստատակամ չլինենք մեր հաւատքի մէջ, ապա չենք կարող առաջ նայել ու հզօրանալ՝ պահպանելով մեր ինքնութիւնը, ազգային դիմագիծն ու մաքրամաքուր լեզուն:

Զրոյցը՝ ՀՐԱՆԴ ՍԱՐԱՖԵԱՆԻ



Արցախում Բնակուող Բազմազանակ Մայր. «Եւրոպայում Էլ Ինձ Տուն Ու Մեքենայ Տան, Չեմ Գնայ Արցախից»

Անի Մարգարեան

Ատրպէյճանցիները տարիներ շարունակ բարբաջում են՝ իբր ազատագրուած տարածքներում ոչ մի հայ չի բնակուել ու չի բնակուում, իբր Արցախն ամայի է...



Միտով հիասթափեցնեմ մեր հարեւաններին: Արցախում ոչ միայն բնակուում են հայեր, այլեւ մեծ թիւ են կազմում բազմազանակ ընտանիքները, որոնք ցանկացած հարցում աջակցութիւն են ստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան, տեղական ինքնակառավարման մարմինների եւ բարերարների կողմից:

Առիթ ունեցայ ծանօթանալ ու զրուցել Քաշաթաղի շրջանի Աղաւնոյ ձորակում ապրող 8 երեխաների մայր Էլմիրա Յարութիւնեանի եւ վերջինիս դուստրերի հետ:

-Ինչպէ՞ս էք ծանօթացել Ձեր ամուսնու հետ, Տիկին Էլմիրա:

-Ասեմ, որ Մարի թաղում եմ ապրել, եկեղեցում եմ տեսել ապագայ ամուսնուս, հաւանել ենք իրար, 3 ամիս ընկերութիւն ենք արել, յետոյ եկել են ինձ ուզելու՝ հայկական աղաթներով, բայց հարսանիք չենք արել, քանի որ եղբայրս նոր էր մահացել: 1996 թուականին ենք ամուսնացել, սկզբում Թոխմախում ենք ապրել, 2002 թուականից տեղափոխուեցինք Քաշաթաղ, տան խնդիր ունէինք: Շատ գոհ եմ Արցախից, անկեղծ եմ ասում, ամէն ինչ լաւ է, բայց այստեղ պէտք է աշխատես, այգի պահես, անասուն պահես, որ ապրես: Մեպտեմբերին վարչապետն իմացաւ, որ գայլը 2 կովիս կերել էր, 800.000 դրամ փող յատկացրեց, որ նոր կովեր գնենք:

-Շատ երեխաներ ունենալու որոշումը ծրագրաւորուած ու գիտակցուած՞ որոշում էր, թէ՞ պարզապէս այդպէս ստացուել է:

-Երբ եղբայրս մահացաւ, մամաս գերեզմանից տուն չէր գալիս, 2 աղջկայ յոյսին էր, ասում էր՝ ինչու շատ երեխայ չունեցայ: Այս իրողութիւնն ի սկզբանէ նպաստեց շատ երեխաներ ու մեծ ընտանիք ունենալու որոշմանս: Բացի այդ, շատ վաղուց երազիս տեսայ Քրիստոսին, որը դատապարտում էր մանկասպանութիւն կատարող բժշկին, ուխտ արեցի, որ երբեք երեխայ չեմ սպանի փորումս: Ճիշդ է՝ գուցէ չեմ հասցնում շատ բաներ, բայց երեխաներս օգնում են ինձ: Կառավարութիւնն էլ մեր մէջքին է. տունս սարքել-տուել են, աշխատանք են տուել՝ թանգարանում եմ աշխատում, նպաստ եմ ստանում, աւանդ եմ ստանում՝ 12.000 դրամ ամէն ամիս, հաւ ենք պահում, անասուն ենք պահում, այգի ունենք: Ես ոչ մի բանից չեմ դժգոհում:

-Կ'ասե՞ք Ձեր երեխաների անուններն ու ծննդեան թուականները:

-Ուրեմն ասեմ. ունեմ 2 տղայ, 6 աղջիկ: Հերթականութեամբ յիշում եմ ու կարող եմ ասել.

Մարիամ-1997թ. Մարտի 28

Աննա-1998թ. Ապրիլի 15



Քնար -2001թ. Փետրուարի 22

Հռիփսիմէ -2004թ. Դեկտեմբերի 20

Գայեանէ -2006թ. Յունիսի 28

Սրբուհի -2007թ. Յուլիսի 8

Յովհաննէս -2008թ. Դեկտեմբերի 7

Գրիգոր -2010թ. Սեպտեմբերի 2.

Փոքրս Արցախի անկախութեան օրն է ծնունդ, միակն է ողջ Քաշաթաղում, որ այդ օրն է լոյս աշխարհ եկել, ամենաշխոյժն է երեխաներիցս:

-Հետեւում էք, որ երեխաները չկռուեն միմեանց հետ, թե՞ թողնում էք, որ ինքնուրոյն պարզեն իրենց հարցերը:

-Ես միշտ միջամտում եմ, սաստում եմ, չեմ թողնում, որ վատ բառեր ասեն իրար, չեմ թողնում, որ անհամերաշխութիւն լինի ընտանիքում: Ամէն դէպքում ինքնուրոյն են երեխաներս, ես մայր ու սկեսուր չեմ ունեցել կողքս, երբ 8 երեխայ եմ բերել: Ես շատ լաւ եմ նայել երեխաներիս, մէն-մենակ եմ մեծացրել, ամուսինս երեխայ օրօրած չկայ: Մեր տանը Երուսաղէմից՝ Քրիստոսի գերեզմանից բերուած իւղ ունէինք, մի անգամ, երբ Յովհաննէսս ահաւոր ջերմում էր, այդ ձէթով ենք բուժել:

-Երեխաները կնքուած են:

-Բոլոր երեխաներիս կնքել ենք 40 օրեկանը լրանալուց յետոյ: Երկուսի կնքահայրը պսակիս քաւորն է, Քնարիկինս մօրաքրոջս տղան է, միւս հինգինը՝ մեր հոգեւոր եղբայրներից մէկը:

-Ո՞ւմ հետ են երեխաներն աւելի մտերիմ, ո՞ւմ հետ են կիսում իրենց խնդիրներով:

-Հօր հետ մտերիմ է միայն Յովհաննէսը, հայրը շատ խիստ է, իմ հետ են շատ կիսում երեխաները:

-Ո՞րն է հայկական ընտանիքի ամրութեան գրաւականը:

-Մեր պէտք է լինի, սիրով ամուսնութիւն, տղամարդն է իշխողը՝ տան գլուխը, երբ կինն է փորձում ամուսնուն ղեկավարել, ընտանիքը փլուում է, պէտք է լինի յարգանք իրար նկատմամբ:

- Ձեր երեխաների ապագան Արցախում տեսնո՞ւմ էք:

-Ես մեծ սիրով Ստեփանակերտ, Մարտակերտ, Մարտունի հարս կը տամ աղջիկներիս, մեր հողերն են, չեն կարող երբեք ապացուցել մեր պիղծ թշնամիները, որ դրանք ատրպէլճանական են: Ամէն քայլի մեր յուշարձաններն են, Արցախում հին եկեղեցիներ ունենք՝ 4-րդ դարից սկսած, յետոյ էլ՝ վանքեր, խաչքարեր: Ղարաբաղի կռուից յետոյ ինձ ստիպողաբար՝ 19 տարեկանում, ամուսինս բերեց այստեղ, չէի ուզում ընդհանրապէս, բայց երբ եկայ, սիրեցի այս գիւղը, անկեղծ սիրեցի, հասկացայ՝ սա է իմ տեղը: Հիմա Եւրոպայում էլ ինձ տուն ու մեքենայ տան, չեմ գնայ Արցախից: Այս հողի համար կռուել են, մենք պարտաւոր ենք պահել, պահպանել, ապրել այստեղ:



-Ապաստարանի խնդիրն ինչպե՞ս էք լուծել:

-Պետութիւնն Արցախում ամէն ինչ տրամադրել է: Մի տունը սարքել է, միւսի գումարը տուել է ինձ, երկու տարուայ մէջ էլ մէկ այլ բարձրաճաշակ ու յարմարաւէտ տուն են կառուցել, տուել մեզ:

-Երեխաներն ուսման հետ կապուած խնդիր ունե՞ն:

-Այ դա է միայն մեր խնդիրը, դպրոց ունենք, բայց համակարգիչներ չունենք, գեղարուեստի դպրոց չունենք, աղջիկս լաւ խալի է գործում, շոր է կարում, բայց չկան նման դասընթացներ կամ հաստատութիւններ: Երգի ու պարի դպրոցներ էլ

չկան: Շատ կ'ուզենայինք, որ լինէին: Ամէն դէպքում մեր բոլոր խնդիրներն այստեղ լուծում են, համոզուած ենք, սա էլ վաղ թէ ուշ կը լուծուի:

-Մտերիմ հարեւանուհիներ ունե՞ք:

-Բոլորի հետ էլ լաւ եմ, չկայ չափազանց մտերիմ, բոլորին էլ յարգում ու սիրում եմ:

-Սերիալ-ներ դիտո՞ւմ էք:

-Չէ, ընդհանրապէս, բացառուած է, չեմ նայում:

-Աստուած չանի ի հարկէ, բայց եկեք պատկերացնենք՝ պատերազմը վերսկսուեց: Շատ անկեղծ պատասխանեք՝ կը լքե՞ք Արցախը:

-Միշտ ասել եմ, որ կը գնամ կը բարձրանամ այն՝ վերեւի քարանձանները, բայց չեմ գնայ այստեղից երբեք, սա իմ հողն է, մեր պապերն ու ապուպապերն էլ մինչեւ վերջ իրենց հողում են մնացել: Ամուսինս կը գնայ, կը կռուի, ես էլ այստեղ կը մնամ. սուտ չեմ ասի, միգրացի երեխաներիս ապահովութեան համար ուղարկեմ Երեւան, բայց երդում եմ, որ ինքս կը մնամ իմ հողի վրայ: Անգամ երբ գնում եմ Երեւան, որ տեսնեմ ծնողներիս, կարօտում եմ Արցախը, չեմ կարողանում Երեւանում երկար մնալ:

Ինձ յաջողուեց գրուցել նաեւ Էլմիրայի երեխաներից մի քանիսի հետ: Պարզուեց՝ ամենակրտսէրը՝ Գրիգորը, քնած է, Սրբուհին էլ Երեւանում է: Ուստի գրուցակիցներիցս դարձան Քնարիկը, Հռիփսիմէն ու Մարիամը՝ ամենամեծը: Մի շարք հարցերի արդիւնքում ստացուեց հետեւեալը.

-Ես Քնարիկ Յարութիւնեանն եմ, 11 տարեկան եմ, բոլոր քոյրերիս էլ սիրում եմ, բայց շատ մօտիկ եմ Աննայի հետ, սովորում եմ Վարազ Առաքելեանի անուան դպրոցում՝ 4-րդ դասարանում, շատ եմ սիրում դասատուիս, բժշկուհի եմ ուզում դառնալ: Սիրում եմ շրջապատս, մի բազմազան ընտանիք էլ կայ. մեր հարեւանն է, իրենք էլ շատ տղայ ունեն, բայց չենք խաղում իրենց հետ: Որ սիրահարուեմ, մամայիս հետ կը կիսուեմ:



Հռիփսիմէն էլ մեզ համար բանաստեղծութիւն արտասանեց , ամօթխած ժպտաց ու պատմեց.

-Ես երրորդն եմ երեխաների մէջ, 8 տարեկան եմ, երրորդ դասարանում եմ հիմա, 4 հոգի ենք դասարանում, անգլերէն եմ շատ սիրում, բայց բժիշկ եմ դառնալու, չեմ վախենում դժուարութիւններից, սիրում եմ Արցախը, ուրախ եմ, որ ծնուել եմ



Քաջաթաղում: Գիտեմ, որ մեր հերոսներն են ազատագրել մեր հողը: Մամայիցս գաղտնիք չունեմ, մամայի հետ շատ հեշտ է, մէկ էլ քրոջս՝ Գայեանէի հետ եմ մօտիկ, Մարիամի հետ եմ կոխ անում մէկ-մէկ: Տան գործեր եմ սիրում անել, աւել եմ սիրում: Հայ երեխաներին ցանկանում եմ առողջութիւն, երկար տարիների կեանք, մեր պէս լաւ երեխաներ լինեն:

Ամենամեծը՝ Մարիամը, մեզ ցոյց տուեց իր ձեռքի աշխատանքներն ու պատմեց ապագայի հետ կապուած ծրագրերի մասին:

-15 տարեկան եմ, տան գործեր շատ չեմ սիրում, դիզայներ եմ ուզում դառնալ, զարդեր եմ սարքում: Դեռեւս տղաները չեն մօտեցել ինձ: Եթէ լուրջ նպատակով մօտենան, կը շփուեմ, ընթացք կը տամ, բայց մամային անպայման կ'ասեմ: Շատ եմ սիրում պայծառ գոյները. դեղինն եմ սիրում: Ես Երեւանում եմ ծնուել, բայց ուրախ եմ, որ եկել ենք այս սիրուն տեղը, ունեմ լաւ ընկերուհիներ այստեղ, օրինակ՝ Անժելան: Ուզում եմ երգչուհի դառնալ, եկեղեցում երգել: Երբ մաման տանը չի լինում, ես եմ նայում քոյրերիս: Այստեղ իմ տարիքի քիչ մարդ կայ, շրջապատն է պակասում: Արցախի բարբառին դեռ չեմ տիրապետում: Կ'ուզենամ այնպիսի ամուսին ունենամ, որ հողի համար կեանքը տայ: Երբեք չեմ թողնի ու փախչեմ Արցախիցս...

Յօդուածներ

Ի՞նչ Կ'ուզէ Վրաստանը Մեզմէ

Հայկ Նազգաշեան, Մոնթրէալ

Տակաւին ոչ-հեռու անցելալին՝ 1987-ի Մայիսին Թիֆլիսի մէջ Մայեաթ Նովայի ծննդեան 275-ամեակի տօնակատարութեան մասնակցելու բախտը ունեցայ ես: Մայեաթ Նովայի ընծայուող այդ պատիւը Վրաստան իրեն վերապահած էր, սակայն հանդիսութեան կը նախագահէր Հայաստանի Գրողներու Միութիւնը, որուն պատուիրակութիւնը, փոխանորդաբար Վարդգէս Պետրոսեանին կը զլխաւորէր Մերօ Խանգաղեանը:



Երեւանէն Թիֆլիս շուրջ 270 քմ. ճամբայ էր, որ կ'անցնէր Սեւանայ լիճէն, Դիլիճանի հիանալի բնութեան մէջէն, Իջեւանի վրայով հասնելու համար Վրաստան: Այս բոլորը տեսնելով անցնիլը չէր բաւարարէր Սպարապետը,

որ ամէն գիւղի մուտքին, կամ պատմական վայրի մը առջեւ կենալով պատմութիւնը կը վերակենդանացնէր, առանց հոգ ընելու, որ այս ընթացքով անխուսափելիօրէն պիտի չկարենայինք ժամանակին հասնիլ հանդիսութեան: Բայց գիտէր նաեւ, որ առանց հայկական պատուիրակութեան չէր կրնար սկսիլ հանդիսութիւնը: Իր ստեղծած վիպական հերոսին նմանութեամբ Սպարապետ կոչեր էի զինք, որ ճշդօրէն կը բնորոշէր իր տիրական նկարագիրը:



Անկէ ի վեր անցեր է շուրջ քառորդ դար: Սովետական Միութեան քայքայումին հետեւանքով Վրաստան եւ Հայաստան եղան

Անկէ ի վեր անցեր է շուրջ քառորդ դար: Սովետական Միութեան քայքայումին հետեւանքով Վրաստան եւ Հայաստան եղան



անկախ երկիրներ: Սակայն մինչ այդ քարոզուած միջազգային եղբայրութեան մեծ սուտ մը ըլլալը երեւան ելաւ, երբ Ազրպէյճանի ազատ զգաց իր հայատեացութիւնը ցոյց տալու: Թուրքը նոյն թուրքը մնացեր էր: Բռնապետ Սթալինի կարգադրութեամբ Ազրպէյճանի նուիրուած Նախիջեւանը հայութենէ պարպուեցաւ:

Գոյութիւն ունեցող վանքերը, խաչքարերը եւ մշակութային ու կրօնական այլ վկայարաններ քանդուեցան ու փճացուեցան: Անզօր գայրոյթով տեսանք թէ թուրքը նոյնն է մնացեր: Բայց աւելի խոր գայրոյթով ու մեծ ցաւով նկատեցինք, թէ Վրաստան եւս մեր բարեկամը չէ. կարծես չբաւէին բռնապետ Սթալինի եւ Բերիայի հակահայ ոճիրները՝ համայնավար յեղափոխութեան մէջ իրենց մրցակից Ստեփան Շահումեանին ու Հայկ Բժշկեանցին պէս ղեկավարներ մաքրագործելով, խնայելով միայն Անաստաս Միկոյեանը, որուն վայելած միջազգային վարկին ու դիւանագիտական կարողութեանց պէտք ունէին:

Բայց մեզ կը զարմացնէ ու ցաւ կը պատճառէ Վրաստանի հակահայ ընթացքը, ուրանալով եւ մոռնալով, որ Թիֆլիսը Թիֆլիս ընողը հայերն էին եւ որոնք դարաւոր մշակութային ու բարեկամական կապ ունեցեր էին Վրաստանի հետ: Յովհաննէս Թումանեանի 1914-ին հիմնած վարդատօնը հայ եւ վրացի մտաւորականներով եւ մշակութասէր ժողովրդային զանգուածներով կը տօնախմբուէր: Թիֆլիսի հայկական Ս. Գեորգ եկեղեցւոյ ծառագարդ բակին մէկ անկիւնը, Սայեաթ Նովայի դամբարանին կողքին կը հանգչին նաեւ Ռաֆֆիի, Թումանեանի, Նար-Դոսի, Ղազարոս Աղայեանի եւ Գաբրիէլ Սունդուկեանի շիրիմները, վկայելով այն իրականութեան մասին, որ Թիֆլիսը հայ գրականութեան ու մշակոյթի գլխաւոր կեդրոնն էր: Առաջին հայկական ֆիլմը՝ Պեպօն հոն պատրաստուած էր: Հակասելով այսպիսի անցեալի մը՝ այսօրուան Վրաստանի հակահայ ընթացքը զղջալու եւ ափսոսալու կը մղէ մեզ՝ մեր բարեմտութեան համար:

Վահագն Զախալեան



Զաւախքահայութիւնը կը տառապի վրացական բռնաստիճութեան տակ: Տիրող անտանելի կացութեան դէմ բողոքողները, ցոյց կատարողները կը դատապարտուին ու կը բանտարկուին: Բռնութիւնով եւ անիրաւութիւնով վրացական իշխանութիւնը կը ջանայ արտագաղթի մղել Զաւախքի հայութիւնը, փոխարէնը ազերիներ եւ թուրքեր բնակեցնելու համար: Այս վիճակին մէջ մեծ դեր ունի թրքական եւ ազերիական դրամը, որ կօգտագործուի պետական օժանդակութեան ձեռք տակ ու նաեւ որպէս կաշառք հակահայ վարձկաններուն: «Միասնական Զաւախք» կազմակերպութեան ղեկավարներէն Վահագն Զախալեանը վերջերս անիրաւ անբաստանութիւններու տակ դատաւարութենէ մը յետոյ 10 տարուան

բանտարկութեան դատապարտուեցաւ: Սակայն, առանց պայքարին վերջ տալու, ան բաց նամակ մը ուղղեց նախագահ Սահակաշվիլիին, յատկապէս ըսելով.- «Զաւախքահայութիւնը պատրաստ է երկխօսութեան: Մենք դեռեւս յոյս ունենք, որ ստիպուած չենք լինի երկու բարեկամ ժողովուրդներին վերաբերող խնդիրների լուծումը վաղը փնտռել եւրոպական եւ միջազգային աստեաններում: Մնում է միայն մէկ բան՝ որ ընդունէք երկխօսութեան հրաւերը»:

Մտահոգիչ պարագայ է, որ հայկական ցեղասպանութեան քննարկումը պատճառ եղած է խորհրդարանին մէջ իրար ծեծելու: Խորհրդարանի նախագահը վերջ դրած է վիճաբանութեանց, յայտարարելով որ «այդ ցաւոտ հարցին քննարկումը կարող է ազդել հարեւանների հետ մեր յարաբերութիւններին վրայ»: Այսինքն, Վրաստան չուզեր իր շահերը վտանգել այդ պատճառով:

Տակաւին կարճ ատեն առաջ այս պատեհապաշտ եւ ապերախտ ժողովուրդը, երբ փորձեց Վրաստանը ամերիկեան ռազմախարհիսի մը վերածել, Ռուսիա պատժական յարձակումով մը արժանի դասը տուաւ անոր անխոհեմ ղեկավարութեան: Իսկ Հայաստանի իշխանութիւնը ձեռնածալ դիտեց եղածը: Բայց չենք դադիր կրկնել, որ «Ջաւախքը մերն է, ջաւախքահայութիւնը կը տառապի վրացական բռնատիրութեան տակ» եւ այլն: Ո՞վ պիտի կարենար արգիլել որ ռուսական արշաւանքին ընթացքին, նոյնիսկ Ռուսիոյ հետ համախորհուրդ, մենք ալ Ջաւախքը ազատագրէինք: Մեր իրաւունքին տէր ըլլալու պահը ներկայացած էր, բայց մենք փախցուցինք առիթը, որ գուցէ անգամ մըն ալ չկրկնուի:

Ափսո՛ս, պատմութեան դասը չենք սորված:

Հրապարակախօս Զօրի Բալայեան Հրապարակած է Վահէ Աւետեանի Մասին Իր Գրառումները

Գրող-հրապարակախօս Զօրի Բալայեան Յուլիս 1-ին հողին յանձնուած ռազմական բժիշկ Վահէ Աւետեանի՝ տակաւին ռազմական հիւանդանոց գտնուելու օրերուն գրառումներ կատարած է անոր եւ անոր շուրջ ստեղծուած իրավիճակին մասին, եւ զայն, այնուամենայնիւ, որոշած հրապարակել «Արմենփրէս» գործակալութեան կայքին մէջ: Կը ներկայացնենք

զայն ստորեւ. Ամէն օր, վերադառնալով կեդրոնական հիւանդանոցէն, ես կը գիտակցեի, որ ատիկա կրնայ վերջին օրը ըլլալ դեռ երէկ առողջ, երիտասարդ, մարզական կազմուածքով տաղանդաւոր զինուորական բժիշկ Վահէ Աւետեանի համար: Այն, որ սիրտը կը բաբախէր ամբողջ տասներկու օր բոլորովին անշարժ կրծքավանդակով, բացարձակապէս արհեստական շնչառութեան, սնուցման պայմաններու մէջ, թթուածինի մատակարարմամբ, ատիկա իսկական հրաշք էր, որ գործեցին մեր բժիշկները:



Ամէն անգամ հիւանդանոց երթալէն առաջ (առաւել յաճախ միայնակ չէի այցելեր), ես կը զանգէի բանակի գլխաւոր բժշկական հաստատութեան պետ, փոխգնդապետ Արամ Սասորեանին: Ան կը պատմէր իրավիճակին մասին, եւ մենք կը պայմանաւորուէինք այցելութեան ժամին շուրջ: Ամէն օր ես գրառումներ կը կատարէի յուշատետրին մէջ, բոլորովին ալ միտք չունենալով զանոնք հրապարակելու: Ինչպէս յաճախ, կը մտածէի, թէ գործուն կերպով գրառումներու կը վերադառնամ յետոյ:



Յունիս 28-ին, երեկոյեան կողմ զանգեցի Արամին: Ան պատասխանեց... լռութեամբ: Լսափողէն հազիւ կ'որսայի խորը շնչառութիւնը: Վահէին սիրտը կանգ առած էր:

Այդ երեկոյ ես արդէն կը մտածէի ոչ միայն Վահէի երկու փոքրիկ երեխաներուն մասին, անոր ուսուցչուհի կնոջ, բժշկուհի մօր, հօր, Հայաստանի, Ղարաբաղի եւ Իրանի մէջ ապրող ազգականներուն մասին: Ես կը մտածէի նաեւ մարդասպաններու երեխաներուն մասին: Փոքրիկ մանկանց, որոնք, ըստ էութեան, նոյնպէս պիտի որբանային: Ահա ասիկա է անխուսափելի հատուցումը՝ իբրեւ Աստուծոյ պատիժ: Եւ ես որոշեցի որոշ էջեր հրապարակել օրագիրէն:

* * *

Այդ մղձաւանջի լուրը առնելուն պէս ես արդէն գիտէի, որ պիտի ձգեմ բոլոր գործերս եւ պիտի ուղղուիմ սրտիս այնքան թանկ Կեդրոնական ռազմական հիւանդանոց: Մինչ տեղ կը հասնէի, կը յիշէի, թէ ինչպէս քսան տարի առաջ ուղղաթիռները երամներով կը թռչէին ռազմաճակատային Արցախէն, ուղղակի մարտի դաշտէն տեղափոխելով վիրաւորները, որոնց «Էրեբունի» օդակայանէն կազմակերպուած կը տեղաբաշխէին երեւանեան բազմաթիւ հիւանդանոցներ: Այն ժամանակ երկաթգծայիններու հիւանդանոցի հիմքին վրայ նոր-նոր եւ հապշտապ ստեղծեցին զինուորական հիւանդանոցը: Կը յիշեմ, թէ ինչպէս «ԱՄՆ-ի ամերիկեան օգնութիւն» հայկական մարդասիրական կազմակերպութեան հիմնադիրներ, ամուսիններ՝ Վարդգէս եւ Մերի Նաճարեանները գործնական կերպով առաջին հերթին կազմակերպեցին հիւանդանոցի ապահովումը նոր բժշկական մահճակալներով: Եւ ապա ձեռք զարկին զինուորական հիւանդանոցի շինարարութեան եւ սարքաւորման: Չէի կրնար չմտաբերել եւ այն, որ հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան մէջ այդ ժամանակ ստղծուեցաւ յատուկ ծառայութիւն՝ անմիջականօրէն մարտադաշտին մէջ նախնական բուժօգնութեան կազմակերպման ապահովման եւ վիրաւորներուն ինչպէս դաշտային, այնպէս ալ Ստեփանակերտի ու Երեւանի քաղաքային հիւանդանոցներ տեղափոխելու համար: Այդ ծառայութիւնը կը գլխաւորէր այն ժամանակուան առողջապահութեան առաջին փոխնախարար Դերենիկ Տումանեան:

Կատարուեցան աւելի քան տասը հազար վիրահատութիւններ: Եւ ամենագլխաւորը այն է, որ փրկուածներուն մօտ ութուն տոկոսը վերադարձան ռազմադաշտ: Իսկ ասիկա կը կազմէր քանի մը գումարտակ: Անգին էին այդ տղաները, որ արդէն, ինչպէս կ'ըսեն՝ վառօդի հոտը առած էին, ձեռք բերած անգնահատելի ռազմական փորձառութիւն: Այսպիսին էր մեր ռազմական բժիշկներու յիբաւի հերոսական սխրանքը: Չէ՞ որ այն ժամանակ մեր ամբողջ բժշկութիւնը, կարելի է ըսել՝ ռազմական էր:

* * *

Ես բարձրացայ հիւանդանոցի գլխաւոր մասնաշէնքի երրորդ յարկ: Կը յիշեմ, որ այստեղ մօտաւորապէս իննսունականներու վերջերուն պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեան հանդիսաւոր պայմաններու մէջ Վարդգէս Նաճարեանին շնորհեց բժշկական ծառայութեան գնդապետի կոչում եւ անձամբ անոր ուսերուն հազցուց գնդապետական ուսադիրներով կիտելը: Ճակատագրի հեգնանքով նոյն այստեղ, երրորդ յարկին վրայ կը



գտնուի վերակենդանացման բաժինը, ուր պառկած են երեք բժիշկներ: Բոլոր երեքին վիճակը ալ ծանր է: Մէկը մահամերձ է:

* * *

Այդ օրը, Յունիս 18-ին, երեքն էլ ծրագրաւորուած վիրահատութիւններ պիտի անցնէին: Սակայն բժիշկ Վահէ Աւետեանի ղեկավարած ՔԿԱ բաժինի աւելի քան երեսուն հիւանդներ ապարդիւն սպասեցին իրենց բուժող բժիշկը: Ինչպէսէս նախորդ երեկոյ տունը ապարդիւն կը սպասէին անոր երեխաները՝ հինգ տարեկան Գարիկը եւ չորս տարեկան Միլենան: Իրենց երեխաներուն ու հիւանդներուն չհասան Վահէի եւս երկու գործընկերները՝ միքրովիրաբոյժ կապիտան Արտակ Բայադեան եւ ընդհանուր ռազմադաշտային վիրաբոյժ Գարիկ Սողոմոնեան: Անոնք բոլորը կը գտնուէին երրորդ յարկ, վերակենդանացման բաժին: Անոնցմէ բացի, եւս երեք հոգի տարբեր վնասուածքներով կը գտնուէին քաղաքի այլ բժշկական հաստատութիւններու մէջ:

Ես այցելեցի զիրենք: Վահէն անգիտակից վիճակի մէջ էր, դրուած արհեստական շնչառութեան վրայ: Գանկոսկրի ծանր վնասուածք, ուղեկցուած գանկուղեղի անատմիական վնասուածքով: Երկար գրուցեցի Արտակի եւ Գարիկի հետ: Անոնց վիճակը աւելի տանելի էր: Բայց ի հարկէ տանելի՝ Վահէի համեմատութեամբ: Երկուքն ալ ունին քթոսկրի կոտորուածք, ուղեղի ցնցում եւ մարմնի վրայ՝ ծեծի բազմաթիւ հետքեր: Արտակի ձախ աչքը ամբողջովին շրջանակուած է սեւով: Ես մանրամասնօրէն գրի առի անոնց պատմածը: Բայց վերապատմել չեմ ցանկանար: Այդ ամբողջ ահաւոր բնականութիւնը ակնյայտօրէն կրնայ խանգարել այն նպատակի էութեան եւ իմաստին, յանուն որուն գրիչ վերցուցած եմ ձեռքս: Այդ թեման ինծի շատոնց հանգիստ չէր տար: Իբրեւ բժիշկ ես գիտէի, որ Վահէն...պիտի մահանայ: Գիտէի, որ անոր երկու փոքրիկները պիտի որբանային: Սիրտս ցաւէն կը ճմլուէր: Լռել չէի կրնար: Գրառումներու տեսքս վերածուեցաւ օրագրի:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

Բաց նամակ Զօրի Բալայեանին

Յարգելի Զօրի Բալայեան,

Կարդալով Ձեր գրառումները, որոնք կատարել էք այն ժամանակ, երբ Վահէ Աւետեանը դեռ կենդանի էր, երկար ժամանակ մտորում էի, ուզում էի հասկանալ, թէ ինչն է պատճառը Ձեր այդ ոչինչ չասող, հարցը արմատից չքննող, Հայաստանում գոյութիւն ունեցող ներկայիս վատատողջ, բռնութեան, կամայականութիւնների,

անօրինականութիւնների մթնոլորտը չքննարկող, չմեղադրող գրառումները հրապարակելու միտումը, օգուտը և հասցեատէրը: Այնտեղ ասես մտածուած շրջանցում է այն պայմանների մասին խօսելուց, որտեղ գոռփաների և ոչ թէ օրէնքի իշխանութիւնն է տիրում, որտեղ էլ միայն հնարաւոր են դառնում նման այլանդակութիւններ: Իսկ դրանք ոչ առաջինն են, ոչ էլ վերջինն են լինելու: Այդ գրառումները *«կոնկրետ ճշմարտութիւնը»* չմատնանշելու, խուսանաւելու, մանւերելու փորձ է միայն: Բայց մի տեղ չէք մեղանչում ճշմարտութեան դէմ, երբ գրում էք՝ *«որ ընդհանուր առմամբ բոլորիս գրածն էլ այն չէ, բոլորիս ասածն էլ այն չէ, ինչ պէտք է...»*

Այո, դա իրօք որ այդպէս է:



Ինչ խօսք, շատ հեշտ է դրսից, հեռուից դատողութիւններ անել, գրողին յանդիմանել իր չասած խօսքերի համար, և ես ձեռնպահ կը մնայի, եթէ ծանօթ չլինէի ձեր անցեալին, կարդացած չլինէի ժամանակին Ձեր համարձակ յօդուածները, գրառումները և չիմանայի, թէ որքան մեծ է եղել Ձեր աւանդը Արցախի ազատագրական պատերազմի տարիներին:

Եւ ես ձեռնպահ կը մնայի, եթէ բոլորի նման ես էլ դէմ առ դէմ կանգնած չլինէի այն սոսկալի իրական փաստի դէմ, որ ժամանակին անհամար զոհողութիւնների գնով պայքարող և Արցախը ազատագրող անձինք այսօր խաղաղ պայմաններում

լուրջինի են սպանում և դրանից ահաւորը՝ կտրում են ժողովրդի շունչը, նրանց տնակեր անում: Իրենց և իրենց ընտանիքների համար կառուցել են պալատներ, դղեակներ և փառաւոր կեանք են ստեղծել: Իսկ բացարձակ ճշմարտութիւն է և ոչ մէկի համար գաղտնիք չէ, որ նրանք այդ ամէնը ստեղծել են ապօրինի ճանապարհով, Հայաստանի ազգաբնակչութեան տառապանքների և ժողովրդի աղքատացման, արտագաղթի, հայ ժողովրդի և Հայաստանի վտանգուած ապագայի հաշուին: Հարիւրհազարաւոր հայութեան թափառական կեանքի, տասնեակ հազարաւոր ընտանիքների քայքայման հաշուին:

Իսկապէս, շատ աւելի հեշտ է համախմբուել երկրի և ժողովրդի արտաքին թշնամիների դէմ, քան ներսի, իսկ հայ ժողովրդի աղետալի պատմութիւնը ցոյց է տուել, որ հենց նրանք էլ ի վերջոյ պատճառ են դարձել երկրի տապալմանը և ժողովրդի աղետի ենթարկմանը: Շատ քաղաքակիրթ երկրների և ազգութիւնների մօտ նման դէպքերում միշտ էլ ժողովրդին պաշտպան են կանգնել երկրի մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները: Շատ յաճախ բազմաթիւ զրկանքների գնով նրանք ասել և պաշտպանել են ճշմարտութիւնը, քանզի ըստ Ձեզ «ճշմարտութիւնը կոնկրետ է» և իմ կարծիքով միակ երաշխիքը՝ երկրի առաջընթացի և ժողովրդի բարօրութեան: Որտե՞ղ է կանգնած այսօր հայ մտաւորականը, ո՞ւմ կողքին, որ խուսափում է ճշմարտութիւնը ասելուց, բացայայտելուց:

Մտորումների տեղիք է տալիս նաեւ, թէ դուք ինչո՞ւ եք ցանկացել յատկապէս շեշտել, որ յանցագործների երեխաները որբ են մնալու: Այստեղ դուք բոլորովին էլ ճիշդ չէք ընտրել այդ բառախաղը, ներեղութիւն, բայց ես դա այլ կերպ անուանել չեմ կարող: Ի՞նչ է նշանակում որբութիւն, որբ լինել: Ապա ինչպե՞ս անուանել այն տասնեակ հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր երեխաներին, որոնց հայրերը ստիպուած աքսորի են մեկնել: Իսկ այս դէպքում այդ երեխաների հայրերը ժամանակաւոր են բացակայելու: Իհարկէ դա էլ է հարցականի տակ: Արդե՞օք նրանք երբեւէ արդար պատիժ կը ստանան և կը բանտարկուեն:

Ես էլ շատերի, չասենք ամբողջ հայութեան նման, (որովհետեւ ամբողջը ներառում է նաեւ այն «օլիգարխներին», որոնց համար օրէնքը իրենց անպատժելիութիւնն է նշանակում, անձեռնմխելիութիւնը), համոզուած չեմ, որ յանցագործները իրենց արժանի պատիժը կը ստանան: Եթէ Հայաստանը լինէր աշխարհի դեմոկրատ և քաղաքակիրթ երկրների նման և արդարը ի՞ր տեղում լինէր, չարը՝ իր տեղում, ապա երկրի իշխանութիւնների շատ մեծ ու փոքր ներկայացուցիչներ, այսօր այնտեղ չէին լինի, որտեղ գտնուում են: Քանզի բոլորն էլ այս կամ այն չափով և իրենց մեթոտներով խախտել են երկրի հենց իրենց կողմից գրուած, հաստատուած սահմանադրութիւնն ու օրէնքները, մեղանշել են իրենց կոչման ու երդման դէմ՝ որն է՝ ազնուօրէն և ամբողջ կարողութիւններով ծառայել հայրենիքի զարգացման, ապահովութեան և ժողովրդի սոցիալական բարօրութեան համար...



Եւ քանի որ իրական կացութիւնը Հայաստանում այսօր այդպէս չէ և երկիրը դասուում է Լատին Ամերիկայի նախկին «պանանի հանրապետութիւն» պիտակ կրող երկրների շարքում, իսկ կոռուպցիայի առկայութեան պատճառով, նման երկրների գրեթէ վերջին շարքերում, ապա այլ բան սպասելը, միամտութիւն կը լինէր և գաւեշտ:

Բհարկէ, ես լաւ գիտեմ, որ դուք և շատերը ինձ կը մեղադրեն, որ ես չափազանցում եմ, բայց իմ, և ոչ միայն իմ, հաւաստի ապացոյցը դա գոռբանների քանակն է երկրում ու նրանց սեփական զինեալ թիկնապահների առկայութիւնը: Հապա այլ ինչպէ՞ս գնահատել և անուանել այն երկիրը, որտեղ էլ հնարաւոր է տարբեր քաղաքների՝ քաղաքապետների, մարզպանների, երբեմն բռնակալութեան սահմաններին հասնող ինքնիշխանութիւնը: Հապա այլ ի՞նչ անուն կարելի է տալ մի երկրի, որի բնութիւնը անխնայ և անպատիժ թալանում և աւերում են որոշ հանքատերեր:

Որպէս ապացոյց կարելի է նշել նաեւ այն իրողութիւնը, որ երկրում գոյութիւն չունի անկախ դատարան, անկախ խորհրդարան և անկախ գործադիր մարմին, որոնք էլ կը պաշտպանէին բնակչութեան շահերը փոքր ու մեծ իշխանաւորների կամայականութիւններից և դատաստանի առաջ կը կանգնեցնէին իւրաքանչիւր օրինազանցի, չարաշահողի, ինչ պաշտօնում էլ որ նա գտնուելիս լինէր: Եւ ես բոլորովին էլ յայտնագործութիւն արած չեմ լինի, եթէ ասեմ, որ ահա հենց այդ օրկանների խիստ սերտաճումն է իշխանութիւնների հետ, որը չարիքների չարիքն է, իրապէս՝ մեծագոյն չարիքը և աղէտը, որը երկրին այդպէս արագօրէն դէպի գառիթափ է տանում:

Այս շարքը կարելի է այսպէս երկար շարունակել, բայց չէ որ դուք ինձանից ու մեր բոլորից աւելի մանրակրկիտ տեղեակ էք այդ մասին: Բայց Ձեր գրառումներում դուք յամառութեամբ լռում և խուսափում էք այդ բոլոր բացասական երեւոյթները մատնանշել: *«Չեղաւ եղբայր, իսկապէս չեղաւ»:*

Այստեղ տեղին է յիշել Յովհաննէս Թումանեանի՝ իր ժամանակների մի դիպուկ բնորոշում *«Հառաչանք»* պոեմից.

«Պրիստաւի մօտ գանգատի եմ գնում, գողի իզն իր տունն է տանում»:

Ուրեմն էլ ինչպէ՞ս վարուի այսօր հայ աշխատաւորը, հայ գիւղացին, հայ մայրը, հայ հայրը, հայ դեռատի աղջիկը, հայ երիտասարդ ուսանողը, երբ իր ժամանակները, նրան յիշեցնում են Թումանեանի ժամանակները, երբ ինքը երկրում տիրող պայմանների նոյնպիսի գերին է և որոշ անհասների ու իշխանաւորների կամայականութիւնների նոյնպիսի անգոր գոհը: Երբ նրանք իրենց երկրում, իւրայինի իշխանութեան օրօք չեն կարողանում մարդավայել աշխատել, արարել, ապրել ու ուսանել: Ուրեմն նրանք էլ ո՞ւմ մօտ գանգատի գնան: Ուրե՞մն նրանք ինչպէս դիմանան և դիմադրեն քաղաքակիրթ երկրների հմայքի, փայլի կանչին:

Հապա մտաւորականութի՞ւնը, արուեստ արարո՞ղը, արուեստագէ՞տը: Երեւի բոլորովին էլ չափազանցութիւն չի լինի ենթադրել, որ այսօր արդէն երկրից հեռացել են աւելի շատ մտաւորականներ և ուսանողներ, քան մնացել երկրում: Հապա ինչպէ՞ս չի յիշել այն բոլոր հայ կանանց, որոնք Թուրքիա, արաբական խալիֆայիտներ և արեւմուտքի այլ երկրներ աշխատանքի են գնացել, և երբեմն չդիմանալով սոսկալի պայմաններին, ընտրել են միակ ելքը, սկսել են վաճառել իրենց մարմինը: Հայաստանի իշխանութիւնները՝ Լեւոն տէր Պետրոսեանից մինչև Ռոպերթ Քոչարեան, մինչև Սերժ Սարգսեան և նրանց դրածոները պէտք է առնուազն կարմրէին, ամաչէին նման փաստի առաջ կանգնելով և եթէ դոյզն չափով



այն Հայրենասիրութիւնից և անձնագոհութիւնից իրենց մէջ ունեն, որը նրանք դրսևորեցին Արցախի պատերազմի տարիներին, ապա պէտք է որ ժամանակին հրաժարուէին իրենց պաշտօնից և ներողութիւն խնդրէին հայ ժողովրդից:

Ձեզանից և հայ մտաւորականութիւնից սպասում է համարձակութիւն, խտենութիւն, ապագայի իրական վտանգի խորը տեսողութիւն, որպէսզի դուք կանգնէք, սկսուող, սաղմնաւորուող, բայց դեռ երկչոտ շարժման կողքին, Ձեր հետ տարէք այնքան զգուշաւոր Պարոն Լեւոն Անանեանին, այնքան «համարձակ» Սօս Սարգսեանին, Պերճ Ձեյթունցեանին և այն հարիւրաւոր մտաւորականներին, ովքեր ժամանակին չտեսնուած «համարձակութիւն» ցուցաբերեցին և նամակ յղեցին Թուրքիայի նախագահ Ապտուլահ Կիլիլին: Ի սէր Հայութեան, ի սէր այն հայատանցի ուսանողուհու, ով վախի մէջ է, որ չլինի, թէ մի օր ինքը անհայրենիք մնայ, ի սէր այն հարիւր հազարաւոր մերօրեայ գենոցիդի գոհերի, միացէք ցուցարարներին, սատարէք նրա պայքարը, Ձեր համարձակ և ուժեղ գրչով բորբոքէք, թեժացրէք այն կրակը, որը որ բռնկուել պէտք է, որը որ այնքան անհրաժեշտ է և հայութեան լինելիութեան երաշխիքն է լինելու: Դուք էլ զինուորականների նման մի ոգևորուէք փայլուն տանկերով, հեռահար հրթիռներով և այլ նորատեսակ զենքերով: Առանց ժողովրդի, դրանք չեն կարող երկրի ապահովութիւնը և ապագան երաշխաւորել: Իննսունական թուականներին հայ ժողովուրդը չունէր դրանց գոնէ մի քանի տոկոսը և յաղթեց: Բոլորից աւելի լաւ դուք գիտէք, թէ ինչո՞ւ, թէ ինչպէ՞ս կատարուեց այդ...

Եւ թող գեներալ Մանուէլը չոխորտայ, որ իրենք դեռ անելիք ունեն Պաքում: Այդ իրենքը ովքե՞ր են, նա պէտք է լաւ իմանայ, որ առանց ոգևորուած և ամէն մի գոհողութեան պատրաստ ժողովրդի, որին նա այսօր այդպէս չարական արհամարհում ու հարստահարում է, իրենք ոչինչ են: Բսկ նրա յոխորտոցը ինձ յիշեցնում է Էլչիպէին, ով երագում էր յաջորդ օրը ոտքերը լուանալ Սեւանում:

Կը ներէք, երբէք չէի ցանկանայ Ձեր, ինչպէս նաեւ ոչ մէկ հաւատացեալի կրօնական զգացումները վիրաւորել և հարցականի տակ դնել, բայց, ցաւօք, չեմ կարող չարտայայտուել մէկ այլ հարցի մասին, որը մտածելու տեղիք է տալիս. Արդեօք ի՞նչն է Ձեր՝ բժշկի, բնապաշտի վերջին տարիների ձգտման պատճառը, միտումը, Ձեր գրուածքներում հարցերը անպայման կապել մարդու, Աստծոյ, կրօնի և եկեղեցու յարաբերութիւնների հետ: Դա ինձ, մեղմ ասած,զուարճալի է թում, ինչպէս որ զուարճալի են թում այն տեսարանները, երբ Փութինը, Ռոպերթ Քոչարեանը և Սերժ Սարգսեանը եկեղեցիներում մումեր են վառում և ջերմեռանդ խաչակնքում:

Յարգանքներով՝

Մամուէլ Յովասափեան

Պերլին, Յունիս 2012

Ծանր հարուած Սերժ Սարգսեանին

Յունիս 28-ին, յայտնի է դարձել մի բաւական ուշագրաւ տեղեկութիւն: Եւրամիութեան ընդլայնման և հարեւանութեան գործերի յանձնակատար Շտեֆան Ֆիլլէի մամուլի խօսնակը «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնել է, որ Եւրամիութիւնը յետաձգել է



Հայաստանի համար նուիրատուների համաժողովը, և այն կը լինի նախագահական ընտրութիւններից յետոյ: Ընդ որում, Եւրամիութիւնը նաեւ պայման է դրել, որ Հայաստանը դրա համար պէտք է ուժեղացնի կոռուպցիայի դէմ պայքարը, Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ջանքերն ու գլխաւորը՝ լուծի այն ընտրական խնդիրները, որ կային խորհրդարանական ընտրութիւնների ընթացքում:

Սա բաւական ուշագրաւ տեղեկութիւն է՝ նկատի ունենալով, որ նուիրատուների համաժողովը տեղի էր ունենալու խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: Տեղեկութիւնը առաւել ուշագրաւ է դառնում այն համատեքստում, որ այն հնչում է Սերժ Սարգսեանի՝ Պրիւսելում գտնուելու օրերին: Այդպիսով, եթէ այդ տեղեկութիւնը նաեւ համադրում ենք մի քանի օր առաջ Հայաստանի վերաբերեալ հրապարակուած զեկոյցի հետ, որի հեղինակը Միջազգային ճգնաժամային խմբի փորձագէտներն էին, ապա պարզ է դառնում, որ խորհրդարանական ընտրութիւններից առաջ և անմիջապէս յետոյ Սերժ Սարգսեանին շոյալօրէն գովաբանող և խրախուսող Արեւմուտքը ներկայումս անցել է պտուտակները ձգելուն, և տոնորների համաժողովի յետաձգումը, այն էլ՝ Սերժ Սարգսեանի պրիւսելեան այցի օրերին, բաւական նշանակալի հարուած է Սարգսեանին:

Ըստ էութեան ստացւում է այնպէս, որ Պրիւսելում Սերժ Սարգսեանից սպասել են որոշակի հաւաստիացումներ կամ երաշխիքներ, որոնք, սակայն, չեն եղել, և Եւրամիութիւնը յայտարարել է նուիրատուների համաժողովը յետաձգելու որոշման մասին: Հետաքրքիր է, իսկ Սերժ Սարգսեանն ինքը սպասել է արդեօք նման շրջադարձի: Այստեղ իրավիճակը բաւական նուրբ է՝ այն իմաստով, որ Հայաստանի իշխանութիւնը զարմանալիօրէն քիչ էր խօսում նուիրատուների հնարաւոր հաւաքի մասին, քիչ էր տիրաժաւորում այն:

Ըստ ամենայնի, պաշտօնական Երեւանի առաջ հենց սկզբից էլ դրուած են եղել ներքին կեանքում փոփոխութիւնների յստակ պահանջներ՝ որպէս նուիրատուների հաւաքի նախապայման, սակայն Երեւանը չի տիրաժաւորել այդ հաւաքի հեռանկարը՝ քաջ գիտակցելով, որ ի զօրու չի լինելու կատարել այդ պահանջները: Միւս կողմից, սակայն, ակնյայտ է, որ Եւրամիութեան ֆինանսական օժանդակութիւնը Հայաստանի տնտեսութեան համար կենսական անհրաժեշտութիւն է՝ երկրում խորացող սոցիալ-տնտեսական լարուածութեան և արտագաղթի ֆոնին: Առանց դրա Հայաստանի իշխանութիւնը հազիւ թէ կարողանայ այդ հարցում որոշակի բեկում մտցնել, իսկ առանց այդ բեկման էլ Սերժ Սարգսեանի համար բաւական դժուար կը լինի նպաստաւոր մթնոլորտ ապահովել նախագահական ընտրութիւնների համար: Առաւել էւս, որ այդ ընտրութիւնները տեղի են ունենալու Փետրուարին՝ ձմեռային խստաշունչ ամիս, երբ սոցիալական դժուարութիւնները

հասարակութեան համար էլ աւելի ծանր հոգեբանական ազդեցութիւն են թողնում, և իշխանութեանը հարկ կը լինի էլ աւելի մեծ միջոցներ ներդնել այդ ազդեցութիւնը գոնէ ժամանակաւորապէս չէզոքացնելու համար:

Յովհան Մանդակունի

«Ամէնէն կարեւորը ժողովուրդիդ հասկնալն է եւ իրենցմէ մէկը ըլլալն է»



Մոնթէին տարելիցն է կրկին, և հերթական անգամ կը փնտռեմ իր պատգամներէն՝ բաժնելու համար զինք սիրող հասարակութեան հետ: Մոնթէին սիրող մարդոց տեսակները շատ են: Երբեմն անոնք կը «համապատասխանեցնեն» իրենց պատմութիւնները իրենց ցանկութեան, որոնք անպայմանօրէն չեն առնչուիր իրականութեան հետ: Առաւել՝ Մոնթէն կը սկսի ընկալուիլ այնպէս՝ ինչպէս տուեալ անհատը կը հաւատայ, որ ան պէտք է ըլլար: Մէկ բան պէտք է

յիշենք, որ երբեմն մեր ամենասիրած անհատներն անգամ կրնան ունենալ բաներ, որ մեզ հարազատ չեն: Սակայն այդ ոչ մէկ ձևով պէտք է նսեմացնէ տուեալ մարդը: Մենք միայն աղաւաղած կ'ըլլանք կերպարը երբ անոր կը վերագրենք բաներ, որոնք ճիշդ չեն: Մոնթէն այդ տեսակ վերաբերմունքը անարգանք կը համարէր, որովհետև կեղծիք է և սուտ:

Վերջին ժամանակները մեր ժողովուրդի ուշադրութիւնը սեւեռած է բաներու վրայ, որոնք ազգային առաջնահերթութիւններու սանդղակին վրայ պէտք չէ որ բարձր տեղ զբաղեցնեն: Իսկ անոնք, որոնք պէտք է այդ սանդղակին վրայ առաջիններէն ըլլան, անուշադրութեան կը մատնուին:

Մօտ տաս օր առաջ տեսայ իմ Երեւանի փլուզման մէկ այլ ապացոյց եւս. Մաշտոցի պողոտայի գոց շուկայի քանդման լուսանկարները, որոնք իրօք յուզիչ էին: Մաշտոցի այգիի փրկութեան համար այնքան ուրախ էինք մենք՝ հին Երեւանի կարօտով ապրող անհատներս: Սակայն քաղաքի քանդման սա անհիւր կարծես կանգնելու նպատակ բնաւ չունի: 1990-ական թուականներուն Վանօ Միրադեղեանին թեթեւ ձեռքով ստորագրուած հարիւրամեայ կամ հինգ հարիւրամեայ վարձակալութեան փաստաթուղթերու կոյտը մեծցաւ ու մեծցաւ անկէ ետք եկող պաշտօնակատարներու ժամանակ եւս: Թէ բարոյական ի՞նչ իրաւունքով այդ տարածքները յանձնուեցան անհատ մարդոց, ես չեմ գիտեր: Միայն գիտեմ, որ այդ մարդոցմէ շատեր հնարաւորութիւն ունէին սեփական տուն կամ հողամաս գնելու, սակայն աչքերնին դրին ժողովուրդի՛ն պատկանող հողի և տիրացան անոր: Այդ տարածքներուն ցուցակը շատ երկար է, ցաւօք: Բազմազանութեան օրուան ցոյցերու մեր հերոսները գուցէ նմա՛ն բաներու մէջ փորձեն իրենց ազգայինի պաշտպանութեան երթերը:

Մոնթէն պիտի պատգամէր

պատգամէր «Երբեք չեմ ըսեր, որ հայ ժողովուրդը որեւէ ուրիշ ժողովուրդէն լաւ է: Ո՛չ, այդ տեսակ բաներ ճիշդ չեն: Այլ նոյնիսկ այդ տեսակ հարց չի դրուիր: Պարզապէս ամէն մէկ ժողովուրդ իր յատկութիւնները ունի և այս յատկութիւններու տեսակները և բազմութիւնն է, որ աշխարհի



մարդկութեան հարստութիւնն է: Իսկ դուն և ես և միւս հայերը, մենք հայ ենք ուրեմն բնական է որ մենք պիտի մեր յատկութիւններուն,

Մեր մշակոյթը ամբողջ մարդկութեան հարստութեան մէկ բաժինն է: Պէտք է պաշտպանենք և զարգացնենք այդ մշակոյթը» (ընդգծումը Մոնթէինն է: Ս.Մ.):

Մենք ամէն մէկս պարտաւոր ենք պահանջելու, որ կարգին երկիր ունենանք, որ մեր երիտասարդները երթան ծառայելու լաւ կազմակերպուած և հոգատար բանակի մը մէջ: Եւ յիշենք, որ լաւ բանակային պայմաններու ապահովումը միայն նախարարի մը ուսերուն դրուած չէ: Նախարար մը հրաշագործ չէ: Եւ եթէ մենք՝ բոլորս չ'աշխատինք այդ ուղղութեամբ, չպահանջենք պետութենէն և միաժամանակ չդաստիարակենք պարկեշտ զաւակներ, այդ զաւակները բանակին մէջ անտանելի պայմաններու տակ պիտի ծառայեն, պիտի փորձեն իրենց ուժերը իրենցմէ տկար ծառայողներուն վրայ և երբեմն նոյնիսկ սպաննեն զանոնք, կատարելով թշնամիին գործը: Մեր խնդիրները մենք բոլորս միասին կրնանք լուծել միայն:

Պարկեշտութիւնն ու պատասխանատուութեան զգացումը Մոնթէին շատ հարազատ էին: Վկայ ներքոբերեալ հատուածը.

«Միայն կրնամ եզրակացնել, որ հակառակ իմ «բարի» նպատակներուս, ես իմ ձախողութիւններովս դաւաճանեցի մեր պայքարին, մեր ժողովուրդին, մեր հայրենիքին եւ իմ ամենամտերիմ ընկերներէս շատերուն: ՀԱՀԳԲ-ը «մաֆիայէն» շատ աւելի գէշ բան մը դարձած էր, բայց նաեւ աւելի թունաւոր, քանի որ «մաֆիան» կը գործէ դրամի անունով, իսկ ՀԱՀԳԲ-ը իր հակամարդկային, հակահայկական եւ հակայեղափոխական գործերը կ'ընէր հայ ժողովուրդի, Հայաստանի եւ մեր յեղափոխութեան անունով: Թէեւ կամքէս անկախ, բայց եւ այնպէս մենատերին բօզը եղայ այս գործին մէջ:

Ուրեմն իմ ուսերուս վրայ շատ ծանր յանցանք կայ: Յանցաւոր եմ, եւ եթէ յանցաւորները պէտք է պատժուին, ինձի համար ոչ մէկ պատիժ բաւական խիստ կ'ըլլայ: Ես նոյնիսկ անկեղծօրէն պատրաստ եմ մահապատիժի, բայց այն պայմանով, որ զիս պատժողը, զիս գնդակահարողը ինձի չափ փորձեր ըրած ըլլայ խնդիրներ լուծելու, պայքարելու, եւ ինձմէ աւելի քիչ յանցանքներ գործած ըլլայ»:

Չեմ վարանիր ըսելու, որ այս տողերուն հեղինակը մեր ժամանակի ամենապարկեշտ, ամենաբարի, ամենաազնիւ, ամենանուիրեալ, ամենաանձնագոհ անհատն է: Չեմ ըսեր անհատներէն մէկը, քանի որ այս յատկութիւնները միաժամանակ ունենալը չափազանց յատուկ բան է՝ մանաւանդ հանրաճանաչ մարդու համար: Մոնթէին ճանչցող մարդիկ կը վկայեն, որ ան այս բոլոր յատկանիշները ընդգծուած ձեւով ունէր: Մենք բոլորս ունինք տկարութիւններ, որոնք ժամանակ առ ժամանակ ի յայտ կու գան նոյնիսկ երբ չենք ուզեր մենք մեզի անգամ խոստովանիլ անոնց գոյութիւնը: Մոնթէն քաջաբար կը դիմակայէր ոչ միայն իր թշնամիները, այլ նաեւ իր սխալներն ու յանցանքները: Երբեմն այդ բացթողումներուն ամենաանողոք դատաւորը ինք կ'ըլլար, համոզուած՝ որ եթէ չընդունէր զանոնք, չէր կրնար սրբագրել: Առաւել՝ երբ ժողովուրդին առընչուող հարց կար, ինք պարտական էր ժողովուրդին բացատրութիւն տալու և հաշուետու ըլլալու: «Կը ծառայեմ Հայաստանի հանրապետութեան» կ'ենթադրեմ կը նշանակէ կը ծառայեմ հայ ժողովուրդին: Մոնթէին համար ասոնք երդման արարողութեան մը ընթացքին արտասանուած խօսքեր չէին լոկ: Այս օրերուն բոլորս շատ դիւրութեամբ կը մոռնանք, թէ ո՞վ պիտի ծառայէ որո՞ւ:



Պետական ռեւէ պաշտօնեայ, անկախ ունեցած աստիճանէն, իր դերին մէջ կը գտնուի ծառայելու համար ժողովուրդին, ոչ թէ ժողովուրդը ծառայեցնելու իր շահերուն:

Մոնթէն կը հաւատայ, որ «ամէնէն կարելոր բանը ժողովուրդիդ հասկնալն է եւ իրենցմէ մէկը ըլլալն է: Միայն այս ձեւով կարող ես շիտակ գործել իրենց համար»:

Հայրենասիրութեան նման օրինակ ծառայող մարդու հետ ապրած ըլլալով ինծի համար չափազանց դժուար է հասկնալ մեր այքերուն առջեւ պատմական յուշարձան քանդող, սին ու ցոփ փառասիրութեան համար ազգակիցը փողոց նետելու գնով՝ պատմական քաղաք աւերող, քաղաքին քիչ մը շունչ տուող զբօսայգիները փլուզող ու ծառերը հատող հայրենասիրութիւնը: Բոլորս կ'ուզենք մեր քաղաքը գեղեցիկ ու մաքուր ըլլայ, բայց նաեւ իր նկարագիրը պահել: Թող վերանորոգուէին այդ հին տուններն ու փողոցները: Երկրաշարժային թէժ գօտիի վրայ բազմաթիւ խախտումներով շինուած այդ բարձրայարկ շէնքերը ինչի՞ կը ծառայեն, բացի քանի մը հարուստներու գրպանները քիչ մը աւելի ուռեցնելէ: Իր հայրենիքն ու ժողովուրդը սիրող մարդը նման «հայրենասիրական քալերով» չ'արտայայտուիր: Ինքնիր ժողովուրդին կամքը անարգող մարդը յարգանքի արժանի չի՛ կրնար ըլլալ: Իսկ այս անպատժելիութիւնը գլուխը առած կ'երթայ...

Սեդա Գարանեան-Մելքոնեան

ՈՃՐԱՊԱՏՈՒՄ «ՍԵՐԻԱԼ»ՆԵՐՈՒ ՅԱՂԹԱՐՇԱԻԸ

Դժբախտաբար, Քրիստոնեայ Հայաստանի մէջ Քրիստոնէութիւնն ու բարոյականութիւնը մէկդի ծրարած պետական այրերու ու վարչամեքենայի կենցաղն ու գործելակերպն է, որ սկսած է օրինականացնել անբարոյականութիւնը: Ո՛վ պիտի հաշուէ Երեւանի «խումարխանա»ներն ու ամէն ինչ վաճառքի դրած զբօսավայրերը: Ու պիտի չգարմանա լ... երբ հեռուստացոյցի վրայ հարց արծարծուի, ու հասնի պատասխանը. «Երեւանի մէջ “սթրիփթիզ”ի արուեստը դեռ շատ ետ է մնում Եւրոպայից, պէտք է զարգացնել եւ հասնիլ Եւրոպային»:



Մեպտեմբեր 2004 Ե.Հ.Ք.

Հեռուստակայաններու եթեր սփռած յայտագիրներու գումարը լուսապատճենն է անոնց տէրերու ընկերային, հասարակական, մշակութային, քաղաքական ու բարոյական մտաշխարհին, բայց է՛ւ հետապնդած բազմապիսի նպատակներուն:

Հեռուստակայանները նաեւ «դպրոց»ներ են, որոնք հնարաւոր բոլոր միջոցներով կը փորձեն առաւելագոյն թիւով եւ առաւելագոյն ժամերով «աշակերտ»ներ եւ «ուսանող»ներ նստեցնել իրենց պատասխաններուն դիմաց, ի վերջոյ զանոնք ստրկացնելու իրենց ճաշակին, արուեստի ըմբռնումին, մարդկային բարոյական արժեչափերուն, ընտանեկան վարքի հասկացողութեան, եւ անշուշտ... սորվեցնելու թէ ինչպէս կարելի է բրտութեամբ, դաւով, ոճիրով, եւ ստորադաստ կամ հակառակորդը անասունի տեղ դնելով՝ լուծել կեանքի բոլոր հարցերը:



Մեր այս վերջին տողերուն համար տխուր օրինակ ունինք հայաստանեան հեռուստակայաններէն սփռուած սկիզբ ունեցող՝ վերջ չունեցող «սերիալ»ները... որոնք ոճրապատումներ են միայն, գազանային կիրքերու, բռնարարքներու, դաւի ու բազմերես դաւաճանութիւններու, կողոպտուի ու չարաշահութեանց ցուցահանդէս մը, եւ այս բոլորը գրեհիկ լեզուով մը, որ բերուած է գրիհներէն ու կը տեղաբաշխուի տուններէն ներս:

Ու եթէ կարելի չէ բառերով վերարտադրել պատկերը բռնարարքներուն ու ոճիրներուն, կարելի է վերարտադրել որոշ նախադասութիւններ, շատէն շատ քիչը, որոնք «հերոս»ներու խօսակցութեան հիմնական բառապաշարին մաս կը կազմեն. «Կը սատկեցնեմ քեզ...» (դուք պիտի չկարենաք հաշուել թէ իւրաքանչիւր կէս ժամի ընթացքին քանի անգամ կը գործածուի այս խօսքը): Եթէ քիչ մը բարձրանայ զայրոյթի աստիճանը՝ «Գերդաստանիդ վերջ կը տամ...», «Անասուն, բոլորդ կայրեմ...», «Սաղին կը կիւլլեմ... ծուխը դրանց գանկից դուրս կը գայ...», «Կը մորթեմ քեզ»:

Եւ խօսքը կը դրուի գործի: Տեսե՞ր էք «սերիալ»ներէն մէկուն «հերոս»ը... կոչեցեալ՝ «Լորտ», որ իր ձեռքին տակ ունի ոճրագործներու խմբակ մը, որոնց ինք պիտի հրահանգէ՝ «երկինքէն իջեցնել», «գետնի տակէն հանել» իր հակառակորդը եւ դրկել... սատանի ծոցը:

Ու քանի՞ «սերիալ»ներու մէջ քանի «Լորտ»եր:

Եւ այս բոլորը՝ շքեղագոյն մենաստուներու, նորագոյն տիպի ինքնաշարժներու, խմիչքի ու բախտախաղի սրահներու, չարչարանքի նկուղներու աշխարհի մը մէջ:

Ու պատահական չէ որ միայն վերջերս Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան կըսէր. «Մեր “սերիալ”ները դիտողները պիտի կարծեն որ աշխարհի մաֆիոզներու կեդրոնը Հայաստանն է»:

Բայց «սերիալ»ները բան մը չե՞ն պատմեր Հայաստանի ներկայ իրականութեան մասին:

Եւ այս «սերիալ»ներու առաւօտ գիշեր եթեր սփռուելէ ետք, ինչո՞ւ է զարմանքը թէ նոր սերունդը Հայաստանի մէջ ի՛նչ կենցաղ կորդեգրէ: Ամիս մը առաջ էր, երբ հայրենի բոլոր հեռուստակայաններէն ապշանքով ցուցադրեցին պատանի, դպրոցական աղջիկներու ծեծուրբտուքը փողոցի մէջ՝ համեմուած գրեհիկ հայիոյանքներով... ու եղածին պատճառներու փնտռութիւն մէջ (զեթ ինչ մենք ակնդիր էինք) ոչ ոք նշեց թէ հեռուստակայաններու «բարիք»ը մինչեւ ուր հասեր է...

Եւ հոս հետաքրքրական է մէջբերել վկայութիւն մը, որ 29 Յունիսի, 2012 թ. կայացած հարցազրոյցի մը ընթացքին կու գայ Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի Ազգային Յանձնաժողովի անդամ Յարութիւն Յարութիւնեանի բերնով: Ան կըսէ. Ստոյգ գիտեմ որ հեռուստակայաններէն մէկուն տէրը իր տան մէջ կանջատէ իր կայանի ալիքը, որպէսզի իր զաւակները «չփչանան» «սերիալ»ներու հասցուցած «բարիք»էն:

Հարցումը. իր զաւակներուն փրկութիւնը մտածող տէրը երբեւիցէ կը մտածէ՞ իր տան պատերէն դուրս ապրող տասնեակ հազարաւոր մանուկներու ու պատանիներու մասին: Թէ հոն՝ «շուկան կը թելադրէ»:

2011 թ. Յունիսին, Ա.Մ. Նահանգներու գերագոյն դատարանը, հետազօտութեանց արդիւնք, ընդունեց որ համացանցի տեսաերիզի խաղերը «ընկերային հարց» են, իսկ այս տարուան Մայիսին, բրիտանացի բարձրաստիճան օրէնսդիր մը թելադրեց յաւելեալ հսկողութիւն



բանեցնել համացանցի տեսաերիզի խաղերուն բովանդակութեան, հետեւելով Չինաստանի եւ Հարաւային Քորեայի օրինակին («Նիուզուիք», 18 Յունիսի, 2012, էջ 6):

Կը նշանակէ հսկողութիւնը միայն «տիրոջ» տան մէջ պիտի չկատարուի, այլ ուղղակի՝ հեռուստակայաններուն:

Եւ հոս... մտահոգութեան միւս երեսը: Հարց պիտի չտա՞լ որ երբ պաշտօնական վիճակագրութեամբ Հայաստանի ժողովուրդին 35.5 տոկոսը կապրի թշուառութեան մէջ (վիճակագրական այլ տուեալներ կը խօսին 50 տոկոսի մասին), երբ ժողովուրդին 39 տոկոսը, եթէ հնարաւորութիւն ունենայ, այսօր կը հեռանայ երկրէն, երբ գիւղերը կը պարպուին ու կը ծերանան, այս բոլորը վաղուան մասին մտահոգութիւն եւ այսօրուան համար նիւթ չէ՞ն հայթայթեր որեւէ հեռուստակայանի տիրոջ, ուրիշ ֆիլմարտադրիչի..., որոնք ուրիշ մէկէ աւելի լաւ գիտեն որ տագնապը գեղարուեստական հարթակ բարձրացնելը շատ աւելի տպաւորութիւն կը գործէ եւ զգօնութեան կը դրդէ ժողովուրդը, քան լրատութեան միջոցով փոխանցուածը, կամ մէկ-մէկ հարցազրոյցներու ընթացքին արձարծուած բանավէճը...

Բարեբախտաբար հեռուստակայաններէն մէկը՝ «Երկիր», բաւական լուրջ մօտեցում ունի հարցին, հերթական վաւերագրական ֆիլմերով, առանց ճոռոմաբանութեան կու տայ գիւղերուն տխուր պատկերը: Յիշենք մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցի ծննդավայր գիւղը՝ Բոնակոթը, որուն դպրոցը եթէ տարիներ առաջ 700 աշակերտ ուներ, այսօր միայն 300 աշակերտ ունի: Երիտասարդները անընդհատ կ'արտագաղթեն, ու գիւղը կը ծերանայ: Բայց միայն Բոնակոթը՝:

Իրաւ, կա՞յ տագնապը՝ հարցը համազգային ուշադրութեան կեդրոն բերելու: Եթէ կայ, կա՞յ աւելի լաւ միջոց քան գեղարուեստական ֆիլմերով զայն հրապարակ բերելը: Եթէ Մեծ Եղեռնի բռնագաղթի օրերուն նուիրուած վաւերագրական կամ գեղարուեստական շարժանկար մը տարուած անչափ մեծ յաղթանակ կը նշանակէ..., ապա՝ մեր օրերու արտագաղթ – «բռնագաղթ»ը ո՞վ հարթակ պիտի հանէ...:

Բայց հարց պիտի տայ, քաղաքամայր Երեւանը խժրող դրամատէրերը, որոնք զինովցած են Երեւանի մէջ «փոքրիկ Իտալիաներ» (աւելի ողբա-երգիծական բան դժուար է լսել) կառուցանելով, օր մը պիտի մտածեն պարպուող ու ծերացող (իմա՝ մեռնող) հայկական գիւղերու ճակատագրին մասին:

Եւրոպայի հետ «ինտերագցիան» (մեր օրերուն Հայաստանը կախարդող բառը) իրագործելու հեքոտ վազքին մէջ, որպէս թէ եւրոպական տարագով ժամանակակից ըլլալու հիւանդագին ցանկատեսութեամբ, ազգային արժէքները մոռացութեան մատնելու կեղծ ազատախոհական եզրերով ամեն ինչ շուկայ իջեցնելու դրամատիրական չարամիտ փորձը արդէն սկսած է աղետ սփռել Հայաստանի կենցաղային, մշակութային ու բարոյական ճակատներուն վրայ:

Կրկնենք: Ինչ որ մտահոգիչ է, երկիրն ու ժողովուրդը լուրջ մարտահրաւերներու դիմաց դրած հարցերուն՝ զիտութեամբ թէ անզիտութեամբ (՝) մոռացութեան տրուիլն է՝ «ինտերագցիոն»ով զինով՝ հեռուստակայաններու եւ «սերիալ»ներու տէր նոր հայերուն կողմէ:

Տագնապը նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ: Մեր ակնարկը վերջերս Պէյրութի մէջ հրատարակուած «Անթոլոգիա 18-33», հայրենի «արդի հայ արձակ»ին նուիրուած հատորի մասին է, որ կ'ընդգրկէ 22-35 տարիքը բոլորած տասներեք հեղինակներու երեսուն հինգ ստեղծագործութիւնները: Ըսենք որ հոն «պատմուածք»ներ կան, որոնք շատ լուրջ



պատճառներով լոյս տեսնելու իրաւունք չունին: Բայց մեր մտահոգութիւնը այլ է: Երկու հարիւր յիսուն էջերու վրայ տարածուած երեսուն հինգ պատմուածքներուն մէջ հողի ու ժողովուրդի ոչ մէկ տազնապ, ոչ մէկ սրտցաւութիւն ծերացող զիւղերու եւ արտագաղթի մասին, ոչ մէկ մտավախութիւն Արցախեան ճգնաժամի ու սահմանին սպառնացող նոր ճակատումներու մասին, ու դեռ ոչ մէկ ակնարկ թշուառութեան մէջ տապալակող ժողովուրդի մէկ լայն շերտին մասին: Տեղ մը միայն, քանի մը տող ակնարկ՝ դիմաւորող Երեւանի մասին: Պատմուածքներու «ես» հերոսները կապրին զիրենք օղակող նեղ շրջապատերու մէջ, իրենց փոքր ու տատանող սերերով, իրենց սեռային տազնապներով ու հիւանդագին ցանկատեսութիւններու հետապնդումով, ուր օղիի շիշերը բացակայ չեն, ոչ ալ՝ ծեծուրրտութիւնները:

Վերադառնանք հեռուստացոյցին, ու հոն՝ մեծ գովազդի արժանացած «Ծիծաղի Ժամեր»ուն: Չենք խօսիր ներկայացումներու «թատերական» այլանդակութիւններու մասին, որոնք մինչեւ իսկ կը զիջին միմուսութեան: «Ծիծաղի Ժամեր»ուն մէջ, ժամանակի ընթացքին թափ առաւ... ժողովրդային տարագումով՝ «մէջքէն վար» «կատակաբանութիւնը», ուր գռեհկութիւնն ու յիմարաբանութիւնը չափ ու սահման չունին արդէն: Նշենք, իբր թէ շատ անմեղ նետուած խօսք մը՝ «Գիտես չէ՞, մեր երեխան էջ ախպօրս է քաշեր...»: Ու յանկարծ սրահը կը պայթի ծափով ու խնդուքով: Հանդիսատեսներէն ոմանք «խնդալէն կը մարին» ու մարդ պէտք է որ յանկարծ աթոռներէն վար չսահին: Բայց ցաւալին, այդ հանդիսատեսներու առաջին շարքին վրայ, իրենց ներկայութեամբ գովազդողի պաշտօն ստանձնած ծանօթ երգիչներ ու դերասաններ..., որոնք իրենց խանդավառութեամբ կը դեկավարեն սրահի ցնծութիւնը: Ու անհասկնալի այն՝ որ ներկաներուն մէջ, երբեմն, պատանեկան տարիք ոտք չդրած մանչեր եւ աղջիկներ: Եւ միակ միխթարանքը՝ սրահին մէջ մէկ քանի անհատներ, որոնց դէմքին ժպիտ չուրուագծուիր...: Թէ անոնք ինչ կը մտածեն այդ պահուն, այդ արդէն այլ հարց է:

Հիմա արդէն ժամանակ է վերջ տալու հեքիաթին, թէ՛ «ժողովուրդը սա է պահանջում»: Իր հողին ու ժողովուրդին դիմագիծի անաղարտ պահպանութեամբ մտահոգ, տաղանդաշատ ու հայրենանուէր երգահան Սասուն Պասկեւիչեան բարձրաձայն կը պատասխանէ. «Ո՞վ ըսաւ որ ժողովուրդը սա է պահանջում»:

Իրաւ, ո՞վ ըսաւ: Ըսենք թէ ով: Ոչ ոքի գաղտնիք է թէ շուկայական վայրագ դրամատիրութիւնը գիտէ իր ծախսած միլիոններու հնարքներով «սորվեցնել» ժողովուրդին թէ ինչ պէտք է «պահանջէ», եւ ապա ինք... գոհաբերող «հոգատարութեամբ» կը մատակարարէ «ժողովուրդին պահանջածը»:

Հերիք եղաւ, պօլ եղաւ: Ոչ ոք իրաւունք ունի իր գրպանը պարարտացնելու համար ժողովուրդ ու մշակոյթ այլասերելու:

Վերջացնելու համար ըսենք. Հայաստանի մշակութային կեանքի պատասխանատուներն ու հեռուստակայաններու տէրերը, որոնք ամէն ճիգ կը թափեն հասնելու է՛ւ Սփիւռքին..., այնտեղէն նաեւ իրենց համար եկամտաբեր գովազդ ապահովելու ակնկալութեամբ, պիտի իմանան որ Սփիւռքը, մինչեւ իրենց տեղ հասնիլը, մինչեւ կոկորդ կշտացած էր միջազգային հեռուստակայաններէն եթեր հանուած վայրագութիւններով, սեռային

այլանդակութիւններով ու գոեհկարանութիւններով: Կը նշանակէ՝ իրենց «սերիալ»ներն ու «ծիծաղի ժամեր»ը զարմացնելու ոչինչ ունին, զգուեցնելու՝ շատ բան:

2 Յուլիսի, 2012

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Գրական-Մշակութային

Անանիա Շիրակացիի 1400-ամեայ Յոբելեանին Առիթով Համացանցային Կայքէջ Ստեղծուած Է



Անանիա Շիրակացիի 1400-ամեայ յոբելեանին առիթով Հայկական աստղագիտական ընկերութեան կողմէ ստեղծուած է Շիրակացիի նուիրուած համացանցային կայքէջ (<http://aras.am/Shirakatsi/index.html>), ուր առաւել լիարժէք տեղեկութիւններ տրուած են Շիրակացիի կեանքին եւ գործունէութեան, հետազօտութիւններու

բնագաւառներուն, աշխատութիւններուն, անոր նուիրուած գրականութեան մասին:

Այս մասին կը տեղեկացնէ Հայկական աստղագիտական ընկերութիւնը:

Յայտնի է, Շիրակացիի յոբելեանը ներառուած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի 2012 թուականի նշանակալից տարեդարձներու շարքին եւ Հայաստանի մէջ կը նշուի կառավարական մակարդակով՝ շարք մը ձեռնարկներու տեսքով: Անանիա Շիրակացի (612-685) հայ միջնադարեան խոշորագոյն գիտնականն է. փիլիսոփայ, մաթեմատիկոս, տիեզերագէտ, տոմարագէտ, ճշգրիտ գիտութիւններու եւ բնագիտութեան հիմնադիրը Հայաստանի մէջ:

Անոր գիտական ժառանգութիւնը զգալի ազդեցութիւն ունեցած է հայ բնագիտական մտքի յետագայ զարգացման վրայ: ՀԱԸ կայքէջին մէջ հաւաքուած են եւ ապագային կ'աւելնան նաեւ Շիրակացիին առնչուող զանազան տեղեկութիւններ եւ նիւթեր, տրուած են արտաքին յղումներ՝ Շիրակացիի անուան Լուսնի խառնարանին, համալսարանին, ճեմարանին, մետալի, յուշադրամի եւ այլ կայքէջերուն մասին:

Տեղեկացնենք, որ ներկայացուած է յոբելեանական ձեռնարկներուն ցանկը, որոնց շարքին կարելորագոյններն են՝ ՀՀ ԳԱԱ Բիւրականի աստղադիտարանին մէջ Սեպտեմբեր 15-23-ին կազմակերպուող երիտասարդ աստղագէտներու միջազգային դպրոցը եւ Սեպտեմբեր 25-28-ին նախատեսուող «Աստղագիտական ժառանգութիւնը ազգային մշակոյթին մէջ» թեմայով միջազգային պատմա-աստղագիտական գիտաժողովը:

Տարուան ընթացքին պիտի իրականացուին Հայաստանի պատմա-աստղագիտական ժառանգութեան

ուսումնասիրութիւն եւ համակարգում.

համապատասխանաբար առանձին էջ նուիրուած է այդ բնագաւառին, ուր ներկայացուած են տեղեկութիւններ հնագոյն աստղադիտարաններու, աստղագիտական բնոյթի ժայռապատկերներու, հնագոյն օրացոյցի, միջնադարեան աստղագիտական քարտեզներու, հայ միջնադարեան աստղագետներու եւ այլնի մասին: Բերուած է միջազգային կազմակերպութիւններու ցանկը, որոնք կ'առնչուին պատմա-աստղագիտական հարցերուն եւ աստղագիտական ժառանգութեան:

Կայքէջը կը գործէ հայերէն եւ անգլերէն տարբերակներով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՒՐԱՑԻԿՆԵՐ «Աղերս առ Աստուած» շարքից



Աստուած իմ, կանխի՛ր, աղաչում եմ քեզ,
Այս անդէմ-անդուռ, այս բաց օրերի
Կաղապարագուրկ կրքերը գժուած:
Ների՛ր ինձ, Տէր իմ, բայց պաղատում եմ,
Մանձիր հնարքով քո գէ՛րբնական
Այս համատարած, այս խժռող-լափող
Կիրքն ուզուորութեան՝ ընդերքից ժայթքող
Հրաբուխի նման՝ ամէն ինչ լափող,

Մուրացկանութիւնն այն փրկիր
Անարտօնելի, պատկառանքից գուրկ,
Որ շատ-շատերի ներսը քողարկում
Եւ շինելու տեղ քանդում է յաճախ՝
Քաղցկեղի նման այն տարածական,
Որից փրկութեան էլ հնար չկայ:
Ճիւղաւորուե՛լ է ուզուորութիւնն այդ.
Մուրու՛մ եմ, ուզու՛մ աջ ու ահեակից՝
Ուսեալ ու անկիրթ, մանուկ, պատանի,
Կին ու տղամարդ, միջին ինչ-որ սեռ,
(մեղա՛ քեզ, Տէր իմ)
Մուրացկանասանդուղք է ասես



Աշխարհը դարձել,
Ներքեւից սկսում, աստիճանաբար
Վերել են ելնում,
Բայց վերելում էլ շարունակում են
Բնագործ մուրալ,
Պարզապէս ձեն է փոխում մուրալու,
Իհարկէ նաեւ տեղը մուրալու,
Ամենակարեւորը՝ և հասցէատէրը:
Բայց մէկ է, ձեռք-փաստաթղթի վրայ
Մուրացիկի դրոշմ-խարանն է դրում
(սակայն, ո՛վ զարմանք, դատարկուող ներսում
փայլատակում է Լոյսը գալիքի)...

...Ես երկիրդում եմ, գիտե՛ս, Աստուած իմ,
Բայց ոչ ներքեւից վերել բարձրացող
Մուրացիկների ա՛յս խմբի համար
(նրանք ճարպիկ են, և, ինչպէս տեսանք,
«լուսաւորուած» են Լոյսով գալիքի)
Ես վախենում եմ այս գիծ օրերում
Իրենց արարիչ ձեռքերը երկու
Իրենց մշտապէս բա՛ց սիրտն ու հոգին
Ուղեղն անդադրում, Միտքը Լուսաւոր
Աշխարհին պարզած այն արհամարհուած
«Մուրացիկների» լայն զանգուածի համար,
Որ պատիւ-յարգանք, գուր ռ կարեկցանք,
Գնահատական ու սէր է մուրում
Մուրացիկներից... վե՛րնատեանների,
(և, ափսոս, աւա՛ղ, դառնացող ներսում
խսպառ է խամրում Յոյսը գալիքի):

....Աստուա՛ծ իմ, գուցէ մեղա՞ պիտի գամ
Մուրացիկներին մուրացիկ կոչելու համար:
Բայց նախեւառաջ, ես սարսափում եմ,
Գիտե՛ս, Աստուած իմ....

Մանձի՛ր, խնդրում եմ եւ սարսափը իմ՝

Փրկիր աշխարհը իրարից հեռու,

Բայց անտես թելով իրարու կապուած

Ժամանակակից այս մուրացիկների

Վայ լաբիրինթոսից:

ԱՆԱՀԻՏ ՊՈՍՏԱՆՃԵԱՆ

21.05.2004,Թիֆլիս

«Բանաստեղծի Սիրտը» Նամակներում

(Վահէ-Վահեանի՝ Արամ Սեփեթճեանի կազմած նամականին)

Քնարիկ Աբրահամեան



Հայաստանի Գրողների Միութեան Կլոր սրահում վերջերս կայացաւ Վահէ-Վահեանի «Բանաստեղծի սիրտը» խորագրով նամականու շտրհանդէսը, որը օրերս հրատարակուել է Պէրյութում՝ ճանաչուած արձակագիր, խմբագիր, ընկերային գործիչ, Թէքէեան Մշակութային Միութեան Լիբանանեան Շրջանակի ատենապետ Արամ Սեփեթճեանի ջանքերով: Վերջինս մասնակցում էր Գրողների Համահայկական 6-րդ համաժողովին, եւ ինչպէս նշեց հանդիսավար, բանասիրական գիտութիւնների դոկտոր, Պրօֆ. Սուրէն Դանիէլեանը, ձեռնունայն չէր եկել Երեւան:

Հանդիսութիւնը բացման խօսքով պատուեց Հայաստանի Գրողների Միութեան Նախագահ Լեւոն Անանեանը, որն ընդգծեց լիբանանահայ աւագ սերնդի անդուլ ջանքը՝ Սփիւռքի դասական շրջանը իր մեծերով, նրանց բազմապիսի խորհուրդներով ու դասերով նորօրեայ ժամանակներին կապելու գործում: Վերնագրից բխում է Ա. Սեփեթճեանի գլխաւոր պատգամը. սա ոչ միայն Վահէ-Վահեանի սիրտն է, որ կտակում է մեզ, այլեւ անցեալ դարակէսի սփիւռքահայ գրականութեան շունչն է, որ հասնում է մեր օրերը՝ նոյն անաղարտութեամբ, նոյն մաքրութեամբ, ինչպիսին բանաստեղծի երագն է:

Լ. Անանեանը Ա. Սեփեթճեանին յանձնեց ՀՀ Սփիւռքի Նախարար Տիկին Հրանոյշ Յակոբեանի ուղերձը եւ նախարարութեան «Ուիլեամ Սարոյեան» յուշամետալը, որին նա արժանացել է գրական վաստակի համար: Հեղինակն ստացաւ նաեւ ՀԳՄ լիիրաւ անդամի կարգավիճակ:

Բանախօս Ս. Դանիէլեանը հանգամանալից բնութագրեց Վահէ-Վահեանի բանաստեղծութիւնը՝ իբրեւ անցեալ դարակէսի քնարերգութեան բարձրագոյն արտայայտութիւն, իբրեւ թէքէեանական դպրոցի արդիւնաւոր շարունակականութիւն:



Նամականու մէջ տողանցում են Սփիւռքի գրականութեան երեւելի բոլոր դէմքերը, որոնց գրոյցներից յառնում է տազնապի, յոյսի, առօրեայի հաւաքական զգացողութիւնը:

Մասնաւորելով իր խօսքը՝ նա կարծիք յայտնեց, որ եթէ Վ. Թէքէեանը շարունակում էր Մշակութային Հայաստանի նորագութիւնը՝ ածանցուած Տէրեանից, Շուշանեանից եւ միւսներից մինչեւ Մուշեղ Իշխան, ապա Վահէ-Վահեանը, հակառակ քնարական խոր ներծծուածութեան, փորձեց մի քայլ առաջ գնալ՝ իր քերթուածներում երեւան բերելով առարկայադիր Հայաստանը՝ որպէս «յարալէզներու դաւաճանութեան» իմաստափոխութիւն, որպէս «Յարալէզներու հաշտութիւն», քանի որ «Անի»ի հոչակաւոր խմբագիրը դարձաւ առաջիններից մէկը, որն ուղիղ երկխօսութիւն սկսեց հայրենի ափերի հետ: Քաջ գիտէք, թէ ինչ աշխատատար է նամականի պատրաստելը: Մեր առջեւ գրողն է, ժամանակի ուխտաւորը: Ա. Մեփեթճեանն այս գրքի վրայ կարող էր աշխատել տասնեակ տարիներ, սակայն գիրքը արագ հրապարակ իջաւ: Կարծում ենք, պատճառն այն է, որ Վահէ-Վահեանը տասնեակ տարիներ եղել է Ա. Մեփեթճեանի կենսագրութեան հարուստ մէկ մասը, էպպէս նպաստել գրողի ծննդին: Ամենից կարելորդ գիտական անձանձիր աշխատանքն է: Պատմուածագիր Արամ Մեփեթճեանն այստեղ մեզ ներկայանում է իբրեւ հմուտ բանասէր: Ա. Մեփեթճեանը միշտ ներկայութիւն է եղել Հայաստանում, թէպէտ մեզ չի շփացրել յաճախակի այցերով: Բնոյթով աշխոյժ մարդ՝ այս մի քանի օրերին հասցրեց զարմացնել կենսասիրութեամբ, մասնակցել է համաժողովի աշխատանքներին, տարաբնոյթ հանդիսութիւնների, տեսակցել Վեհափառ Տիրոջ հետ, եղել Երեւանի թիւ 179 դպրոցում արեւմտահայ բանաստեղծներին նուիրուած հանդէսին: Չորս տարի է նա խրախուսում է



մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանողների գրական-ստեղծագործական աշխատանքները:

«Ահա թէ ինչու,- յայտարարեց Ս. Դանիէլեանը,- Խ. Աբովեանի ան. Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի ռեկտոր, Փրոֆ. Ռուբէն Միրզախանեանը համալսարանի 90 ամեակի յոբելէնական շրջանակներում Ա. Մեփեթճեանին արժանացրել է «Մանկավարժական

Համալսարան» յուշամետալի, որը ռեկտորի անունից յանձնում են Ձեզ»:

Սլաւոնական Համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնի վարիչ, բանասիրական գիտութիւնների դոկտոր Ազատ Եղիազարեանն ասաց, որ երկու օր առաջ ստացած գրքի արժանիքների եւ թերութիւնների մասին դժուարանում է խօսել, սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ երեւան են հանուում ոչ միայն սփիւռքահայ գրողական միջավայրը, այլեւ հայաստանեան խոր կապերը:


Երեւանի Պետական Համալսարանի հայ նորագոյն գրականութեան ամբիոնի վարիչ, Փրոֆ. Վազգէն Գաբրիէլեանը նոյնիսկ համեմատական աշխատանք կատարելու հնարաւորութիւն է ունեցել՝ կապուած Վահան Թէքէեանի, Վահէ-Վահեանի եւ Շահան Շահնուրի նամակների հետ: «Վահէ-Վահեանը գրականութեան եւ բանաստեղծութեան մէջ էր, ինչպէս Վահան Թէքէեանը: Նա իր «Անի»ով կանգնած էր Անդրանիկ Օստուկեանի «Նայիրի»ի կողքին: Վահէ-Վահեանը համեմատաբար քիչ գրքեր է հրատարակել, բայց խմբագրական վիթխարի



աշխատանք է ծաւալել: Նա կազմել է Մատթէոս Զարիֆեանի գիրքը, Թէքէեանի հարիւրամեակի «Հատընտիր»ը: Բանախօսը ծանրացաւ նաեւ Վ. Թէքէեանի եւ Վահէ-Վահեանի բանաստեղծական նմանությունների վրայ: Վահէ-Վահեանի մուտքը ուրախացնում էր Վ. Թէքէեանին: Վահէ-Վահեանը շարունակեց արեւմտահայ բանաստեղծութեան հետ ուղիղ կապը: Նամակների մէջ երեւան է գալիս գրողը, քննադատը եւ մարդը: Մենք շնորհակալ պէտք է լինենք Արամ Մեփեթճեանին կատարած այս գործի համար, գուցէի Վահէ-Վահեանին, որ հիմնականում պահել-պահպանել է նամակները՝ կարծես հէնց Ա. Մեփեթճեանի համար: Նամակների պատրաստելը գիտություն է. կազմողը գործ ունի ոչ միայն անհատականութեան, կենսագրական խնդիրների, այլեւ իւրատեսակ կերպով խաղարկում է կերպարներ, որոնք էական դեր ունեն գրողի կեանքում: Դա արդէն գրականություն է»:

Գոյների մեղեդին

Վերջերս Երեւանում՝ Հայաստանի նկարիչների տանը կայացաւ ինքնուս նկարչուհի Գայիանէ Գրիգորեանի նկարների անհատական ցուցահանդէսը, որի գունային սպառնալիքեան տակ ներկայացնում եմ իմ զգացողութեան պատկերները.




Գոյների այս հիասքանչ մեղեդին ոսկեփռոցի երազներից ձուլուած մի անկրկնելի աշխարհ է՝ ձուլուած երկնի անձիր կապոյտին: Ծաղկանկար գորգ է ու տաք գոյների, արեւափայլ երանգների մի զարմանահրաշ խաղ: Ու այդ գունային հրավառութեան մէջ ամենուրեք դու ես՝ ինքնատիպ ու երազային, նրբագգած ու քնքուշ մի կանացի էութիւն...Այնքան իւրօրինակ, որքան մարդկային երեւակայութեան բազմագոյն աշխարհը:

Կարմիր, դեղին, կապոյտ ու ճերմակ...ծիածանուել են կարծես ու դարձել մի համընդհանուր կտաւ, ուր երկինքն ամպշող է, հորիզոնները՝ անձիր, իսկ կեանքը թուում է անվախճան...Ծաղկահանդէս է շուրջօրըրը և մարդկային գտնուած

երջանկութեան երանաւէտ մի խաղաղ հանգրուան...ամէն ինչ մաքուր է, ինչպէս կուսական բնութեան հեւքը, ինչպէս թովիչ հեքիաթների աշխարհը...

....Ու ծաւալում է գոյների մեղեդին կեանքի ձգտող յաւերժական շղթայի մէջ: Ամէն գոյնի, երանգի մէջ մարդ-էակն է՝ իր մի փունջ երջանկութեամբ, երեւակայութեան հզօր թելերով,

մտքի ճախրով՝ բարձր ու հպարտ: Այդ ջերմացնող գոյների մէջ ես տեսնում եմ քեզ՝ քո երազանքների կապոյտ-սպիտակ երկնքով:



Գոյների մեղեդին մեր լեռնային պարզ ու զուլալ աղբիւրներից պոկուած ջրի մի կաթիլ է, երկնքին փարուած լուսաժպիտ մի ամպիկ ու արեւի ջերմ շողերի մէկ հատիկ շողիկ է, մշտապէս հնչող քնքշաբոյր մեղեդու առեղծուածային մի պատառիկ, որ ներդաշնակում է մարդկային

Էութեանը, խառնուում բնութեան անեզր գեղեցկութեանը և դառնում հրաշագեղ գոյների ու յաւերժական հնչիւնների մի միաձոյլ սիմֆոնիա:

Կարինէ Մովսիսեան – Հայաստան, 2012 Յունիս

Տեսակէտ

ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆԸ Ատելի է՝

Որովհետեւ Անմարդկային է

Խաչատուր Ի. Փիլիկեան



Խոստովանիմ որ դեռ եւս կը զարմանամ մեր մինուճար հայրենիքի երկրին, ժողովուրդին ու մշակոյթի գլխուն փաթթուած պատուհասները լսելով՝ Շուկայի Աստծոյ պաշտամունքի նուիրեալներու ձեռամբ ու հովանաւորութեամբ գործադրուած:

Երեւի զարմանքիս պատճառը այն է որ դեռ եւս չեմ ուզեր հաւատալ որ նման անխոհեմ մանկլաւիկներ հասած են իշխանական դիրքերու ու կը կեղեքեն ամէն ինչ որ առաւել դրամական չարաշահութիւն կ'ապահովէ իրենց պնակալեզային գրպաններուն:

Արժէ յիշել այն որ մեր լեզուին մէջ սքանչելիօրէն յստակացուած է այն որ ՇԱՀ ունենալ կամ ակնկալել ինքին մարդկային պահանջ մըն է, չ'ըսելու համար որ մարդկայնականութեան ի նպաստ շահը նոյնինքն հասարակութեան գերագոյն հարստութիւնն է: Բայց ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆը ատելի է՝ որովհետեւ անմարդկային է:

Չարաշահութիւն է 'Ավագ Շին' կոչուած ընկերութեան բռնութեամբ կատարած արարքը՝ մեր արժէքաւոր հայ քանդակագործ Ղուկաս Չուբարեանի տուն թանգարանի բռնաբարումը: Հազար ամօթ այս իսկութեան մէջ 'անշէն' գործարքին գոր անխուսափելիօրէն մշակութային աւազակապաշտութեան ծիսակատարութիւն մըն է, ինքնին աւազակապաշտութիւն, այն ալ 'լաւագոյն' պարագային:

Մեր հոյակապ Մատենադարանի մուտքին է 'նստած' մեր տասնամեծար Մեսրոպ Մաշտոցի մեծակերտ արձանը, հեղինակութեամբ Ղուկաս Չուբարեանի: Ուստի արտակարգ խանդավառութեամբ դիմաւորեցի մեր տաղանդաւոր արձանագործին, երբ 1964 ին եկաւ Իտալիա- Միլանօ քաղաք, որ այցելէ մի քանի արուեստանոցներ Իտալացի արուեստագէտներու: Մեծ բաւարարութեամբ ընդունեցի իր խնդրանքը որ ես ըլլամ իր ընկերակիցը այդ այցելութիւններուն, ոչ միայն "Իտալերէն լեզուի ճանաչողութեանը

համար” , ինչպէս որ ազնիւօրէն արտայայտուեցաւ, այլ նաեւ ”որովհետեւ իսկական արուեստագէտ ես”...

Մայիս 5, 1964 ին, գծանկարեցի մեր մեծակերտ արձանագործի դիմագիծը: Եւ ահա, իր ձեռագիրն ալ աւելցուց գծանկարի տակ: Խոհուն ու գողտրիկ գիր մըն էր թողածը — Իսկականի հետ ճիշդ է — եւ ըսաւ որ լաւ պահեմ այդ:



Այդպէս էլ եղաւ ու մնաց. ահա քառասուն եւ ութ տարիներու տարածքին, իբրեւ գեղեցիկ յուշ մը մեր Իտալիա հանդիպման օրերէն:

Ահա թէ ինչու չ’ուզեցի հաւատալ նման մեծակերտ արուեստագէտի մը մշակութային ժառանգութեան հանդէպ այլանդակ տգեղութեան լուրը, 48 տարիներ վերջ, այն ալ այսպէս ըսած ‘ազատ ու անկախ’ կոչուած մեր Երրորդ Հանրապետութեան սրտին:

Հազար, հազար ամօթ, ուր որ անկ է...

Հայերը Պետք է Միասնական Ճակատ Կազմեն՝ Թուրքիոյ Հետ Ռբեւէ Բանակցութիւն Վարելէ Առաջ



Յարութ Սասունեան, «Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Տաւութօղլուի Հայկական Սփիւռքին հետ երկխօսութիւն սկսելու ջանքերուն մասին վերջին յօդուածս բազմաթիւ արձագանգներու արժանացաւ՝ հայկական եւ թրքական շրջանակներու կողմէ: Թրքական թերթերը, հեռուստաընկերութիւններն ու կայքերը լայնածաւալ լուսաբանութիւններ կատարեցին հայերու հետ կապեր հաստատելու միտող Տաւութօղլուի փորձերուն մասին: Թրքական լրատուական միջոցները արտաքին գործոց նախարարին նախաձեռնութիւնը կապեցին 2015ին՝ Յեղասպանութեան 100րդ տարելիցի յիշատակման ծրագիրներուն հետ:

Հայերը նոյնպէս մեկնաբանութիւններով ողողեցին համացանցային կայքէջերն ու «Ֆէյսպուք»ը՝ ակնարկելով յօդուածիս, որ շրջանառուեցաւ աշխարհով մէկ՝ անգլերէն, հայերէն, թրքերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներով: Հայերու արձագանգը, հասկնալիօրէն, լեցուն էր կասկածամտութեամբ եւ զգուշաւորութեամբ: Հայաստանի պաշտօնատարները հանգիստ կը հետեւէին Տաւութօղլուի հանդիպումներուն վերաբերեալ զեկոյցներուն՝ զերծ մնալով որեւէ հրապարակային մեկնաբանութիւն կատարելէ, մինչդեռ Պոլսոյ հայկական մամուլը պարզապէս կը վերատպէր այն, ինչ այդ թեմային մասին կը հրապարակուէր թրքական մամուլով:



Հայ ընթերցողները յուզեց երկու հարց. ո՞վ պիտի ներկայացնէ Սփիւռքը, եթէ հայերը սկսին բանակցութիւններ վարել Թուրքիոյ հետ, եւ ճշգրիտ ի՞նչ են հայկական պահանջները՝ Թուրքիոյ կառավարութենէն:

Ասոնք չափազանց բարդ խնդիրներ են, որոնք պէտք է լրջութեամբ դիտարկուին աշխարհասփիւռ հայերուն կողմէ: Իտէալական պիտի ըլլար, եթէ Սփիւռքի ներկայացուցիչները ընտրուէին իրենց երկիրներու հայ բնակիչներու քուէներուն միջոցով, ինչպէս առաջարկած էի նախկին յօդուածներուս մէջ: Ընտրուածները իրաւունք պիտի ունենան ներկայացնելու սփիւռքահայութիւնը՝ որեւէ բանակցութիւններու ընթացքին:

Այս ներկայացուցիչները պէտք է համաձայնեցնեն իրենց որոշումներն ու գործողութիւնները Հայաստանի կառավարութեան հետ, մասնաւորապէս Թուրքիոյ հետ բանակցութիւններ վարելու չափազանց կարեւոր խնդիրին շուրջ՝ համատեղ պատուիրակութիւն ստեղծելով: Դասեր քաղելով ձախողած Հայ-թրքական արձանագրութիւններու փորձէն, յստակ է, որ հնարաւոր չէ Թուրքիոյ հետ երկխօսութիւն հաստատել՝ առանց երկուքին՝ Հայաստանի եւ Սփիւռքի, մասնակցութեան եւ համաձայնութեան:

Սփիւռքի ընտրովի կառոյցին բացակայութեան պարագային, հայկական երեք ւսանդական քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները, Հայաստանի կառավարութեան հետ համատեղ, կրնան նախաձեռնել բանակցութիւններու միացեալ խումբի մը կազմութեան: Պատուիրակութիւնը առաւել ներկայացուցչական դարձնելու նպատակով, անոր մէջ կրնան ընդգրկուիլ համայնքային գլխաւոր կազմակերպութիւններ եւ ճանչցուած անհատներ, ներառեալ՝ Թուրքիոյ հայերու ներկայացուցիչը:

Մէկ այլ չափազանց կարեւոր հարց՝ թուրք պաշտօնատարներու հետ բանակցութիւններու օրակարգ մշակելն է: Ի՞նչ են հայերու ճշգրիտ պահանջները Թուրքիայէն: Ասիկա շատ լուրջ եւ զգայուն խնդիր մըն է, որ կը պահանջէ Հայկական հարցի մասին խոր գիտակցութիւն եւ բանակցութիւններ վարելու ռազմավարութեան ու մարտավարութեան մասնագիտութիւն:

Հայերուն համար ուսուցողական պիտի ըլլայ դիտել, թէ ինչպէ՛ս Իսրայէլն ու հրէական 23 գլխաւոր կազմակերպութիւններ միաւորուեցան՝ կազմելով Համաժողով՝ Գերմանիայէն հրեաներու նիւթական պահանջներուն համար, Հոլոքոսթի զոհերուն դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով, եւ թէ ինչպէ՛ս այս կազմակերպութիւնները համաձայնեցուցին իրենց դիրքորոշումները Իսրայէլի հետ, որ փոխհատուցման առանձին պայմանագիր կնքած էր Արեւմտեան Գերմանիոյ հետ: Տարիներու ընթացքին անոնց համատեղ ջանքերով, հրէական սփիւռքի կազմակերպութիւններն ու Իսրայէլը Գերմանիայէն ստացան 70 միլիարտ տոլար՝ որպէս փոխհատուցում:

Կարելի է յաւելեալ դասեր քաղել զանգուածային դատերէ, «Էսփետթոս»ի ներգործութենէ, ապրանքներու համար պատասխանատուութիւնէ, ինչպէս նաեւ Նիւ Եորքի Առեւտրական զոյգ շէնքերու կործանումէն եւ Մեքսիքայի ծովածոցը քարիւղ թափելէն յառաջացած ֆինանսական կարգաւորումներու օրինակներէն:

Այնուամենայնիւ, Ողջակիզման (հրէական) եւ Հայոց Ցեղասպանութեան միջեւ կարեւոր տարբերութիւն մը կայ: Մինչդեռ հրեաները կոտորուեցան Եւրոպական երկիրներու մէջ նացիական իշխանութեան լուծին տակ, հայերը կոտորուեցան եւ բռնի կերպով հեռացուեան իրենց հայրենիքէն: Ուստի, դրամական ոչ մէկ վճարում կրնայ լիովին փոխհատուցել հայերը՝ իրենց պատմական հողերու կորուստին դիմաց: Հայերը պէտք է ոչ միայն պահանջեն իրենց անձնական կորուստներու փոխհատուցումը, այլ նաեւ՝ վերադարձը



Արեւմտեան Հայաստանին, ինչպէս վճռած էր նախագահ Ուուտրօ Ուիլսըն՝ պահանջ մը, գոր Թրքիան շարունակաբար կը մերժէ:

Եթէ լուրջ բանակցութիւններ սկիզբ առնեն, ապա հայերու համատեղ պատուիրակութիւնը պիտի կարենայ Թուրքիայէն պահանջել հետեւեալ նախնական քայլերը, որոնցով Թուրքիան պիտի ապացուցէ իր բարեացակամութիւնը

- Փոխհատուցել Յեղասպանութեան բոլոր զոհերը.
- Վերականգնել եւ Պոլսոյ հայոց պատրիարքարանին վերադարձնել կրօնական բոլոր սրբավայրերը.
- Վերադարձնել գրաւուած անձնական եւ համայնքային բոլոր կալուածքները իրենց հայ տէրերուն.
- Ապահովել Հայաստանի Հանրապետութեան համար յատուկ միջանցք մը՝ Տրապիզոնի թրքական նաւահանգիստը օգտագործելու համար առետրային նպատակներով.
- Թոյլ տալ հայերուն առանց մուտքի արտօնագիրի այցելել Արարատ, Անի եւ Թուրքիոյ մէջ գտնուող հայկական այլ պատմական վայրեր.

- Վերացնել Հայաստանի շրջափակումը.
- Վերջ տալ Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան Ժխտման պաշտօնական քաղաքականութեան եւ ջնջել Թուրքիոյ Քրէական օրէնսգիրքի 301րդ յօդուածը.
- Ձերժ մնալ Հայաստանի եւ Արցախի դէմ ուղղուած թշնամական քաղաքականութենէն:

Համաձայնելու պարագային՝ այս միջոցառումները զգալի յառաջընթաց պիտի ըլլան Թուրքիայէն հայկական պահանջներու հետապնդման գործին մէջ, մինչդէռ տարածքներու վերադարձի խնդիրին կարելի է առանձնաբար դիմել՝ միջազգային իրաւական ստեաններ:

«Աշխարհ» թերթի փակման առթիւ

Ֆրանսայի «Նոր Յառաջ» Թերթի խմբագիր Ժիրայր Չոլաքեան անդրադարձած է Ֆրանսայի մէջ Աւետիս Ալեքսանեանի 1950ին հիմնադրած «ԱՇԽԱՐՀ» երկշաբաթօրեայ թերթի փակման:

Ան կը նշէ, որ 16 Յունիս 2012-ին, լոյս տեսաւ թերթի վերջին թիւը, «53 տարուան գոյութենէ ետք: Անցեալ տարի վարչութիւնը ահագանգ հնչեցուցած էր. եղան կարգ մը նուիրատուութիւններ, գեղարուեստական զօրակցական երեկոյթ՝ ալ կազմակերպուեցաւ: Տարի մը եւս կրցաւ գոյատեւել...»



Ստորեւ կը ներկայացնենք Ժիրայր Չոլաքեանի անդրադարձը ուղղուած 62-ամեայ կէանք ունեցող «Աշխարհ»ի փակման.



«ԱՇԽԱՐՀ» ունէր նուիրեալ բարձրորակ խմբագրական կազմ: Ֆրանսահայ լրատուութեան դաշտին մէջ ամէն մէկ թերթի դադրեցում մեծ կորուստ է հայութեան համար՝ աշխարհը հայերէնով կարդալու, մտածելու: Մասնաւորապէս սփիւռքահայութեան պարագային՝ դադրեցումը կը ստանայ յատուկ նշանակութիւն, արեւմտահայերէնի համար՝ կորուստ, հայկական գիտակցութեան կորուստ:

Ֆրանսահայութիւնը Եւրոպայի սրտին գոյացած մեծագոյն հայ գաղութն է՝ բազմադէմ, բազմապահանջ: Ֆրանսայի մտաւոր՝ մշակութային եւ քաղաքական հարուստ միջավայրը իր ազդեցութիւնը ունի համայն աշխարհի պետութիւններու վրայ: Թէեւ Ֆրանսահայութիւնը չէ յաջողած ֆրանսական հարուստ միջավայրին համապատասխան ազդեցիկ կառոյցներ ստեղծել, այդուհանդերձ ֆրանսահայութեան ներկայութիւնը կարենոր ազդակ է քաղաքական եւ տնտեսական մարզէն ներս եւ Հայ Դատի հետապնդման առումով՝ գոնէ Եւրոպական Միութեան տարածքին:

«ԱՇԽԱՐՀ» կը մասնակցէր ֆրանսահայ լրագրութեան բազմադիմութեան, ունէր իր ընթերցողը, իր համակիրները, որոնք իրենց թերթին միջոցով կը հետեւէին հայկական առօրեային, կը զօրակցէին Հայաստանին, կը հետապնդէին Հայ Դատը:

Թերթ մը՝ կամքի, հաւատքի ու տեսիլքի մը արտայայտութիւնն է: «ԱՇԽԱՐՀ» աւելի քան կէս դար հետապնդած է իր տեսլականը: Եղած է միշտ Հայաստանի Հանրապետութեան զօրակցող ուժ՝ ինչ ալ ըլլայ անոր գունաւորումը: Անցեալին՝ այդ զօրակցութիւնը բարոյական եւ նիւթական գետնի վրայ կը վարձատրուէր: Հայաստանի անկախութենէն ի վեր՝ հաշիւները, սկզբունքները, բարեկամութեան, զօրակցութեան արժէքները փոխուած են: Ամէն տեսակ զօրակցութիւն կը սպասուի անհատոյց եւ անպատասխանատու կերպով՝ առանց փոխարինումի:

Աշխարհը դիմափոխուած է, Հայաստանն ու Ֆրանսահայութիւնն ալ՝ նոյնպէս: Ժամանակները նոր պահանջներ ու գործելակերպեր կը պարտադրեն, որոնք ներդրում կը պահանջեն՝ քայլ պահելու համար ժամանակակից լրագրական գերարդիական պահանջներուն՝ համացանցի, հեռաձայնի, անվճար թերթերու, գերյագեցած լրատուական մթնոլորտին: Իսկ Ֆրանսայի մէջ՝ հայկական լրատու միջոցները, բացի մէկ-երկու բացառութիւններէ, դեռ կը բանին զուտ տպագիրի տիրութեան ներքոյ: Տպագիրին զուգընթաց՝ նոր ծառայութիւններու մատուցումը ներդրում կը պահանջէ: Իսկ ներդրող չկայ ու չկայ: Ընթերցողներու թիւը անբաւարար է՝ լրացնելու այդ պահանջը:

Կարելի է ըսել, որ մամուլի հաստատութիւններուն տնօրէնները անկարող են, ճարագուրկ են թերթ մը տնօրինելու, ներդրողներ, գործարար մարդիկ գտնելու, տեսլականի պակասէ կը տառապին: Սակայն դիմացը, պէտք է ըսել, որ հետաքրքրուող ալ չկայ՝ ո՛չ համագաղութային կառոյցները, ո՛չ միջազգային կազմակերպութիւնները, ո՛չ ալ Հայաստանի կառավարութիւնը կը նպաստեն սփիւռքահայ մամուլին:

Որքան կը մեծնան հայութեան լրատուական պահանջները, յատկապէս ներկայի նման սուր պահուն՝ ժխտողականութեան պատժելիութիւն, Հայաստանի տնտեսութեան զարգացում, Արցախ, Ջաւախք... թրքացած, իսլամացած Հայեր, արտագաղթ... այնքան կը նուազին մամուլի անունները, այնքան կը նուազին հայերէնով արտայայտուող թերթերու ու հանդէսներու մէջ հայերէնով տպագրուող էջերը:



Մտահոգիչ է անտարբերութիւնը՝ հանդէպ լրատու միջոցներու, որոնք հաստատութիւններ են՝ համայնք կազմաւորող, հայութիւնը հայկական հարցերուն իրազեկ դարձնող, տեղեկագիտական հսկայական դաշտ վարող, հայերէն լեզուի ամէնօրեայ գործածութեան միջոց հանդիսացող, նոյնքան կարելորդ՝ որքան պետական հաստատութիւն մը: Ինքնուրոյն դպրոցներ են: Ռազմավարական կենսական կարեւորութիւն ունին:

Տասնեակ տարիներ առաջ «ԿԱՄՔ» օրաթերթը դադրեցաւ լոյս տեսնելէ: Երեք տարի առաջ՝ Արփիկ Միսաքեան դադրեցուց «ՅԱՌԱՋ»ը: Իրավիճակը այնքան ալ փայլուն չէ նոյնիսկ ֆրանսագիր հայ մամուլին: «FRANCE ARMÉNIE»ն վերջերս փոխեց իր ձեւաչափը, ինչպէս նաեւ հրատարակչական կառոյցը, որպէսզի գոյատեւելու նոր միջոցներ ու պայմաններ ունենայ: Վերացան հայերէն էջերը՝ թերեւս առժամաբար, յուսանք: «LES NOUVELLES D'ARMÉNIE»ն եւ «ARMENEWS»ը թէեւ հայերէն էջեր չունին, սակայն նուիրատութեան կոչեր կ'ուղղեն հանրութեան:

Հայաստանի անկախութենէն առաջ՝ հայկական մամուլին վիճակը շատ աւելի բարւոք էր՝ երեք պատճառով: Համացանցային յեղափոխութիւնը դեռ չէր սկսած: Ընթերցողներու թիւը աւելի մեծ էր: Եւ կային գանձատրման կարելորդ աղբիւրներ՝ Սովետական Միութիւնը՝ Հայաստանամէտ թերթերուն եւ Արեւմուտքը՝ Սփիւռքի կարգ մը թերթերուն, որոնք կը պայքարէին համայնավար համակարգին դէմ: Այսօր, սփիւռքահայ մամուլը կտրուած է այս երկու աղբիւրներէն: Լքուած են իրենց ճակատագրին: Կուսակցական թերթերը կը տոկան ձեւով մը: Իսկ անկախները կը դիմադրեն՝ շնորհիւ կարգ մը մեկենասներու օգնութեան՝ մինչեւ հոն, ուր դիմանան:

Թէեւ նորեկ եւ անկախ մամուլ «ՆՈՐ ՅԱՌԱՋ» կը պատկանի այս վերջին խումբին՝ վայելելով բարոյական նեցուկը հայատառ լրագրութեան գոյութեան նախանձախնդիր մտաւորական դասուն: Հայերէնին կառչած ընթերցասէրներու եւ հայկական երկու կազմակերպութիւններու նիւթական օժանդակութեան: Արդիականութեան գիրկը ցատքելու հրամայականին առջեւ կը գտնուի: «ԱՇԽԱՐՀ»ի փակումով՝ «ՆՈՐ ՅԱՌԱՋ» ակամայ դարձաւ Ֆրանսայի համագաղութային միակ հայատառ թերթը:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

Անցուդարձ

Էրտողան եւ Օլանտ Երկու Երկիրներուն Յարաբերութիւններուն Մէջ Նոր Էջ Բանալու Մասին Խօսած են

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան հանդիպում ունեցած է Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի հետ: Հանդիպումը կայացած է Պրագիլի մէջ՝ «Ռիօ 20» զագաթաժողովին ընթացքին եւ տեւած է մօտ կէս ժամ: Թրքական կողմէն հանդիպման



մասնակցած են փոխվարչապետ Ալի Պապաճան, ինչպէս նաեւ քանի մը նախարարներ: Թրքական լրատուամիջոցները կը նշեն, որ անիկա կարեւոր էր «Սարքոզիի օրով ներկայացուած Յեղասպանութեան քրեականացման օրինագիծին պատճառով գրեթէ վերացած երկկողմ յարաբերութիւնները վերսկսելու տեսանկիւնէն»:

Երկու ղեկավարները նշած են, որ երկկողմ յարաբերութիւնները անցած են դժուար փուլ եւ այժմ անհրաժեշտ է յարաբերութիւններուն մէջ նոր էջ բանալ

եւ խորացնել յարաբերութիւնները ինչպէս տնտեսական ոլորտի, այնպէս ալ Թուրքիոյ ԵՄ-ին անդամակցութեան հարցերուն մէջ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են ինչպէս երկկողմ յարաբերութիւններուն, այնպէս ալ տարածաշրջանային խնդիրներուն առնչուող հարցեր: Էրտողան Օլանտին յիշեցուցած է, որ 20 տարի Ֆրանսայի ոչ մէկ նախագահ այցելած է Թուրքիա եւ հրաւիրած է զինք Անգարա, որուն Օլանտ տուած է դրական արձագանգ:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

Հայաստանն ու Ատրպէյճանը կը պատրաստուին երկարատեւ պատերազմի.

Bloomberg businesswork



Միջազգային ճգնաժամային խումբը կը տեղեկացնէ, որ Ատրպէյճանի և Հայաստանի միջեւ բախումները, որոնց պատճառով Յունիս ամսուան մէջ 10 զինուոր էր զոհուեր, հնարաւոր է շատ արագ վերաճի պատերազմի՝ տարածաշրջանի մը մէջ, ուր British Petroleum-ը և այլ նաւթային խոշոր ընկերութիւններ 35 միլիարտ տոլարի ներդրումներ են կատարեր:

ICG Միջազգային ճգնաժամային խումբի եւրոպական ծրագրի ղեկավար Սապինա Ֆրէյզըրը Bloomberg businesswork-ի Իսթանպուլէն հաղորդեր է, որ

զինադադարը շատ թոյլ կը վերահսկուի Ատրպէյճանի և Հայաստանի կողմէ, չկայ նաեւ անհրաժեշտ մակարդակի միջազգային վերահսկողութիւն: Bloomberg businesswork-ը կը յիշեցնէ Ատրպէյճանի ու Հայաստանի միջեւ սկսուած պատերազմի պատճառները եւ կը նշէ որ 1991-1994թթ. Պատերազմը իսկը է աւելի քան 30 հազար մարդու կեանք՝ Հայաստանի հսկողութեան տակ թողելով Ղարաբաղն ու ատրպէյճանական 7 շրջաններ:

Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւը յաճախ կը խօսի, որ Ատրպէյճանը իրաւունք ունի օգտագործելու իր ռազմական ներուժը՝ վերադարձնելու իրեն պատկանող տարածքները, եթէ խաղաղ բանակցութիւնները ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջնորդությամբ ցանկալի արդիւնք չտան և ձախողին: Ֆրէզըրը լրատուամիջոցին յայտնէր է, որ Հայաստանն ու Ատրպէյճանը կը պատրաստուին երկարատեւ պատերազմի:

Եթէ մեծամասշտապ պատերազմական գործողութիւնները վերսկսին, պատերազմը տեւական պիտի ըլլայ, քանի որ կողմերէն ոչ մէկը մեծ առաւելութիւն ունի միւսին նկատմամբ: Ֆրէզըրը աւելցուցեր է նաեւ, որ դեռեւս պարզ չէ, թէ ինչպէս այս ամէնուն պիտի արձագանգեն Ռուսաստանն ու Թուրքիան, քանի որ անոնք հնարաւոր է որ ներգրաւուին հակամարտութեան մէջ, ապահովելով անվտանգութեան ապահովման պարտաւորութիւնները, որոնք Ռուսաստանը ստանձներ է Հայաստանի, իսկ Թուրքիան՝ Ատրպէյճանի առջեւ: Ռուսաստանը ռազմակայան ունի Հայաստանի՝ Գիւմրիի շրջանին մէջ և պարտաւորուէր է՝ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան շրջանակներէն ներս, օգնութեան հասնելու Հայաստանին՝ ռազմական վտանգի պարագային: Ատրպէյճանը իր հերթին եթնիք, քաղաքական և տնտեսական կապեր ունի Թուրքիոյ հետ:

ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնը, ով շաբաթներ առաջ էր այցելէր տարածաշրջանի երկիրներ, նաեւ զգուշացուցեր էր իրավիճակի հնարաւոր սրման պարագային՝ պատերազմի «աղետալի և անկանխատեսելի հետևանքներուն մասին»: Ֆրէզըրը աւելցուցեր է, որ բանակցութիւններու միջոցով հակամարտութեան լուծում գտնելու հեռանկարը մշուշոտ է, միւս կողմէ սակայն, երկու երկիրներուն մէջ ալ կը հասկնան որ յառաջիկային՝ ծայրագոյն ռազմական քայլերու չեն կրնար երթալ, քանի որ երկու երկիրներն ալ միւս տարի ընտրութիւններու կը պատրաստուին:

Աչք Պիտի Զփակենք Սահմանին Վրայ Սուրիական Ուժերուն Ներկայացուցած Սպառնալիքներուն Նկատմամբ. Էրտողան

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան՝ վերջերս, թրքական խորհրդարանին մէջ անդրադարձաւ Սուրիոյ կողմէ թրքական պատերազմական օդանաւին վար առնուելու հարցին:



Ան ըսաւ, որ օդանաւը վար առնուած է միջազգային օդային տարածքին եւ ոչ թէ սուրիական օդային տարածքին մէջ՝ նշելով, որ «մեզի համար ներկայիս կարեւորը մեր օդաչուները գտնելն է»: Թուրքիոյ վարչապետը շեշտեց, որ ոչ ոք իրաւունք ունի Թուրքիայէն պահանջելու, որ աշխարհի մէջ տեղի ունեցածին նկատմամբ ձեռնաձայլ մնայ: «Թուրքիա չի

կրնար եղբայրական եւ բարեկամ երկիրներուն կոնակ դարձնել», ըսաւ ան: Էրտողան ընդգծեց, որ Թուրքիա դրացի կամ հեռաւոր երկիրներու հողերուն նկատմամբ ախորժակներ չունի՝ շեշտելով, որ «Թուրքիա շրջանի երկիրներուն ներքին հարցերուն պիտի չմիջամտէ»: Ան յայտնեց, որ «Սուրիոյ նկատմամբ մեր կեցուածքը պատճառ պիտի չդառնայ, որ պետութիւնն ու բանակը անպատասխանատու կեցուածքի մղենք»:

Էրտողան յայտնեց, որ Թուրքիա, Սուրիա, Լիբանան, Իրաք եւ Պաղեստին մէկ ձեռքի մատներու պէս են: «Մենք ոչ ոքի համար միջնորդ կամ ոչ ոքի գործակալ չենք, այլ՝ անկախ պետութիւն մը, որ իր կամքով կը շարժի», ըսաւ ան: Թուրքիոյ վարչապետը յայտարարեց, որ «Ասատի վարչակազմը սկսած է Թուրքիոյ եւ անոր ապահովութեան սպառնալ»՝ աւելցնելով, որ «աչք պիտի չփակենք սահմանին վրայ սուրիական ուժերուն ներկայացուցած սպառնալիքներուն նկատմամբ»:

Ան նշեց, որ «սուրիական որեւէ ուժ, որ մեր սահմաններուն կը մօտենայ, զինուորական թիրախ պիտի նկատուի»: Էրտողան նշեց, որ «միջազգային օրէնքին հիմամբ թրքական օդանաւի վար առնուելուն պատասխանին իրաւունքը մեզի կը վերապահենք»՝ ընդգծելով միաժամանակ, որ «Թուրքիա սուրիացի ժողովուրդը բռնատիրութենէն ազատագրելու համար անհրաժեշտ ամէն տեսակի օժանդակութիւն պիտի տրամադրէ»:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

Թուրքիան կը փորձէ Մերձաւոր Արեւելքի մէջ գերտէրութեան համբաւ ունենալ. թուրքագէտ



«Թուրք-սիրիական յարաբերութիւնների վերջին շրջանի լարուածութիւնը չպէտք է դիտարկել երկկողմ յարաբերութիւնների, այլ՝ Մերձաւոր Արեւելքում ընթացող վերջին զարգացումների համատեքստում»:

Յունիս 28-ին՝ լրագրողներու հետ հանդիպման, նման կարծիք է յայտնել թուրքագէտ Լեւոն Յովսէփեանը: «Եթէ դիտարկուի ենք վերջին շրջանում Թուրքիայի գերակտիրութիւնն ու ներգրաւուածութիւնը մերձաւոր-արեւելեան զարգացումների հարթութիւնում, նկատում ենք, որ Թուրքիայի հիմնական նպատակը Մերձաւոր Արեւելքում որոշում կայացնող տէրութեան համբաւ

ունենալն է :

Թուրքիան ձգտում է դառնալ Մերձաւոր Արեւելքում որպէս որոշում կայացնող կենտրոն՝ փորձելով իր աշխարհաքաղաքական յաւակնութիւնները զուգորդել Արեւմուտքի՝ տուեալ պարագայում ԱՄՆ-ի և ՆԱԹՕ-ի շահերով և որոշակի լծակներ նա ստանում է Արեւմուտքից»,- պարզաբանեց թուրքագէտը: Լեւոն Յովսէփեանը յիշեցուց, որ գործ ունինք 1990-ականներու սկզբին արձանագրուած իրավիճակի հետ, երբ Թուրքիան Արեւմուտքի կողմէ հնարաւորութիւն ստանալով, Կովկասի և Կեդրոնական Ասիոյ մէջ, յաւակնութիւններ առաջ քաշեց՝ փորձելով հինգ հարիւր տարի Օսմանեան կայսրութեան կազմին մէջ եղած երկիրներուն նկատմամբ «իշխանութիւն բանեցնել»:

HayNews.am

Առանց Լեռնային Ղարաբաղի Մասնակցութեան Հիմնախնդրի Կարգաւորում Չի Կրնար Ըլլալ. Էդուարդ Նալպանտեան



ՀՀ Արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան «Արմենփրես» գործակալութեան տուած հարցազրոյցին պարզաբանած է, թէ ինչ հարցեր քննարկած է ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանի հետ՝ Յունիս 29-ին կայացած հանդիպման ընթացքին:

Նալպանտեան ըսած է, որ ԼՂՀ նախագահը տեղեկացուցած է Փարիզի մէջ Ատրպէյճանի ԱԳ նախարարի եւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու հետ ունեցած հանդիպման մասին: Մտքեր փոխանակուած են նաեւ ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման ուղղութեամբ ընթացող բանակցային գործընթացին շուրջ: Նալպանտեան տեղեկացուցած է նաեւ, որ Արցախի ղեկավարութեան հետ մշտական խորհրդատուութիւններ կ'ունենան նաեւ եռանախագահները:

«Շուտով, մօտ տասը օրից համանախագահները նորից լինելու են տարածաշրջանում, այդ նպատակով այցելելու են Ստեփանակերտ: Ես կը ցանկանայի եւս մէկ անգամ շեշտել, որ առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան չի կարող լինել հիմնախնդրի կարգաւորում», - ըսած է Նալպանտեան՝ յիշեցնելով նաեւ, որ Կազանի մէջ մէկ տարի առաջ տեղի ունեցած զագաթածոդովէն առաջ արդէն հնչեցուած էր հայկական կողմին կողմէ, որ հիմնարար սկզբունքները չեն կրնար համարուիլ վերջնականապէս համաձայնեցուած առանց Լեռնային Ղարաբաղի հաւանութեան: «Իսկ Հիմնարար սկզբունքների համաձայնեցումից յետոյ, խաղաղ համաձայնագրի մշակումն անհնարին է առանց ԼՂ մասնակցութեան», - նշած է Նալպանտեան:

Լրատուութիւն Հայաստանէն - Թերթ.am

Այլ լուրեր

Կիպրոս ԵՄ Նախագահութիւնը Ստանձնած է

«Յանուն աւելի լաւ Եւրոպայի» կարգախօսով, Կիպրոսը՝ Կիրակի 1 Յուլիսին, ստանձնած է ԵՄ Խորհուրդի նախագահութիւնը:



Այս մասին կը յայտնէ ԻԹԱԼ-ԹԱՍՍ-ը: Ասիկա պատմական իրադարձութիւն է այս երկրին համար, որ կառոյցին անդամ դարձած է 2004-ին եւ եւրոգօտի մտած է 2008-ին: Առաջին անգամ է, որ Եւրոմիութիւնը պիտի ղեկավարէ այդքան փոքր պետութիւն՝ 800 հազարէն քիչ բնակչութեամբ եւ 17,2 միլիարտ ՀՆԱ-ով: Կիպրոսը Էստաֆետը ընդունած է Դանիայէն: Փորձագէտներուն գնահատմամբ՝ ասիկա իսկական

փորձութիւն պիտի ըլլայ Կիպրոսի քաղաքական հասունութեան առումով:

Կիպրոսը պիտի նախագահէ Պրիքսէլի մէջ. տարբեր մակարդակներու հանդիպումներու եւ աշխատանքային խումբերու նիստերու՝ ընդհանուր մօտ 1500 նախաձեռնութիւններու 90 տոկոսը անցուցած է Պրիքսէլի մէջ: Կիպրոսի համար նախագահութիւնը խնդրահարոյց պիտի ըլլայ նաեւ այն առումով, որ ԵՄ-ը կ'ապրի տնտեսական խոր ճգնաժամ: Միւս գլխաւոր խնդիրը Կիպրոսի հիմնահարցի անորոշութիւնն է. երկրի 37 տոկոսը գրաւուած է Թուրքիոյ կողմէ, եւ ԵՄ արձանագրութեամբ Եւրամիութեան իրաւական համակարգի ազդեցութիւնը չի տարածուիր այն շրջաններուն վրայ, որոնք չեն գտնուիր Կիպրոսի Հանրապետութեան վերահսկողութեան տակ: Անգարան չի ճանչնար Կիպրոսի Հանրապետութիւնը եւ խիստ քննադատաբար հանդէս եկած է այդ երկրի՝ ԵՄ նախագահութիւնը ստանձնելուն առիթով: Թուրքիան յայտարարած է, որ պոյքոթի պիտի ենթարկէ Նիկոսիայի բոլոր նախաձեռնութիւնները:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

«ՀԱՐՍՆԱՔԱՐ» ՃԱՇԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԾԵԾԷՆ ԵՏՔ՝ ՄՊԱՅԻ ՄԸ ՄԱՀՐ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ ՅԱՐՈՒՑԱԾ Է



Յունիս 29ին մահացած է Հայաստանի բանակի սպայ, զինուորական հիւանդանոցի միզախտաբանութեան բաժնի պետ Վահէ Աւետեան:

ունեցած ծեծէն ետք հիւանդանոց փոխադրուած էին Վահէ Աւետեան՝ ուղեղային ծանր վերքերով, բժիշկներ Արտակ Պայատեան եւ Գարիկ Սողոմոնեան:



Ան, Յունիս 17ին՝ Ազգային Ժողովի երեսփոխան Ռուբէն Հայրապետեանին պատկանող «Հարսնաքար» ճաշարանին մէջ բիրտ ծեծի ենթարկուած էր բժիշկ՝ իր չորս ընկերներուն հետ: Նշենք, որ ճաշարանի համալիրին մէջ տեղի վերքերով, բժիշկներ Արտակ Պայատեան եւ Գարիկ Սողոմոնեան:

Կըսուէր, թէ, ծեծին հեղինակները, որոնք պաշտօնապէս ներկայացուած էին որպէս ճաշարանին ապահովութեան սպասարկութեան անդամները, իրականութեան մէջ՝ Ռուբէն Հայրապետեանի թիկնապահներն էին:

Դէպքէն քանի մը օր վերջ՝ ոստիկանութիւնը, ժողովրդական բողոքի մեծ ալիքին տեղի տալով, զիրենք ձերբակալած է: Յունիս 30ի երեկոյեան՝ ժողովրդական մոմավառութիւն տեղի ունեցած է «Հարսնաքար» համալիրին առջեւ:



Հազարաւոր քաղաքացիներ իրենց բողոքը արտայայտած են հոն՝ պահանջելով նաեւ փակել տիրահոշակ համալիրը եւ պատժել Ռուբէն Հայրապետեանը, որուն «գողական անունն» է՝ Նեմէց Ռուբօ: Վերջինս, ի դէպ, նոյն օրը՝ նախագահ Սերժ Սարգսեանին հետ միասին գացած էր Քիել՝ դիտելու Եւրոպայի ախոյեանութեան եզրափակիչ հանդիպումը :

ՆՈՐ ՅԱՌԱՋ

Ընդդիմութիւնը կ'աջակցի Ռաֆֆի Յովհաննիսեանին.

Արմէն Մարտիրոսեան

«Ընդդիմութեան դաշտում Ռաֆֆի Յովհաննիսեանից բացի այլ խարիզմատիկ թեկնածու չեմ տեսնում», - Յունիս 29-ին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ ԱԺ նախկին պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը:



Վերջինիս կարծիքով՝ ընդդիմութիւնը կ'աջակցի Ռաֆֆի Յովհաննիսեանին. «Կարծում եմ, որ Ռաֆֆի Յովհաննիսեանը կարող է դառնալ որոշակիօրէն համախմբող այլընտրանքային թեկնածու: ՀԱԿ-ում ԲՀԿ-ի հետ համագործակցելու հետ կապուած տարբեր մօտեցումներ կան, չեմ կարծում, որ Լեւոն ՏէրՊետրոսեանն այս անգամ կ'առաջադրուի, խարիզմատիկ թեկնածու ՀԱԿ-ում չեմ տեսնում: ԲՀԿ-ի հետ կապուած անյայտութիւն կայ. իրենք չեն ցանկանում իրենց տեսնել ընդդիմադիր դաշտում և կոչում են իրենց այլընտրանքային»:

ԱԺ նախկին պատգամաւորի խօսքով՝ դժուար է կանխատեսել ԲՀԿ-ի յետագայ քայլերը. «Քանի որ նրանք կառավարութեան ծրագրին դէմ են, բայց կառավարութեան ներկայացրած օրինագծերին կողմ են քուէարկում. իրենց թիրախը կառավարութիւնն է»: Խօսելով նախագահական ընտրութիւններուն, հնարաւոր թեկնածուներուն մասին, Ա. Մարտիրոսեանը ըսաւ. «Նախագահական ընտրութիւններին, բնականաբար, կ'առաջադրուի Սերժ Սարգսեանը, հնարաւոր է նաեւ, որ Վարդան Օսկանեանը մասնակցի: Տեսնում եմ նաեւ Ռաֆֆի Յովհաննիսեանին, բայց նրա առաջդրումը յստակ չէ:

Չեմ պատկերացնում, որ Ռոպերթ Քոչարեանը հրապարակայնօրէն մասնակցութիւն կ'ունենայ նախագահական ընտրութիւններին:

ՀՅԴ-ից էլ դեռեւս ոչ մէկ նմանատիպ յայտ չի ներկայացրել, նրանք հնարաւոր է որեւէ թեկնածուի աջակցեն»: Ըստ բանախօսի՝ քաղաքական դաշտն այս պահին զբաղած է նախագահական ընտրութիւններու նախապատրաստական աշխատանքներով. «Որոշակիօրէն այդ առումով զարգացումներ տեսնում ենք, ինչպէս օրինակ՝ Վարդան Օսկանեանի հետ կապուած վերջին դէպքերը, քաղաքական տարբեր ուժերի



յայտարարութիւնները: Մինչև Սեպտեմբեր նախագահական ընտրութիւնների մասնակիցների հոսանքներ կը ձեւաւորուեն, որոնք պայքարողների շարքում կը լինեն, իսկ Սեպտեմբերից էլ կը տեսնենք այդ թեկնածուների ակտիւութիւնը»:

Haynews.am

ԱՌ ԱՅԺՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 2 ՄԻԼԻԱՌԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՉՀԱՍՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Յունիս 29ին հրաւիրուած մամլոյ ասուլիսին՝ «Հայ ազգային գոնկրէս» (ՀԱԿ) դաշինքի համակարգող, Ազգային Ժողովին մէջ ՀԱԿ-ի խմբակցութեան ղեկավար Լեւոն Ջուրապեան յայտարարած է, թէ այս տարուան Մայիսին՝ Հայաստանի իշխանութիւնները նախընտրած են ի հաշիւ Ղարաբաղի եւ Հայաստանի զարգացման ծրագրին՝ կեղծել խորհրդարանական ընտրութիւնները:



Ըստ Ջուրապեանի՝ Եւրոպական Միութիւնը, նկատի առնելով կեղծուած ընտրութիւնները, երկու նոր պայման դրած է Հայաստանի առջեւ. "Մէկը՝ Ղարաբաղի խնդրի լուծման արագութիւնն է, երկրորդը՝ նախագահական ընտրութիւններից առաջ որոշակի քայլեր, որոնք պէտք է յաղթահարեն այն խնդիրները, որ ստեղծուել են ԱԺ ընտրութիւնների ժամանակ", նշած է ՀԱԿ-ի համակարգողը: Ջուրապեան յիշեցուցած է, որ Ազգային Ժողովին ընտրութիւններէն առաջ յայտարարուած էր, որ ԵՄ-ին կողմէ Հայաստանին աջակցելու համար պիտի կազմակերպուէր խորհրդածողով, որ պիտի ապահովէր շուրջ 2 միլիարտ տոլարի միջազգային օգնութիւն՝ Հայաստանի զարգացման համար:

Ըստ Ջուրապեանի՝ այդ խորհրդածողովին գումարումը պաշտօնապէս պայմանաւորած էր ԱԺ ընտրութիւններու ընթացքով, մինչդէռ ԵԱՀԿ-ի (Եւրոպայի ապահովութեան եւ համագործակցութեան խորհուրդ) դիտարկումի առաքելութեան վերջնական զեկոյցին մէջ Հայաստանի ընտրութիւնները, ըստ էութեան, որակագրկուած են, հետեւաբար ԵՄ-ը յետաձգած է խորհրդածողովին կազմակերպումը: Այն հարցումին, թէ հաւանաբար խորհրդածողովի յետաձգումը պայմանաւորուած է գումարի պակասով, Ջուրապեան պատասխանած է, որ ատիկա իշխանութիւններու անհիմն պատճառաբանութիւնն է: "Կարծում եմ՝ ԵՄ-ն այդքան համարձակութիւն չունի՞, որ յայտարարի, թէ կրճատում է օգնութեան ծաւալը, քանի որ յայտնուել է դժուար վիճակում", հռետորական հարցումով պատասխանած է Ջուրապեան:

Յիշեցնենք, որ Յունիս 28ին՝ շարք մը հայաստանեան լրատու միջոցներ կը յայտնէին, թէ Եւրոպական Միութեան՝ ընդլայնման եւ դրացնութեան գործերու յանձնակատար Շթեֆան Ֆիլէի բանբերը «Ազատութիւն» ձայնասփիւռին տեղեկացուցած է, որ ԵՄ-ը կը յետաձգէ Հայաստանի համար գումարուելիք նուիրատուներու համաժողովը, եւ ան տեղի պիտի ունենայ 2013ի նախագահական ընտրութիւններէն յետոյ: Այս յետաձգման որպէս մեկնաբանութիւն՝ կըսուէր, թէ ԵՄ-ը կը փափաքի երաշխիքներ ունենալ Հայաստանի մէջ արդար եւ թափանցիկ նախագահական ընտրութեանց կազմակերպման մասին:

Նոյն օրը, որ Լեւոն Զուրապեան կու տար իր մամլոյ ասուլիսը, Հայաստանի Արտաքին գործոց փոխ-նախարար Զօհրապ Մնացականեան, լրագրողներուն հետ հանդիպման ընթացքին յայտարարած է, թէ ԵՄ-ին կողմէ կազմակերպուելիք՝ նուիրատու երկիրներու եւ կազմակերպութեանց միջազգային խորհրդածողովին յետաձգումը այլ հարցերու հետ առնչելը պարզունակութիւն է: Փոխ-նախարարը նշած է, որ նուիրատուներու խորհրդածողովին գումարումը կը շարունակէ մնալ Հայաստան-ԵՄ յարաբերութեանց օրակարգին վրայ, եւ ներկայիս կողմերը կը քննարկեն համաժողովին կազմակերպման հարցերը: "Խօսքը համաժողովի նախապատրաստման մասին է: Նման միջոցառման որակեալ կազմակերպումը լուրջ աշխատանք եւ ժամանակ է պահանջում: Մենք ցանկանում ենք այն արագ եւ որակով կազմակերպել", ըսած է Մնացականեան:

Պատգամաւոր Ռուբէն Հայրապետեան Յայտարարեց Իր Հրաժարականի Մասին



ԱԺ պատգամաւոր, ՀՅԴ նախագահ Ռուբէն Հայրապետեան յայտարարած է իր պատգամաւորական իրաւագիրը վար դնելու մասին:

Այս առնչութեամբ ան տարածած է յայտարարութիւն, գոր կը ներկայացնենք ստորեւ. «Ամէն ինչ կը տայի, որ այդ չարաբաստիկ երեկոյեան լինէի այնտեղ, բռնէի երիտասարդների վրայ բարձրացող բռունցքները, կանգնեցնէի այս դժբախտութիւնը, որ կեանք խլեց, ընտանիքներ կործանեց, երեխաներ որբացրեց:

Ամէն ինչ կը տայի այս ամէնը հետ պտըտելու համար: Բայց չեմ կարող: Վահէն արդէն չկայ: Ու ես դրանով պէտք է ապրեմ: Ու պէտք է նայեմ նրա ընտանիքի անդամների աչքերին: Զգիտեմ ոնց: Ասում են ամէն ինչ օրէնքով պիտի լինի. վստահ եմ օրէնքով կը լինի, 100 մեղաւոր կը լինի 100 պատիժ կը լինի: Բայց հարցը միայն օրէնքը չի: Հարցը շատ աւելի բարդ է: Ու ես դա շատ լաւ եմ հասկանում: Հիմա շատերն են մեղադրում ինձ, նոյնիսկ բաների համար, որ ինձ հետ կապ չունեն կամ յօրինուած են. երեւի իրաւունք ունեն: Բայց իմ առաջին մեղադրողը հէնց ես եմ: Ես պիտի կանխէի նման դժբախտութիւնը ու չեմ կարողացել դա անել:

Զպէտք է իմ եւ իմ ընտանիքի հետ առնչութիւն ունեցող միջավայրում նման իրադարձութիւն հնարաւոր լինէր: Ես ինձ չեմ ներում, ու չգիտեմ ոնց պիտի ներում հայցեմ: Այս պահին ես յայտարարում եմ, որ բարոյական պարտաւորութիւն եմ զգում եւ վայր եմ դնում Ազգային Ժողովի պատգամաւորի իմ մանդատը: Ես ներողութիւն եմ խնդրում իմ բոլոր ընտրողներից, որ չեմ կարողանայ արդարացնել իրենց սպասելիքները, բայց վստահ եմ, որ ուղղակի պարտաւոր եմ այս քայլն անելու: Ուզում եմ հաւատալ, որ ասանցիներն ինձ ճիշդ կը հասկանան: Յոյս ունեմ, որ մի օր էլ կը կարողանամ ներում ստանալ Վահէնց ընտանիքում. յամենայն դէպս ամէն ինչ կ'անեմ դրա համար: Սգում եմ բոլոր հարազատների հետ միասին:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

Այլագան

Հայաստանը Եւրոպային Պիտի Մօտեցուի, Երբ Հասարակութեան Լայն Շերտերը Գործընթացը Ընկալեն. Հերման Վան Ռոմբոյ



Հայաստանը Եւրոպային մօտեցնելը պիտի իրականացուի, երբ այդ գործընթացը ընկալուի հասարակութեան լայն շերտերուն կողմէ եւ ստանայ անոր աջակցութիւնը:

Այս մասին Յուլիս 4-ին յայտարարեց Եւրոպական խորհուրդի նախագահ Հերման վան Ռոմբոյ «Հայաստանը Եւրոպայի մէջ» համաժողովին ընթացքին: Եւրոպական խորհուրդի նախագահը նաեւ նշեց, որ մեծ ակնկալիքներ ունի համաժողովէն, որ հնարաւորութիւն պիտի տայ մէկ անգամ եւս ներգրաւելու քաղաքացիական հասարակութեան ուշադրութիւնը եւ մասնակցութիւնը

Եւրոպայի հետ նոր յարաբերութիւններու կերտման գործին մէջ: «Քաղաքացիական հասարակութիւնը պէտք է հետեւողական ըլլայ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ՝ բարեփոխումներ իրականացնելու յանձնարարութիւնը իրականացնելու հարցով», - ըսաւ ան: «Քաղաքացիական հասարակութիւնը պէտք է աշխուժութիւն դրսեւորէ երեք գործառոյթներու մէջ՝ պէտք է մշտադիտարկէ բարեփոխումները, պահանջէ հաշուետուողականութիւն եւ մասնագիտանայ: Նման գործունէութիւնը պէտք է իրականացուի երկրի կենսագործունէութեան բոլոր ոլորտներուն մէջ», - ընդգծեց ան:

Համաժողովը կազմակերպած էր «Արեւելեան գործընկերութեան» Քաղաքացիական հասարակութեան ֆորումի Հայաստանի ազգային փլաթֆորմը եւ Եւրոպական հետազօտութիւններու կեդրոնը ՀՀ կառավարութեան ընդունելութիւններու տան մէջ: Հերման Վան Ռոմբոյ մեծ կարեւորութիւն տուաւ բարեփոխումներու գործընթացներուն մէջ ազգային փոքրամասնութիւններու աշխոյժ ներգրաւուածութեան: «Մենք պիտի շարունակենք տրամադրել նիւթական աջակցութիւնը քաղաքացիական հասարակութեան՝ իրական բարեփոխումներու՝ մարդու իրաւունքներու եւ ժողովրդավարութեան կայացման հարցերուն մէջ», - աւելցուց ան:

Եւրոպացի պաշտօնեան տեղեկացուց, որ յառաջիկային ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի եւ խորհրդարանականներուն հետ հանդիպման ընթացքին պիտի քննարկէ եւրոպական արժեհամակարգի վրայ բարեփոխումներու արդիւնաւետութիւնը, մասնաւորապէս՝

ժողովրդավարութեան հիմնարկներու կայունացման, կաշառակերութեան դէմ պայքարի, թափանցիկ ընտրութիւններու իրականացման, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ այլ հարցերու մէջ:

«Ընելիքները դեռ շատ են: Բայց որքան հզօր ըլլայ բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամութիւնը, այդքան աւելի շատ կրնաք ապաւինիլ Եւրոմիութեան», - ընդգծեց ան: Եւրոպական խորհուրդի նախագահը անդրադարձաւ նաեւ ՀՀ ընտրութիւններուն եւ նշեց, որ գործընթացը կատարելագործելու համար՝ իբրեւ ուղեցոյց՝ պէտք է հետեւիլ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկոյցին եւ կառոյցի նշուած դիտարկումներուն: Ան յոյս յայտնեց, որ մինչեւ յառաջիկայ նախագահական ընտրութիւնները լուրջ դրական տեղաշարժեր պիտի

արձանագրուին: Խօսելով ԼՂՀ խնդրի կարգաւորման շուրջ՝ Վան Ռոմբոյ նշեց, որ քաղաքացիական հասարակութիւնը պէտք է նպաստէ նաեւ Ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման: «Առանց հասարակութիւններու ներգրաւման, բանակցութիւնները կրնան ձախողիլ:

Հասարակութիւններուն միջեւ երկխօսութիւնը կարելոք է տարածաշրջանին մէջ երկարատեւ խաղաղութիւն հաստատելու հարցով: Մենք կ'աջակցինք ԵԱՀԿ Մինսկի խումբին եւ կ'առաջարկենք մեր աջակցութիւնը բարձր ներկայացուցիչի միջոցով, որ կոչուած է դիրացնելու իրավիճակը», - ըսաւ ան եւ աւելցուց, որ Եւրոպական խորհուրդը պատրաստ է օգնութիւն ցուցաբերել տարածաշրջանին մէջ կայունութիւնը ամրապնդելու համար:

Լրատութիւն Հայաստանէն - Թերթ.am

ՄԵՐՔԵԼ ՄԵՐԺԱԾ Է ՔՆԱՐԿԵԼ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄԻՆ ՊԱՏԺԵԼԻՈՒԹԻՒՆԸ

«Նոր Յառաջ» թերթը կը հաղորդէ, որ գերմանական Սահմանադրութիւնը լրացնելու նպատակով՝ երկրին իշխանութիւնները տեսակ մը համացանցային հարցախոյզի դիմած էին՝ ժողովուրդէն խնդրելով ներկայացնել առաջարկներ ու քուէարկել զանոնք: Քուէարկութեան դրուած առաջարկներուն մաս կը կազմէր նաեւ Հայոց Յեղասպանութեան ժխտումը պատժող օրէնքի մը հաստատումը:



Պարզուած է, որ այս առաջարկը 157.000 ձայն ստացած է: «Ռոյթըրը» կը տեղեկացնէ սակայն, թէ հակառակ ձայներու այս մեծ թիւին՝ Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մերքել մերժած է նոյնիսկ քննարկման նիւթ դարձնել զայն՝ առաջարկողներուն հետ: Կըսուէր, թէ

տարւոյն սկիզբը՝ Ֆրանսայի այդ ուղղութեամբ Թուրքիոյ հետ ապրած «տխուր» փորձառութիւնը պատճառ եղած է, որ Գերմանիոյ վարչապետուհին ետ կանգնի այդ քայլը առնելէ:

2005 Ապրիլ 24ին՝ Հայոց Յեղասպանութեան 90րդ տարելիցին առթիւ, Գերմանիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ընդունած էր որոշում մը՝ առանց «ցեղասպանութիւն» բառը գործածելու: Կոչ ըրած էր Թուրքիոյ՝ ընդունելու Հայերու դէմ գործած ջարդերը, եւ նաեւ ցաւ յայտնած, որ Գերմանիա ջանք անգամ չէր թափած՝ կանգնեցնելու համար այդ ոճրագործութիւնը:

ՀԱԻԱՏԱՅԷՔ, ՈՐ ՓՈՒՆԵԼՈՒ՛ ԵՆՔ...

ՖԲ-ում գործող «Իրազեկ և կողմնորոշուած սերունդ» խումբը ԱԺ-ի ընտրութիւններից ամիսներ առաջ քարոզարշաւ ծաւալեց, պահանջելով Հայաստանի իշխանութիւններից վերականգնել արտերկրում բնակուող ՀՀ քաղաքացիների ընտրական իրաւունքը, սակայն դա ոչ միայն անտեսուեց, այլ իր հետ բերեց խիստ աղետալի հետեւանքներ, թէ՛ բուն ընտրութիւնների արդիւնքների վրայ, թէ՛ պատճառ հանդիսացաւ, որպէսզի ճակատագրի բերումով Սփիւռքում ապրող միլիոնաւոր հայորդիներ հիասթափուեն և օտարուեն սեփական Հայրենիքից:



Այսօր, բոլորին է յայտնի, թէ ինչ տեղի ունեցաւ ընտրութիւնների ընթացքում, ինչպիսի հիասթափութիւն է տիրում Հայրենիքում եւ Սփիւռքում, քանի որ Երկրում կուտակուած հարցերը է՛լ աւելի խորացան: Իշխանութիւնը հին մեթոտներով վերարտադրուեց, պառակտուած ու անմիաբան ընդդիմութիւնը ջախջախուեց, ժողովուրդն իսպառ յուսահատուեց, արտագաղթի ցուցանիշները կտրուկ աճեցին: Փաստօրէն Երկիրը մտնում է խորը քաղաքական-տնտեսական փակուղի եւ կոնկրետ ոչինչ չի արւում լուծելու կործանարար խնդիրները: Մարդկութեանը շատ յայտնի չէ նման դէպք, երբ Անկախութիւն հռչակած ժողովրդի 80%-ը ապրի իր

Հայրենիքից դուրս եւ, ներգաղթի ու հայրենաշինութեան փոխարէն, շարունակ բռնի գաղթի ճամբան, աստիճանաբար դատարկելով երկիրը:

Պատճառը՝ հիմնադիր հայրերի կարճատեսութիւնն էր, որի արդիւնքում ժողովրդի կամքին հակառակ, նրա վզին փաթաթուեց խայտառակ Սահմանադրութիւն, ուր ոչինչ չի ասւում հայ ժողովրդի հիմնական ներուժի՝ հօգը Սփիւռքի մասին: Աւելին, իշխանութեան ղեկին յայտնուած մարդիկ փակեցին Հայրենիքի դռները՝ անուանելով սփիւռքահայերին «նարինջ ուտողներ», «հայրենագուրկներ», «Հայաստանից թռած աբիժնիկներ», որի արդիւնքում, հետզհետէ Սփիւռքը օտարացաւ Հայրենիքից, այդպէս էլ չհասկանալով Երկրի առաջին դէմքերի բուն նպատակը: Այս բոլորի արդիւնքում, ստեղծուած ծանր իրավիճակում, հալածուած, հիւժուած ու խաբուած հայրենաբնակ ժողովուրդն այլեւս ի գօրու չէ միայնակ որեւէ բան փոխել Երկրում, առաւել եւս, երբ իսպառ փոշիացաւ իշխանութիւնների հերթական քաղաքական խաղերի ծուղակն ընկած, առանց այն էլ թոյլ ու անմիաբան ընդդիմութիւնը:

Նման պայմաններում, բնականաբար հրամայական է դառնում Հայրենիքից դուրս գտնուող հայութեան 80%-ի միջամտութիւնը սեփական Երկրի ճակատագրին, քանզի հակառակը՝ կարող է ճակատագրական լինել Հայաստանի և համայն աշխարհի հայութեան համար: Հաշուի առնելով այս ամէնը, ՖԲ «Իրազեկ և կողմնորոշուած սերունդ» խումբը, այսուհետեւ համացանցում, ինչպէս նաեւ՝ հնարաւոր բոլոր միջոցներով, քարոզարշաւ է սկսելու Հայրենիքում եւ Սփիւռքում՝ կոչ անելով մեր ժողովրդին եւ յատկապէս նոր սերնդին, միանալ եւ աջակցել այս շարժմանը, որպէսզի կարողանանք ազդեցիկ ճնշում բանեցնել Հայաստանի իշխանութիւնների վրայ՝ արմատական փոփոխութիւնների ենթարկելու Երկրի Սահմանադրութիւնը, հնարաւորութիւն տալով աշխարհի հայութեանը, լիիրաւ իրաւունքով՝ տիրոջ իրաւունքով, մասնակից լինելու իր ՄԻԱԿ Հայրենիքի պետականակերտման գործընթացներին:



Չուտ լոգունգային բնոյթ կրող Հայաստանի իշխանութիւնների՝ «Հաւատանք, որ փոխուենք» կոչին ի պատասխան, մենք հանդէս ենք գալիս՝ «ՀԱՒԱՏԱՑԷՔ, ՈՐ ՓՈՒՄԵԼՈ Ի՛ ԵՆՔ» կարգախօսով, միաժամանակ կոչ անելով իրավիճակի լրջութիւնը հասկացող աշխարհասփիւռ հայորդիներին՝ միանալ պահի հրամայականով ծնուած սոյն նախաձեռնութեանը, տարածելով այն ամենուր ու ներգրաւելով նորերին...

«Իրագել և կողմնորոշուած սերունդ» ՖԲ խումբ

Սուրիահայութիւնը Անորոշութեան Մէջ է, Սակայն Դեռ Չէ Բռնած Դէպի Տուն Գաղթի Ճամբան

Վերջին ամիսներուն առաւել թեժացած Սուրիոյ իրավիճակին պատճառով՝ տեղի մօտ 80.000 հաշուող հայութիւնը անորոշ վիճակի մէջ է:



Սուրիոյ հայ համայնքը տարիներ շարունակ ապրած է խաղաղ ու ապահով պայմաններու մէջ: Կրթական համակարգի սահմանափակ պայմաններու մէջ անգամ կրցած է սերունդները դաստիարակել հայեցի կրթութեամբ՝ դպրոցի բացը լրացուցած է ակումբներով, միութիւններով, արուեստի խումբերով եւ եկեղեցիով:

Սուրիահայութիւնը, ինչպէս Լիբանանահայ ու իրանահայ համայնքները, եղած է

Սփիւռքի միւս բոլոր հայկական համայնքներու զարկերակը, իսկ այսօր այդ զարկերակը անորոշութեան մատնուած է... Ինչ պիտի ըլլայ վաղը՝ ոչ ոք կրնայ կանխատեսել... Ինչո՞վ կրնայ օգնել Հայաստանի իշխանութիւնը, անորոշ է ու նոյնքան ալ մեծ յոյսեր կարելի չէ փայփայել: Այնուամենայնիւ սուրիահայութիւնը դեռ կը մնայ կառչած զինք հիւրընկալող երկրին եւ արտագաղթի հոսքեր՝ իբրեւ այդպիսին՝ դեռ չեն սկսած: Հայաստանի անձնագրերու եւ վիզայի վարչութենէն կը յայտնեն, որ Սուրիոյ մէջ, դէպքերը սկսելէն ետք, 3000 սուրիացի դիմած է ՀՀ քաղաքացիութեան, որոնց 1500-ը՝ այս տարուան առաջին եռամսեակին:

Եւս 300 սուրիահայ դիմած է յատուկ կացութեան կարգավիճակ ստանալու: Այս թիւերը չեն նշանակեր, որ Սուրիայէն հազարաւոր մարդիկ տեղափոխուած են Հայաստան: Սուրիոյ մէջ դէպքերը սկսելէն առաջ իսկ, հայութիւնը սկսած էր դիմել ՀՀ քաղաքացիութեան, պարզապէս իր Հայրենիքի քաղաքացին դառնելու համար: Դէպքերէն ետք հոսքը մեծցաւ «ինչ կ'ըլլայ, ինչ չըլլայ» սկզբունքէն ուղղուած: Շատեր նոյնիսկ մէկ շաբաթով Հայաստան կու գան իրենց անձնագրերը ստանալու ու կը վերադառնան Սուրիա:

Սուրիահայերու ՀՀ քաղաքացիութեան դիմելու պատճառներէն մէկը այն է, որ Ծոցի Երկիրներուն մէջ կ'աշխատին մեծ թիւով սուրիահայեր, որոնց աշխատանքային պայմանագիրը կը մօտենայ իր աւարտին եւ կասկած կայ, որ տուեալ երկիրները սուրիացիներու հետ մերժեն աշխատանքային պայմանագիր կնքել, ուստի այն սուրիահայերը, որոնք իրենց ընտանիքներուն հետ կ'ապրին Ծոցի երկիրներու մէջ, ՀՀ

քաղաքացիութեան կը դիմեն, որպէսզի հնարաւորութիւն ունենան իրենց աշխատանքային պայմանագիրը իբրեւ ՀՀ քաղաքացիներ կնքել: Կացութեան կարգավիճակի դիմող սուրիահայերը ուսանողներ են, որոնք Հայաստանի մէջ միշտ մեծ թիւ կազմած են: Այնպէս որ, կարելի է ըսել, որ սուրիահայերը անորոշութեան մէջ են սակայն դեռ չեն բռնած դէպի տուն գաղթի ճամբան:

Լրատուութիւն Հայաստանէն - Թերթ.am

Թուրքիա Ֆրանսայի Հետ Յարաբերութիւնները Նախկին Մակարդակին Հասցնելու Յոյս Ունի



Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւրօղլու Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Լորիէն Ֆապիուսի հրաւերով Յուլիս 6-ին մեկնեցաւ Փարիզ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը այս մասին տարածած է հաղորդագրութիւն՝ նշելով, որ արտաքին գործոց նախարարներու հանդիպման հիմքը պիտի ըլլայ երկու երկիրներու յարաբերութիւնները «արժանի մակարդակին վերադարձնելը»: «Այցին ընթացքին պիտի քննարկուին թուրք-ֆրանսական յարաբերութիւնները՝ բոլոր

ուրրտներու մէջ, ինչպէս նաեւ կողմերը մտքեր պիտի փոխանակեն տարածաշրջանային եւ միջազգային շարք մը հարցերու վերաբերեալ», - ըսուած է նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

Թրքական «Հուրրիյէթ»ը այդ այցը համարած է Յեղասպանութեան ժխտման քրեականացման հետեւանքով գրեթէ խզուած յարաբերութիւնները վերականգնելուն ուղղուած կարեւոր քայլ: Պարբերականը նշած է, որ Ֆրանսայի նոր նախագահ Ֆրանսուա Օլանտի հանդիպումները Թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Կիլի եւ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ անցած էին դրական մթնոլորտի մէջ, եւ եթէ արտաքին գործոց նախարարներու հանդիպումը նոյնպէս նման ընթացք ունենայ, Ֆրանսայի դէմ Թուրքիոյ կիրառած պատժամիջոցները, ամենայն հաւանականութեամբ, պիտի վերանան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԱԶԱՏ ԽՕՍՔ»ը բարի եւ կազմուրիչ արձակուրդ կը մաղթէ իր բոլոր ընթերցողներուն եւ կը փափաքի յայտարարել որ իր յաջորդ թիւը լոյսին պիտի ընծայուի Սեպտեմբեր ամսուան մէջ, Օգոստոս ամիսը նկատելով արձակուրդի ամիս: